



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԳՈ ՄԻՒԹԱՐՅԱՆ

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՀԱՐՑԵՐ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2008

ՀՏԴ 891.981.0
 ՉՄԴ 83.33
 Մ 793

*Հրատարակության է երաշխավորել
 77 ՉԱԱ Պատմության ինստիտուտի
 գիտական խորհուրդը*

Տպագրության է պատրաստել
 պատմական գիտությունների թեկնածու
Վարուժան Պողոսյանը

Խմբագիր՝
 պատմական գիտությունների դոկտոր
Ալբերտ Խառատյան

Մարգո Մխիթարյան

Մ 793 Նալբանդյանագիտության հարցեր:- Եր.: ԵՊՀ հրատ., 2008,
 132 էջ:

Ժողովածուն ամփոփում է բանասիրական գիտությունների թեկնածու Մարգո Մխիթարյանի (1920-2001) նալբանդյանագիտությանը նվիրված առավել արժեքավոր հոդվածները, որոնք հրատարակվել են գիտական պարբերականներում և լրագրերում 1958-1999 թթ.: Ձեռնդրված հոդվածները վերաբերվում են գլխավորապես մեր բանասիրության և պատմագիտության մեջ վիճահարույց հիմնախնդիրների քննությանը, ինչպես նաև տարբեր առեղծվածների բացահայտմանը: Նախատեսված է բանասերների և պատմաբանների համար:

ՉՄԴ 83.33

ISBN 978-5-8084-1001-5

. ԵՊՀ հրատարակչություն, 2008 թ.
 . Մ. Մխիթարյան, 2008 թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սույն ժողովածուն հրատարակելու գաղափարը ծագել է հեղինակի՝ բանասիրական գիտությունների թեկնածու Սարգո Մխիթարյանի (1920-2001) վախճանից հետո: Այն ամփոփում է հանգուցյալ բանասերի՝ նալբանդյանագիտությանը նվիրված առավել արժեքավոր հոդվածները, որոնք 1958-1999 թթ. հրատարակվել են հայրենական գիտական պարբերականներում («Պատմա-բանասիրական հանդես», «Լրաբեր» և այլն) և լրագրերում:

Հայ մամուլի պատմության խոշոր գիտակ Մ. Մխիթարյանն իր գիտական գործունեության ընթացքում մշտապես ուշադրության կենտրոնում էր պահում նալբանդյանագիտությանն առնչվող հիմնահարցերը: Գիտական անդաստան նա մուտք է գործել «Հյուսիսափայլ» ամսագրին նվիրված ուսումնասիրությամբ¹: Թեև նրա գիտական հետաքրքրությունները հետագայում գամվել են գլխավորապես XIX դարի հայ պարբերական մամուլի պատմության հարցերի վրա, նա, սակայն, միաժամանակ պարբերաբար քննական վերլուծության է ենթարկել Միքայել Նալբանդյանի ժառանգությանը և նալբանդյանագիտությանն առնչվող հիմնախնդիրները, ակտիվորեն մասնակցել ՀՀ ԳԱԱ Գրականության ինստիտուտի իրականացրած Նալբանդյանի Երկերի լիակատար ժողովածուի հրատարակությանը²:

Ընդհանուր բնույթի՝ «Նալբանդյանի հրապարակախոսությունը» հոդվածի հետ մեկտեղ, որը վերատպում ենք աննշան կրճատումներով, ժողովածուում ընդգրկված են Նալբանդյանի ժառանգության շուրջ մեր բանասիրության և պատմագիտության մեջ սուր բանավեճեր հարուցած հիմնախնդիրների քննությանը նվիրված Մ. Մխիթարյանի հոդվածները: Եթե «Նորից Սարգիս Վարշամյանցի «Ճամակի» առիթով», «Հին առեղծվածի վերծանման նոր փորձ» հոդվածներում հեղինակն անառարկելիորեն ապացուցում է, որ Վարշամյանցի «Ճամակի» հեղինակը Նալբանդյանն է, ապա «Բանասիրական պրպտումներ» և «Նալբանդյանի ծածկանունների շուրջ» հոդվածներում բացահայտում է հանիրավի նրան

¹ Մ. Մխիթարյան, «Հյուսիսափայլ» ամսագիրը, Երևան, 1958:

² Միքայել Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով (այսուհետև՝ ԵԼԺ), հ. 1-6, Երևան, 1979-1997:

վերագրվող՝ «Հյուսիսսփայլուն» լույս ընծայված մի շարք հողվածների իրական հեղինակներից շատերի ինքնությունը:

Ժողովածուում ամփոփված հողվածների մի մասը («Բեկզաղեի առեղծվածը», «Կոմս Էմմանուելի» ծագումնաբանությունը» և այլն) նվիրված է նալբանդյանագիտության ասպարեզում տարբեր առեղծվածների բացահայտմանը:

Մ. Մխիթարյանի հողվածներն արժանացել են մասնագետների (ակադեմիկոսներ Էդ. Ջրբաշյան, Ս. Սարինյան, բանասիրական գիտությունների դոկտորներ Պ. Հակոբյան, Ս. Դարոնյան) բարձր գնահատականին և հետաքրքրություն են ներկայացնում XIX դարի հայ հասարակական մտքի պատմությանը զբաղվող պատմաբանների ու բանասերների համար:

Վերահրատարակության պատրաստելով Մ. Մխիթարյանի հողվածները՝ տողերիս հեղինակը բավարարվել է սոսկ ոճական աննշան սրբագրումներով: Հողվածների մի մասը հղումներ չի ունեցել, քանզի լույս է տեսել պարբերական մամուլի օրգաններում, ուստի և նպատակահարմար գտանք, հնարավորության սահմաններում, ճշգրտել և ուղիղ փակագծերում մատնանշել հեղինակի օգտագործած սկզբնաղբյուրները:

Օգտվելով առիթից, կամենում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Արամ Սիմոնյանին և ԵՊՀ հրատարակչության տնօրեն պարոն Պերճ Ստեփանյանին՝ սույն ժողովածուի հրատարակության հարցում ցուցաբերած համակողմանի աջակցության համար:

Վարուժան Պողոսյան

ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

XIX դարի երկրորդ կեսի հայ հասարակական մտքի պատմությունն անխզելիորեն կապված է մեծ հրապարակախոս, գրող, հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի անվան հետ: Գրական-հասարակական գործունեությունը սկսելով 1850-ական թվականների սկզբներին, Նալբանդյանը դարձավ 60-ական թվականների հեղափոխական ճգնաժամի փոթորկուն իրադարձությունների ոչ միայն ականատեսը, այլև համառուսական քաղաքական անցքերի մեկնաբանը և հեղափոխական շարժումների մասնակիցը:

Դաստիարակվելով աշխատավորական միջավայրում, Նալբանդյանը վաղ երիտասարդական տարիներից նետվեց անհավասար պայքարի մեջ՝ պաշտպանելու հայրենի քաղաքի հասարակության շահերը: Այնուևետև արդեն՝ նրա ամբողջ կյանքը վերածվեց անընդմեջ պայքարի, դարձավ անմնացորդ նվիրումն՝ դավանած գաղափարներին: 1853 թ. մեկնելով Մոսկվա՝ Նալբանդյանը կապվեց ժամանակի լուսավորական շարժման առաջադիմական ուժերի հետ և իր եռանդուն գործունեությամբ նոր շունչ հաղորդեց հայ հասարակության մտավոր վերածնության համար մղվող պայքարին:

Արևելյան Հայաստանի տնտեսական ու հասարակական կյանքի աշխուժացումը Դրիմի պատերազմից հետո թևակոխում է զարգացման նոր փուլ: Ռուսական հասարակական կյանքում տեղի ունեցած լուրջ տեղաշարժերը՝ պայքարը ճորտատիրական իրավունքի դեմ, դեմոկրատական-լուսավորական շարժման բուռն վերելքը, խթանում են և հայ ժողովրդի մշակութային-գաղափարական կյանքի զարգացմանը:

Ռուս խոշոր լուսավորիչների գործունեությունը հիմնականում ծավալվում էր ճորտատիրական իրավունքի վերացման, ճորտ գյուղացիության դրության բարելավման, առհասարակ երկրի եվրոպականացման ուղղությամբ:

Հայ լուսավորիչները մտահոգված էին ազգային կյանքի բուրժուադեմոկրատական վերափոխումների խնդիրներով: Նրանք պայքարում

* Տպագրվել է՝ **Միքայել Նալբանդյան**, Հրապարակախոսական երկեր, Երևան, 1979, էջ 3-26:

էին հայ հասարակական կյանքի առաջընթացն արգելակող կղերա-
ֆեոդալական հոսանքի գաղափարախոսության, սնտիապաշտության
ու նախապաշարունների դեմ: Այդ գործիչներին առանձնապես հուզում
էր աշխարհաբար լեզվին քաղաքացիական իրավունք տալու հարցը,
որի միջոցով միայն կարող էր հնարավոր դառնալ հայ գրականության և
մշակույթի զարգացումը, հայությանը ժամանակի գիտության և քաղա-
քակրթության նվաճումներին հաղորդակցելու առաջնահերթ խնդրի լու-
ծումը:

Խաչատուր Աբովյանը կատարում է առաջին կարևոր քայլը՝ իր հայ-
րենակիցներին մտավոր ընդարմացումից սթափեցնելու, դպրոցական-
կրթական գործին նոր ուղղություն տալու, հայ նոր գրականության
սկզբնավորման, աշխարհաբարի քաղաքացիական իրավունքները
հռչակելու խնդրում: Նրա ժամանակակից, հայտնի մանկավարժ և գրող
Գաբրիել Պատկանյանը, շարունակելով Աբովյանի սկսած գործը՝ 1850-
1851 թթ. խիզախում է թիֆլիսում աշխարհաբար լեզվով հրատարակել
«Արարատ» շաբաթաթերթը:

Դորպատի համալսարանի շրջանավարտ, Աբովյանի ժամանակա-
կից և դասընկեր Ստեփանոս Նազարյանը Լազարյան ճեմարանում
հնարավորություն է ստանում մանկավարժական գործունեության հետ
մեկտեղ զբաղվելու գիտական աշխատանքով և հրատարակելու ման-
կավարժական, հոգեբանական, բանասիրական ուսումնասիրություն-
ներ: Սակայն, լուսավորական իր ծրագրերը նա կկարողանար իրակա-
նացնել՝ անմիջականորեն ժողովրդին դիմելու, հրապարակախոսական
ամբիոնի միջոցով: Այդ իսկ նպատակով Նազարյանը դեռևս 1844 թ. Կա-
զանում ծրագրում է հիմնադրել մի թերթ, բայց նրա դիմումը մերժվում է:

1853 թ. ամռանը տեղի է ունենում Նազարյանի ծանոթությունը Նոր
Նախիջևանից Մոսկվա ժամանած Նալբանդյանի հետ: Հայացքների հո-
գեհարազատությունը, Նալբանդյանի մտավոր զարգացումը և ժո-
ղովրդին անվերապահ ծառայելու նրա կամքը ոգևորում են Նազարյա-
նին, և նա, այս անգամ արդեն նեցուկ ունենալով իր երիտասարդ բարե-
կամին, 1854 թ. ճեմարանի տնօրինությանն է ներկայացնում «Ռուսիա»
խորագրով ամսագիր հիմնադրելու դիմում: Ժամանակները Ռուսաստա-
նում անբարենպաստ էին նոր պարբերականի հրատարակության իրա-
վունք ստանալու համար և այդ հայցը նույնպես մերժվում է:

1855 թ. Նիկոլայ I-ի մահից հետո «գրաքննական ահաբեկչության»
ժամանակներին հաջորդում է լիբերալ բարեփոխումների մի ժամանա-
կաշրջան, որն ինչ-որ չափով նպաստավոր պայմաններ է ստեղծում
ռուսական պարբերական մամուլի և գրականության զարգացման հա-

մար: Արդեն զգալիորեն դյուրին է դառնում նոր պարբերականների հիմնադրման գործը. քաղաքական ուստիկանության և կրկնակի գրաքննական հետապնդումներից որոշ չափով ձերբազատված ռուսական հասարակական միտքը մեծ վերելք է ապրում: Ռուսական առաջավոր մամուլը և հրապարակախոսությունը, գրականության հետ մեկտեղ, դառնում են հասարակական կյանքի առաջընթացի թերևս ամենազորեղ գործոնները: Ռուսաստանը ուղք էր դնում «վաթսունական թվականների» պատմական նոր ժամանակաշրջանի սեմին:

Դրիմի պատերազմին հաջորդած մտավոր կյանքի աշխուժացման այս պայմաններում, Նազարյանը կրկին ներկայացնում է իր դիմումը և այս անգամ ստանում «Յուսիսափայլ» ամսագրի հրատարակության իրավունքը: Պատմական ժամանակաշրջանի տրամաբանությամբ է բացատրվում և այն, որ 1858 թ. հրատարակության թույլտվություն են ստանում հայկական երկու պարբերականներ ևս՝ «Ճռաքաղը» (Մոսկվա) և «Մեղու Յայաստանին» (Թիֆլիս): Այսպիսով, ռուսահայ իրականության մեջ նույնպես սկսվում է մտավոր վերելքի մի ժամանակաշրջան, որը միանգամայն ներդաշնակում էր 60-ական թվականների Ռուսաստանի համընդհանուր վերածնության ոգուն:

1858 թվականը բախտորոշ եղավ հայ հասարակական մտքի համար: Այդ թվականին տպագրվեց Աբովյանի «Վերք Յայաստանի» վեպը, որը մի ամբողջ հեղաշրջում կատարեց հայ մտավոր կյանքում: Այդ թվականին սկսեց լույս ընծայվել ժամանակի դեմոկրատական-լուսավորական օրգան «Յուսիսափայլը», որն առաջին իսկ համարից հայ հասարակական կյանքում վճռական վերափոխումներ մտցնելու հայտ ներկայացրեց: «Յուսիսափայլն» ազդարարում էր, որ ժամանակի ծնունդն է և ստանձնել է հայ հասարակական կյանքի առաջադրած հարցերին պատասխանելու դժվարին խնդիրը: Եթե ամսագիրը հուսախաբ չարեց իր ընթերցողներին ու մեծապես խթանեց հայ կյանքի վերածնության գործին, դրանում անգնահատելիորեն մեծ էր ամսագրի գլխավոր աշխատակցի՝ Միքայել Նալբանդյանի դերը:

* * *

Նալբանդյանը հայ հրապարակախոսության քառուղիներ մուտք գործեց հասարակական պայքարի և գրական աշխատանքի զգալի փորձով: Նոր Նախիջևանում՝ տեղի հետադիմական ուժերի դեմ ծավալած պայքարը մարտական կոփվածք էր հաղորդել նրան, իսկ Մոսկվայում ապրած հինգ տարիները, համալսարանական ուսումնառությունը, շփումները ռուսական միջավայրի, ռուս առաջավոր գործիչների և

երկրի տարբեր վայրերից եկած հայ ուսանողության հետ, գրական-ստեղծագործական աշխատանքը՝ նպաստավոր հող էին նախապատրաստել նրա հրապարակախոսական գործունեության համար:

Դեռևս 1854-1855 թթ. Նալբանդյանը գրում է «Յաղագս հայկական մատենագրութեան ճառ» ծավալուն ուսումնասիրությունը, որտեղ քննության է առնում հայ գրականության հատած ուղին՝ V դարից մինչև իր օրերը: Ուշագրավ այդ հոդվածում, որն, ի դեպ, երկար տարիներ մնացել է անտիպ, Նալբանդյանը հին մատենագրության՝ նորօրյա և շատ համարձակ իր գնահատականներով հակադրվում է գոյություն ունեցող ավանդական կարծիքներին և շեշտում աշխարհաբար լեզվով գրականություն ստեղծելու անհրաժեշտությունը: Հրապարակախոսական շնչով գրված այս «ճառում», թեև գրաբար լեզվով, Նալբանդյանը կարդում է վաղուց ի վեր մահկանացուն կնքած գրաբարի դատավճիռը և այդ միտքը հաստատում՝ լեզուների զարգացման պատմական օրինաչափությամբ:

Երկրորդ նշանակալից գործը, որը ձեռնարկում է Նալբանդյանը՝ Էժեն Սյուի «Թափառական հրեա» վեպի առաջին հատորի թարգմանությունն էր, որը հրատարակվեց 1857 թ.³: Նալբանդյանի խառնվածքին խիստ բնորոշ է ֆրանսիացի վիպասանի այդ երկի ընտրությունը, որը պայմանավորված է վեպի հակակղերական միտվածությամբ: Հստակ գրական լեզվով թարգմանված այդ վեպին թարգմանիչը կցել է մի առաջաբան, որտեղ հրապարակում է հայ նոր գրականության ստեղծման և դրա հետագա զարգացման ուղիներին վերաբերող իր նկատառումները:

Իր ժամանակի գրաբարալեզու գրականությունը բնութագրելով իբրև «տխուր մատենագրություն», Նալբանդյանը՝ աշխարհիկ ոգով և ժողովրդին մատչելի լեզվով նոր գրականության ստեղծումը համարում է հայ ժողովրդին լուսավորելու առաջին պայմաններից մեկը: Հանգամանորեն քննարկելով այս խնդիրը, նա գրողներին ուսուցանում է ստեղծել միայն այնպիսի գործեր, որոնք գրված լինեն ժողովրդին հասկանալի լեզվով և արծարծած հարցերով նպաստեն նրա կրթությանը: «Թափառական հրեայի» առաջաբանում Նալբանդյանը՝ իբրև ժողովրդին լուսավորելու հարակից պայմաններ, պահանջում է ստեղծել ազգային դպրոցների, պարբերական մամուլի, ուսումնական ընկերությունների լայն ցանց, հայրենակիցներին հորդորում՝ օժանդակել գրողների երկերի տպագրությանը:

³ [Թափառական հրեա. գործ էժեն Սյու ֆրանսիացու, Միքայել Նալբանդյանցի աշխատութենով, Մոսկվա, 1857, հ. 1:]

«Հյուսիսափայլի» հրատարակության նախօրյակին Նալբանդյանն արդեն համակողմանիորեն պատկերացնում էր հայկական լուսավորականության առանձնահատկությունները և այդ պահին իսկ՝ դարձել էր լուսավորական շարժման առաջամարտիկներից:

«Հյուսիսափայլի» հիմնադրումից հետո Նալբանդյանը նվիրվում է հիմնականում հրապարակախոսական գործունեության: Դա հասկանալի է: Հրապարակախոսությունը գրական աշխատանքի այն լավագույն եղանակն էր, որով նա կարող էր լրագրային զանազան ժանրեր օգտագործելու միջոցով քննարկել ժամանակի հասարակական-քաղաքական կյանքի հրատապ խնդիրները: Հրապարակախոսության միջոցով է, որ Նալբանդյանը պետք է անգիջում պայքարի ելներ իր դարն ապրած ֆեոդալական հաստատությունների, կրոնական սխոլաստիկ աշխարհայացքի դեմ, հզոր բանավիճողի իր գրչով բացահայտեր կղերաֆեոդալական հոսանքի պարբերականների ժամանակավրեպ հարցադրումները: Հրապարակախոսության միջոցով է, որ Նալբանդյանը, հայ ընթերցողներին դաստիարակելով իր դարաշրջանի առաջադիմական գաղափարների ոգով, պետք է նրանց համակեր քաղաքացիական պարտքի գիտակցումով, հասցներ ազգային ինքնաճանաչման, իսկ ավելի ուշ՝ ուժ ներարկեր դիմելու ազգային-ազատագրական և սոցիալ-քաղաքական պայքարի հուսալի ուղիներին: Հիրավի, «Հյուսիսափայլի» էջերում, այնուհետև հրապարակախոսական երկերում, Նալբանդյանը դրսևորում է հասարակական-քաղաքական խոշոր գործչի և բոցաշունչ հրապարակախոսի իր բացառիկ տաղանդը:

Նալբանդյանը միաժամանակ գրում է և անսագրում լույս ընծայում գեղարվեստական մի շարք արժեքավոր ստեղծագործություններ («Մեռելահարցուկ» վեպը, բանաստեղծություններ), ինչպես նաև տպագրում թարգմանական գործեր, որոնք նույնպես շաղախված են հրապարակախոսական կրթով և տոգորված՝ քաղաքացիական ազնիվ ու բուռն պաթոսով:

Մի կողմ թողնելով Նալբանդյանի գեղարվեստական ժառանգության արժեվորումը, հետևենք այն ճանապարհին, որով անցել է Նալբանդյան-հրապարակախոսը: 1858 թ. «Հյուսիսափայլում» տպագրված «Նկատողությունք» հոդվածում Նալբանդյանը ներկայացնում է հրապարակախոսի իր հավատամքը, լայն հետնախորքի վրա քննարկում ժամանակի հայ իրականության առաջնահերթ խնդիրները: Այստեղ նա առաջադրում է ազգի լուսավորության, նրա թերությունները հրապարակելու միջոցով նրան ինքնաճանաչման հասցնելու, լուսավորության

գործից հոգևորականությանը մեկուսացնելու և մի շարք այլ հարցեր:

«Նկատողությունք» հոդվածում Նալբանդյանն առաջին անգամ ձևակերպում է հայ դեմոկրատական հրապարակախոսության հիմնական թեզերից մեկը, ըստ որի՝ «մի ազգի հասարակական շինվածքի հիմքը» հասարակ ժողովուրդն է: Այստեղ էլ հենց նա հայ մտավորականներից պահանջում է «կենդանի կապակցություն» պահպանել «հասարակ ժողովրդի» հետ:

Հայ հասարակական կյանքում արձանագրելով տարբեր հասարակական հոսանքների և ուղղությունների գոյության փաստը, Նալբանդյանն անհրաժեշտ է համարում դրանց միջև եղած հակասությունները պարզաբանել հրապարակային ազատ բանավեճի միջոցով և անգիջում պայքարի ճանապարհով միայն բացահայտել պատմական ժամանակաշրջանի առաջադրած հարցերի պատասխանը:

Հայ դեմոկրատական հրապարակախոսության այս յուրօրինակ ծրագրային փաստաթղթի՝ «Նկատողությունք» հոդվածի միջոցով է, որ հայ իրականության մեջ գիտական մեկնաբանություն են ստանում և շրջանառության մեջ դրվում ազգ, ազգություն, «հասարակ ժողովուրդ», հասարակական հոսանքներ, բանավեճ, լրագրության կոչում և այլ հասկացությունները:

Նալբանդյանի հյուսիսսփայլյան շրջանի հրապարակախոսական լավագույն երկը, որի հրատարակությունը Կոնստանտնուպոլսի գրական կեղծանունով տևել է շուրջ երեք տարի, հանրահայտ «Հիշատակարանն» է: Դրա էջերում քննարկվում էին հայ հասարակական կյանքն ալեկոծող այն հարցերը, որոնք այս կամ այն չափով առնչվում էին ժողովրդի հոգսերին: Այդ երկն այսօրվա սերնդին է ներկայացնում ժամանակի արևելահայ իրականության պատկերն իր ամբողջ բարդությամբ, լայնությամբ ու բազմազանությամբ:

Նալբանդյանի համար հիշատակարանի ժանրը մի կատարյալ գյուտ էր, որի օգնությամբ նա ժողովրդին դիմում էր հարազատ որդու սրտացավությամբ, խոսում նրա հետ մտերմիկ ոճով, երբեմն կշտամբանքի երանգով և նույնիսկ ցասունով, բայց երբեք չկորցնելով հավատը հայության վերահաս հաջողությունների, հայ ժողովրդի լավագույն ապագայի նկատմամբ: Այդ ապագայի երաշխիքը լուսավորությունն էր, մի սևեռուն գաղափար, որը բազմակողմանիորեն քննարկվում է «Հիշատակարանում»:

Նալբանդյանն ընթերցողներին ծանոթացնում է բարոյական և տնտեսական այն նսեն վիճակին, որի մեջ գտնվում էր հայ ժողովուրդը:

«Ես որդի եմ մի անբախտ ազգի,— ներկայանում է նրա հերոսը,— որ երբեմն ունեցել է յուր քաղաքականությունը, յուր հողը, օրենքը, սուրը և դրոշակը: Որ այս րոպեիս բևեռից մինչև բևեռ ցրված աշխարհի երեսին, գտանվում է խղճալի վիճակի մեջ, գերի և ստրուկ խավար նախապաշարմունքների և ամենևին անհոգ լուսավորության մասին»⁴:

Քաղաքական առումով մեռած մի ազգի վերանորոգությունը, նրա բարոյական վերածնությունը Նալբանդյանը պայմանավորում է մի-միայն «Ճշգրիտ և ստույգ» լուսավորությամբ: «Լուսավորություն,— գրում է նա,— ահա մի մեծ և հոյակապ խնդիր, որ ազգի կարողքը և ուսումնականքը պարտական են լուծանել. չկա աշխարհի երեսին մի այնպիսի բան, որ ահարկու լիներ խավարից. սա մի զարհուրելի վարագույր է, որի տակ իրավունք ունին մարդիկ և մահ ենթադրել»⁵: Այս գիտակցությամբ է, որ առանց խնայելու իր հայրենակիցներին, Նալբանդյանը նշավակում է ազգի հանրության բարոյական ընդարմացման տխուր վիճակը, ընդգծում, որ «նանրահավատությունը և նախապաշարմունքը անկիրթ ժողովրդի համար վաղուց դարձել է հոգեղեն կամ իմացական կյանքի մի մասը»:

Թե՛ «Հիշատակարանում» և թե՛ 1859 թ. տպագրված «Մեռելահարցուկ» վեպում արծարծելով ազգը լուսավորելու հարցերը, Նալբանդյանը դրա առաջին աստիճանը համարում է բարեկարգ դպրոցների հաստատումը՝ որպես ժողովրդի փրկության «առաջին և վերջին ճանապարհ»: Նալբանդյանի կողմից նշակված դպրոցական ծրագիրը, որով նախատեսվում էր «աշխարհիկ լուսավորությունը չչփոթել կրոնի կամ կրոնավորների հետ», ձայնակցում էր դպրոցական կրթության մարզում ժամանակի ռուսական առաջադիմական հրապարակախոսության պահանջներին:

Հրապարակախոսի լուսավորական ծրագրի հաջորդ աստիճանը ենթադրում էր ամբողջ ժողովրդի մտավոր մակարդակի բարձրացումը, նրա մտքի և բանականության ազատության ապահովումը: Միայն «ազգության մեքենայի»՝ ժողովրդական լայն խավերի լուսավորության միջոցով էր Նալբանդյանը պատկերացնում նրանց քաղաքական կյանքի

⁴ Միքայել Նալբանդյան, Հիշատակարան կոմս Էմանուելի օրգրական թերթերից 1858-1860.— Միքայել Նալբանդյան, ԵԼԺ, հ. 3, Երևան, 1982, էջ 130: [Թեպետ ժողովածուում ընդգրկված հոդվածների մի մասի տպագրությունը նախորդել է 1979-1997 թթ. ՀՀ ԳԱԱ Գրականության ինստիտուտի կողմից իրականացված՝ Նալբանդյանի երկերի լիակատար ժողովածուի լույս ընծայմանը, այդուհանդերձ, նպատակահարմար գտանք հեղինակի քաղվածքները հղել՝ ըստ այդ հրատարակության: Ի դեպ, ինչ վերաբերում է սույն հոդվածին՝ քաղվածքների էջերը հեղինակը նշել է բնագրում]:

⁵ Նույն տեղում, էջ 182:

հստակ հեռանկարը:

Ժամանակի գիտական մտքի բարձրակետից Նալբանդյանը քննության է առնում հայ հասարակական կյանքի առջև ծառայած անհետաձգելի խնդիրները, որոնք հայ ժողովրդին պետք է օգնեին հանգելու ազգային ինքնաճանաչության: Դրանք էին՝ հայ նոր գրական լեզվի և գրականության զարգացման, գրաքննադատության ստեղծման, հայկական թատրոնի սկզբնավորման, բնական գիտությունների քարոզչության հետ կապված հարցերը, հայրենասիրական-լուսավորական ընկերությունների կազմակերպումը, հայ ժողովրդի գիտական պատմության ստեղծման խնդիրը և այլն:

Խոսքն առավել ներգործուն դարձնելու նպատակով, Նալբանդյանը «Հիշատակարանում» օգտագործում է բազմապիսի գրական ժանրեր՝ հրապարակախոսություն, բանավեճ, գրաքննադատական հոդված, թատերախոսություն, նամակ, երկխոսություն, բանաստեղծություն, որոնք նրա գրավոր խոսքին հաղորդում էին դինամիկ ընթացք, տոգորում այն խորին հուզականությամբ: Այս էր պատճառը, որ ընթերցողներից ոչ մեկն անտարբեր չէր մնում «Հիշատակարանի» նկատմամբ: Եթե հայ հասարակության որոշակի շրջաններում «Հիշատակարանը» խթանում էր մտքերի շարժմանը և ուսումնառության ձգտմանը, աշխուժացնում հասարակական կյանքը, ապա մյուս կողմից առաջ էր բերում հետադիմական խավերի անբարյացակամությունը, տեղիք տալիս լուտանքների և թշնամական հարձակումների, որոնք հեղինակի համար անսպասելի չէին: Իր հոդվածներում Նալբանդյանը մեկ անգամ չէ, որ խոսում էր հայ հասարակական կյանքում առկա գաղափարական հակադիր ճակատների բախման անխուսափելիության մասին: «Իջանելով հայ դպրության ասպարեզը,– գրում է Նալբանդյանը,– մեք գիտեինք, որ դարավոր տգիտությունը պատերազմ պիտի հայտնե գիտությանը, որին լինելով մի լոկ սպասավոր, օրհնեցինք և ընդունեցինք այդ պատերազմը»⁶: Մտավոր այդ «պատերազմն» ընդգրկում էր հարցերի և երևույթների հսկայական շառավիղ: Դա հին ավանդույթների, կրոնական մոլեռանդության առճակատումն էր բանականության, գիտության, նախապաշարուններից ձերբազատված անհատի մարդկային արժանապատվության հետ, որը վեր էր հանում դարավոր խավարի ու հին բարոյականության դատապարտվածությունը: Պատմական ժամանակաշրջանի անկասելի այս առաջընթացը ոգևորում էր Նալբանդյանին. չէ՞ որ պայքարի բովում ժողովուրդը միաժամանակ կոփվում էր, առնականանում,

⁶ Նույն տեղում, էջ 203:

ապացուցում իր կենսունակությունը: «Անհնարին էր,— նշում է նա այս առիթով,— որ ուրիշ ազգերի մեջ պատահածը չպատահեր և մեր մեջ. այս բոլորում անչափելի է մեր ուրախությունը, ըստ որում հայությունը մի քայլափոխ արել է արդեն»⁷:

Այս պայթարն իր առավել ցայտուն արտահայտությունը գտավ ժամանակի պարբերականների միջև ծավալված բանավեճում, որը շարունակվեց մի քանի տարի: «Հյուսիսամայլի» բանավիճալից հողվածները շոշափելի լինելու չափ տեսանելի էին դարձնում հակառակորդների հայացքների հակապատմական, հակագիտական ելակետը, նրանց պարբերականների ներգործության ուղորտի անձկությունը:

60-ական թվականների արևելահայ լրագրային բանավեճի առաջամարտիկ Նալբանդյանի «Հիշատակարանը» լի է բանավիճալից պայքարի բովում ստեղծված բազում գյուտերով: Կանգ չառնելով Նալբանդյան-բանավիճողի արվեստի առանձնահատկությունների վրա, հիշենք միայն նրա օգտագործած հնարքներից մեկը: Հավանաբար այնպիսի տպավորություն ստեղծելու համար, թե իբր «Մեղու Հայաստանի» կամ «Ճռաքաղ» պարբերաթերթերը հակահարված էին ստանում երկրի տարբեր կողմերում ապրող գործիչների ստվար խմբի կողմից, Նալբանդյանը «Հիշատակարանում» ստեղծում է թղթակիցների մտացածին անուններ, որոնց հանդես է բերում այլևայլ իրավիճակներում, հնարամտությամբ պահպանելով իրականի պատրանքն ու երանգները: Այս կերպ Նալբանդյանն ընդարձակում էր պայքարի դաշտը, ավելի նպատակասլաց և ներգործուն դարձնում անսագրի հարվածները:

«Հիշատակարանում» ստեղծված գրական կերպարների թվում առանձնանում է Կոմս Էմմանուելի ամբողջական կերպարը: Գրեթե երեք տարի Կոմսն իր հիշատակարանի միջոցով հաղորդակցվում է հայ ընթերցողների հետ, իր գոյության լինելիությունը հավաստում նաև «Մեռելահարցուկ» վեպում՝ իբրև գլխավոր հերոս: Նալբանդյանն այդ գրական կեղծանունով է ստորագրում և իր բանաստեղծությունների մի մասը: Նալբանդյանի ստեղծած կերպարը՝ քաղաքացիական իր առնական նկարագրով և ժողովրդի շահերին անսահման նվիրվածությամբ դաստիարակել է հայ դեմոկրատական մտավորականության բազմաթիվ սերունդներ:

«Հիշատակարանի» առաջին գլուխներում արտացոլվել են Նալբանդյանի արմատական դեմոկրատական, լուսավորական հայացքները, որոնք կարճ ժամանակից նկատելի բարեշրջություն են ապրել

⁷ Նույն տեղում:

դեպի հեղափոխական- դեմոկրատիզմը և հայ ժողովրդի օգտին ծավալած նրա լուսավորական քարոզչությունը քաղաքական խոր բովանդակություն է ձեռք բերել: Արդեն 1859 թ. Նալբանդյանն ազգ հասկացության մեջ հստակ տարբերակում է մտցնում: «Երբևիցե խոսելով ազգի վերա,— գրում է նա,— միշտ մեր աչքի առաջև ունինք հայոց հասարակ ժողովուրդը, և ազգ ասելով չենք իմանում այն մի քանի մարդիկը, որ արծաթի սանդուղով վեր էին բարձրացել ազգի մակերևութից, այլ այն խեղճ և կարեկցության արժանի ժողովուրդը, որի վերա ծանրացել է ազգային ապաբախտության հետևանքը»⁸: Աշխատավոր ժողովրդին համարելով ամբողջ ազգության հիմքը, Նալբանդյանն իր հրապարակախոսական գործունեությունն անմնացորդ ծառայեցնում է ժողովրդի այդ խավի կյանքի բարօրության ստեղծմանը:

Գրաքննական նկատառումներով հնարավորություն չունենալով վերլուծել հասարակական կյանքում առկա սոցիալական անհավասարության բոլոր պատճառները, Նալբանդյանը բավարարվում է գրելով. «Հարկադրվում ենք այսքան միայն ասել, որ հին բարոյական աշխարհի և հին խելքերի դրությունը չէին կարող այլ հետևանք դուրս դնել»: Սակայն, Նալբանդյանն ընդվզում է այդ «հետևանքի» դեմ իր անմահ «Ազատություն» բանաստեղծությամբ, որը ծնվում է «Հիշատակարանի» հենց այն էջերում, որտեղ քննարկվում էին հայ ժողովրդի բարոյական վերածնության և տնտեսական վերանորոգության հարցերը:

Նալբանդյանն իր ժամանակակիցների թվում միակն էր, որը մամուլի էջերում արծաթծեց հնդկահայերի կտակած գունարների ստացման իրական ճանապարհների հարցը: Այնուհետև նրա ճանապարհորդությունը դեպի Յնդկաստան և գունարների ձեռքբերման հետ կապված մաքառումները՝ նրա քաղաքացիական սխրանքի վառ դրսևորումը դարձան:

* * *

1860 թ. աշնանը, Յնդկաստան մեկնելու առիթով, Նալբանդյանն առաջին անգամ գալիս է Հայաստան: Ճանապարհին նա տասն օր անցկացնում է Թիֆլիսում, այնուհետև մեկ ու կես ամիս ապրում էջմիածնում, ծանոթանում ժողովրդի կյանքի պայմաններին, այցելում է Օշական և Քանաքեռ, հարգանքի տուրք մատուցում հայոց երկու Մեծերի հիշատակին: Յոկտեմբերի վերջին, ավարտելով գործերը, Նալբանդ-

⁸ Նույն տեղում, էջ 181:

յանը մեկնում է Թիֆլիս և այնտեղից ուղևորվում արտասահման: Նոյեմբերի 20-ին նա հասնում է Կ. Պոլիս, որտեղ մեկ ամիս շարունակ ծանոթանում է արևմտահայության կյանքին: Հնդկաստանից վերադարձի ժամանակ՝ 1861 թ. դեկտեմբերին, նա մեկ ամիս անց է կացնում Կ. Պոլսում: Այս ամիսներին Նալբանդյանը հնարավորություն է ստանում ի մոտո ծանոթանալու արևմտահայ դեմոկրատ գործիչների հետ, որոնք հենց նրա Կ. Պոլիս գնալու նախօրյակին հաղթանակ էին տարել՝ սուլթանական Թուրքիայում Ազգային սահմանադրության ձեռքբերումով: Սակայն, հաղթանակի խանդավառությունը ինչ-որ չափով աղարտվում էր հակասահմանադրական, հետադիմական ուժերի, մասնավորապես «Երևակ» թերթի խմբագիր Հովհաննես Տերոյենց-Չամուռճյանի հակա-ժողովրդական գործունեությամբ: «Մեղու» թերթում տպագրած հոդվածներով Նալբանդյանը պսակագերծ է անում Չամուռճյանի՝ իմաստունի համբավը, բացահայտում XIX դ. 60-ական թվականներին դների գոյությունը հիմնավորող աստվածաբանի և «ինքնակոչ փիլիսոփայի» ողորմելի մտածելակերպը:

Այդ օրերին Կ. Պոլսի հայ մտավորականները վրդովված էին ևս մեկ իրողությամբ, որը հարկադրում է Նալբանդյանին՝ միջամտել պոլսահայ համայնքի խաղաղությունը խռոված վեճերին: Վանի առաջնորդ Պողոս վարդապետը, չարաշահելով իր պաշտոնը, անբարոյական ու բիրտ արարքներով հարուցել էր ժողովրդի զայրույթը: Քանի որ Կ. Պոլսի կրոնական ժողովը, քննարկելով Վանից ստացված բողոքները, շատ մեղմ վճիռ էր կայացրել, «Մեղուին» հղած նամակում Նալբանդյանը բողոքում է այդ որոշման դեմ և պահանջում քրեական հանցանքներ կատարած հոգևորականին դատել քաղաքացիական դատարանում:

Այստեղ, Կ. Պոլսում Նալբանդյանը մասնակցում է առաջադիմական, հայրենասիրական կազմակերպությունների աշխատանքներին, դրանց գործունեությունը նպատակամղում դեպի ազգային-ազատագրական շարժումները: Շուտով Նալբանդյանը մեկնում է Փարիզ: Նա եվրոպայում ճանապարհորդել էր և նախկինում, բայց 1861 և 1862 թվականներին ամիսներ շարունակ ապրելով Փարիզում և Լոնդոնում, արդեն հիմնավորապես բարեկամանում է ռուս հեղափոխական վտարանդիների հետ, նրանց օգնությամբ մշակում հայության երկու հատվածի ազգային-ազատագրական պայքարի ծրագիրը, կոնկրետ հեղափոխական պարտավորություններ ստանձնում՝ Ռուսաստանում նախապատրաստվող գյուղացիական հեղափոխությանն օժանդակելու համար:

Կայուն հարաբերություններ հաստատելով հեղափոխական շրջանների հետ, Նալբանդյանը չի դադարեցնում հրապարակախոսական գործունեությունը և օգտվելով 1859 թ. Փարիզում ճանիկ Արամյանի հիմնադրած տպարանի ընձեռած հնարավորություններից, 1861 թ. գարնանը տպագրում է «Երկու տող» պամֆլետը, իսկ մեկ տարի անց՝ «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը:

Հետաքրքրական է այն փաստը, որ դեռևս 1859 թ. սեպտեմբերին Նալբանդյանը մեծ գոհունակությամբ էր խոսում Արամյանի տպարանի մասին: Կարելի է ենթադրել, որ Լոնդոնում Ա. Ի. Գերցենի հիմնադրած ռուսական Ազատ տպարանի օրինակը և գործունեությունը նկատի ունենալով էր նա գրում. «Ազատ գրատպությունը մեծ քայլափոխ է դեպի հառաջադիմություն. և ամենայն մարդ, որ կարող է որևիցե կերպով, ընթացք տալ ազատության, արժանի՝ և արժանի՝ է մեծ շնորհակալության»⁹: Ահա փարիզյան ազատ տպարանում հրատարակելով հրապարակախոսական այս երկերը, Նալբանդյանը հայ իրականության մեջ սկզբնավորում է ռուսական Ազատ մամուլի ստեղծման ավանդույթը: Եթե հաշվի առնենք, որ «Երկու տող» և «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» երկերը տպագրվել են գրաքննությունից ազատ արտասահմանյան տպարանում ու հետագայում լայնորեն տարածվել երկու հատվածի հայ առաջադեմ մտավորականության շրջաններում, ապա Նալբանդյանի այդ գործերը կարելի է համարել XIX դ. 60-ական թվականների հայ դեմոկրատական Ազատ մամուլի առաջին օրինակները:

Ծրագրային այդ աշխատություններում Նալբանդյանը, ելնելով 1859-1861 թթ. հեղափոխական ճգնաժամի իրադրությունից, քննարկում էր հայ ժողովրդի վիճակը, ընթերցողներին ծանոթացնում Ռուսաստանում հեղափոխական-դեմոկրատական շարժման հեռանկարների և եվրոպական երկրներում վերջին տասնամյակներում ծավալված ազատագրական շարժումների հետ:

«Երկու տող» պամֆլետի ժանրի ընտրությունը կապվում էր այն հարցի լրջության հետ, որին նվիրված էր աշխատությունը: Չամուռճյանի և վանեցի Պողոսի արարքների առիթով Նալբանդյանը բարձրացնում է հետադիմական երևույթների, խավարի, կամայականության և սխոլաստիկ մտածողության դեմ անողոք պայքարի անհրաժեշտության հարցը և նշում աշխատավորության իրավունքների պաշտպանության,

⁹ Նույն տեղում, էջ 165:

նրանց լուսավորության և համակողմանի ազատության կարևորությունը: Շատ հետաքրքրական է, որ Չամուռճյանի բարոյական ոչնչությունն առավել ընդգծելու նպատակով նա օգտագործում է Գերցենի բանավիճային հնարքներից մեկը՝ Ֆոքսին հղված նամակը¹⁰, իսկ գրքի շապիկի չորրորդ էջում զետեղում խավարի խորհրդանիշը՝ չարագուշակ բուհ պատկերով¹¹:

Նալբանդյանն առաջինն էր, որ քննարկելով հեղափոխական ճանապարհով հայ ժողովրդի ազգային և սոցիալ-քաղաքական ազատագրության խնդիրները, գործնականում ևս պայքարում էր այդ նպատակի իրականացման համար: Արևելահայության ազատագրության գաղափարը նա անբաժանելի էր համարում ռուսական գյուղացիական հեղափոխության ծրագրից և Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող ժողովուրդների (այդ թվում հայերի) ազատագրման հեռանկարը պայմանավորում ինքնակալության տապալմամբ:

«Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ վերլուծելով հետոռեֆորմյան Ռուսաստանում ստեղծված քաղաքական իրավիճակը, Նալբանդյանն ընդգծում է, որ ինքնակալությունն ու ժողովուրդն «ամենայն թույլ» հեռանում են միմյանցից: Միանգամայն համոզված այն բանում, որ ինքնակալությունն անընդունակ է լիարժեք ազատություն շնորհելու ճորտ գյուղացիությանը, նա ազդարարում է. «Այս ջերմախտական և լարյալ վիճակը անհնար է, որ լինի երկարատև: Եթե, վաղօրոք, խելք գործ չդրվի, ստրուկը յուր հողով հանդերձ կատարելապես ազատ չքարոզվի, և այս կերպով այն կնճիռը չլուծվի, ստրուկը կացինով կվճռե գործը»¹²:

Ռուս հեղափոխական դեմոկրատների հետ մեկտեղ, Նալբանդյանը հեղափոխական հանգուցալուծման վճռական պահը «շատ մոտեցած և կարծվածից ավելի մոտեցած» էր համարում: Նա մարգարեանում էր կանխատեսելով. «Ռուսիո մեջ խմորված ազատությունը համարձակ կարելի է մարդկային ազատություն անվանել»¹³:

«Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» գրքում Նալբանդյանը սուր քննադատության է ենթարկում ժամանակի բռնապետական տերություններին, որոնք ստրկացնելով այլ ժողովուրդների, ճգնում էին իրենց գիշատչական քաղաքականությունը ներկայացնել իբրև այդ ժո-

¹⁰ Միքայել Նալբանդյան, Երկու տող.– Նույն տեղում, հ. 4, Երևան, 1983, էջ 10-11:

¹¹ [Տե՛ս Մ. Մխիթարյան, Երկու հազվագյուտ շապկանկար.– «Գրական թերթ», 16. XI. 1979:]

¹² Միքայել Նալբանդյան, Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ.– Միքայել Նալբանդյան, ԵԼԺ, հ. 4, Երևան, 1983, էջ 54:

¹³ Նույն տեղում, էջ 57:

ղովուրդներին քաղաքակրթելու «մարդասիրական» նպատակ: Խորապես ատելով բռնակալությունը՝ Նալբանդյանը՝ բանականության հետ անհամատեղելի է համարում ժողովուրդների ստրկացումը և հայտնում այն միտքը, թե «ճնշված մարդերի համար, ազգությունն է նոցա միակ դրոշը, որ կարող է բացվիլ բռնակալությանն ընդդեմ»: Բայց միաժամանակ նա հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը դիտում էր իբրև տնտեսական և քաղաքական ազատության համար մղվելիք պայքարի անբաժանելի մաս:

Հեղափոխական գործչի և տեսաբանի խորաթափանց հայացքով Նալբանդյանը նկատում էր, որ օտար լծի ներքո հեծող հայերը ենթարկվելով նաև սեփական ժողովրդի հարստահարիչների և հոգևորականության ճնշմանը, հասել են «մի ծայրացյալ թշվառության»: Ուստի, և հայ ժողովրդի ազատագրական պայքարի խնդիրներից հիմնականը համարելով հողի և ազատության ձեռքբերումը, նա ուսուցանում էր. «Ազգությունը ազատություն չէ ժողովրդին. նա փոխում է միայն նորա լուծը»:

Անձնական կապեր հաստատելով ռուսական հեղափոխական ընդհատակի գործիչների հետ (Ա. Ի. Գեքցեն, Ն. Պ. Օգարյով, Մ. Ա. Բակունին և ուրիշներ)՝ Նալբանդյանը հեղափոխական ճգնաժամի վերելքի օրերին, «Երկու տող» պամֆլետում, իր կյանքի «բուն խորհուրդը և նպատակը» համարում էր հասարակ ժողովրդի ոտնահարված իրավունքների պաշտպանությունը: Ժամանակի հայ գործիչները, որ խորապես հավատում էին Նալբանդյանին, ոգևորությամբ էին համակվում՝ կարդալով հայ դեմոկրատիայի առաջնորդի երդումը. «Այս նպատակին հասանելու համար չէ պիտո ընկրկինք ոչ բանտի և ոչ աքսորի առաջև, ոչ միայն բանիվ և գրչով, այլև զենքով և արյունով, եթե մի օր արժանի լինինք զենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությունը նվիրել և սրբել մեր արյունով:

Ահավասիկ մեր դավանությունը, որի մեջ տեսանում ենք ազգի փրկությունը»¹⁴:

Արևմտահայության ազատագրության հարցը Նալբանդյանը պայմանավորում էր եվրոպական երկրներում նախապատրաստվող ազգային-ազատագրական շարժումներով: Կ. Պոլսում Նալբանդյանն անդամագրվում է «Բարեգործական ընկերությանը», որի հենքի վրա ստեղծված գաղտնի կազմակերպությունը պետք է կապեր հաստատեր «Եվրոպայում և Ռուսաստանում արժարժվող ազգային-ազատագրական ու

¹⁴ Միքայել Նալբանդյան, Երկու տող, էջ 18-19:

գյուղացիական շարժումների և դրանց ղեկավարների հետ»¹⁵: Ակադեմիկոս Աշոտ Յովհաննիսյանը նշում էր, որ Նալբանդյանի արևմտահայ գինակիցները «կապված էին կամ աշխատում էին կապվել իտալական, լեհական և ռուսական շարժման ղեկավարների հետ» և որ նրանց «զբաղեցնում էին քաղաքական, ռազմական, կազմակերպական ծանրակշիռ գործեր, մասնավորապես, գործնական ու անմիջական խնդիրներ, որոնք կապ ունեին «Լոնդոնի պրոպագանդիստների» հեղափոխական հեռանկարների հետ»¹⁶:

Աշխուժացնելու համար իր հայրենակիցների ազատասիրական եռանդը, Նալբանդյանը «Երկու տող» պամֆլետում վկայակոչում է եվրոպական ժողովուրդների 1848-1861 թթ. ազատագրական շարժումները և կշտամբում հայերին՝ ճգնաժամային այդ օրերին մանրիկ ծխական հաշիվներով և հոգևորականների դավերով զբաղված լինելու համար: Նա անուղղակիորեն հորդորում է իր ազգակիցներին՝ հետևել հերոսական այդ ժողովուրդների օրինակին, որոնց համար ազատության կորուստը հավիտենական վիճակ չէր դարձել:

«Երկու տողում» Նալբանդյանն առաջադրում է այն հիմնահարցը, որը նրան մշտապես զբաղեցնում էր. «Ի՞նչ մնաց մեզ մեր անցած օրերից, ի՞նչ վիճակի մեջ ենք ներկայումս, ի՞նչ ճանապարհ է մեր գնացածը և ո՞ւր է դորա ելքը»¹⁷: Ելքը նա մատնանշում է այլաբանորեն. «Տարիները վազում են փայլակի շուտությամբ, օրերը թռչում են, որպես մի վայրկյան: Վախենում ենք և իրավունք ունինք վախենալու, թե մի՞ գուցե, մինչև հայը կշտանա յուր մահանման քնից, լուսինը անդնդասույզ գնա հորիզոնից ներքև»¹⁸:

Զինված ապստամբության ճանապարհով հայ ժողովրդի ազատագրության շուրջ՝ Նալբանդյանը հրապարակախոսական աշխատություններից գատ, արտահայտվել է նաև իր բանաստեղծություններում և նամակներում: Դեռևս 1859 թ. եվրոպական շրջագայության ընթացքում նա գրում է «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունը, որն իտալացիների ազատագրական պայքարի մի հիացական ներբող է:

Ազգային դրոշը պարզած՝ իտալացիները նետվում են մարտի դաշտ՝ կործանելու ավստրիական շղթաները: Իտալիայի ազատագրումը ձեռք է բերվում նրա որդիների արյամբ, և բանաստեղծը երազում է

¹⁵ Աշ. Յովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք I, Երևան, 1955, էջ 534:

¹⁶ Նույն տեղում, էջ 504:

¹⁷ Միքայել Նալբանդյան, նշվ. աշխ., էջ 26:

¹⁸ Նույն տեղում, էջ 25:

այն պահը, երբ նրանց խանդավառության կեսը կամ գեթ կեսի կեսն ի հայտ գար հայերի մոտ: Նա կշտամբում է հայերին և միաժամանակ քաջալերում նրանց.

*Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնե.
Բայց երանի՛, որ յուր ազգի
Ազատության կը զոհվի:*

Իտալական ազատագրական շարժումների հենքը հնարավորություն է տվել Նալբանդյանին՝ իր ժամանակի և հետագա տասնամյակների սերունդներին հաղորդելու ազգային-ազատագրական պայքարի այս պայծառ ավանդույթը:

Իրադարձությունները Եվրոպայում և Ռուսաստանում շիկանում են: 1863-1864 թթ. տեղի է ունենում լեհական ապստամբությունը, որը խեղդվում է արյան մեջ: 1860-ական թվականների սկզբներին իտալական ազգային-ազատագրական շարժումը թևակոխում է նոր փուլ. իտալացիների հերոսական պայքարը 1870 թ. հանգեցնում է Իտալիայի միավորմանը և նրա վերջնական ազատագրմանը հաբսբուրգյան լծից: Ռուսաստանում հզորանում են հեղափոխական շարժումները, 1862 թվականից իր գործունեությունն է ծավալում «Ջենյա ի վոյա» ընդհատակյա հեղափոխական կազմակերպությունը: «Հյուսիսսփայլում» 1861 թ. կողք-կողքի տպագրվում են «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունը և հունգարացի բանաստեղծ, հեղափոխական-դեմոկրատ Շանդոր Պետեֆիի ազատասիրական երկու երգերը՝ Մ. Բուդայանի թարգմանությամբ¹⁹:

Նալբանդյանն այդ օրերին գտնվում էր Եվրոպայում: Ռուսաստանում գործում էին նրա հայ զինակիցները, որոնք Նալբանդյանի և Պետեֆիի ազատասիրական բանաստեղծությունների տպագրությամբ արձագանքում էին երկրում խորացող հեղափոխական իրադրության պահանջներին: Հիրավի, Նալբանդյանի նամակները Սվաճյանին, վերջինիս արմատական դեմոկրատական հողվածները «Սեղու» թերթում, Թագվորյանի այլաբանական նամակը, Նալբանդյանի թղթերի հետ բռնագրավված ծածկագիր գրությունների գաղտնագիրը և բանալին, Մ. Բուդայանի, Դ. Քուչուբեկյանի, Ս. Շահագիզի, Ա. Սուլթանշահի, Գ. Տեր-Յովհաննիսյանի (Քաջբերունու) և այլոց գործունեությունը վկայում է Ռուսաստանում և Թուրքիայում հայ դեմոկրատական երիտասարդու-

¹⁹ «Հյուսիսսփայլ», 1861, թիվ 11, էջ 400-404: [Տե՛ս մանրամասն Մ. Գ. Մխիթարյան, 1848-1849 թթ. հունգարական հեղափոխության արձագանքները հայ իրականության մեջ, Երևան, 2003, էջ, 81-82:]

թյան՝ Նալբանդյանի համախոհների որոշակի շրջանակի առկայության մասին:

Ժամանակի այդ գործիչներն էին հենց, որ Նալբանդյանի ձերբակալությունից, ապա և վաղաժամ վախճանից հետո մամուլի էջերում ժողովրդականացնում էին նրա բանաստեղծությունները, ձեռագիր օրինակներով բազմացնում «Երկրագործությունը», «Ազատություն» բանաստեղծության լուսապատճենները (հեղինակի նկարով հանդերձ)՝ իբրև հեղափոխական կոչ տարածում երիտասարդության մեջ: Նրանք և նրանց հետնորդները երիտասարդությանը ոգևորում էին Նալբանդյանի հայրենանվեր գործունեությամբ, հետագա սերունդների համար միշտ կենդանի և բորբոք պահում մեծ մտածողի լուսավոր ավանդույթները:

* * *

1862 թ. երկրորդ կեսն իր հետ բերում է հետադիմության շունչը: Ինքնակալությունը կատաղի պայքար է սկսում հեղափոխական շարժումների դեմ: Հեղափոխական խմբակները ցրվում են, առաջադիմական կազմակերպությունները՝ հետապնդվում, ութ ամսով փակվում են «Սովրենեննիկ» և «Ռուսսկոյե սլովո» ամսագրերը: Մինչ այդ, 1861 թ. աշնանը, ձերբակալվել և շղթայակապ Սիբիր էր աքսորվել հեղափոխական գործիչ, ռուս հրապարակախոս և բանաստեղծ Մ. Լ. Միխայլովը: 1862 թ. հուլիսին ռուս հեղափոխական վտարանդիների հետ ունեցած կապերի մեղադրանքով ձերբակալվում են մի խումբ գործիչներ, այդ թվում Ն. Գ. Չերնիշևսկին, Ն. Ա. Սերնո-Սոլովյովիչը, Մ. Նալբանդյանը:

Շուրջ երկու տարի ձգձգվում է Չերնիշևսկու, Նալբանդյանի և «32-ի գործով» կալանավորված մյուս գործիչների դատավարությունը: Մինչդեռ Ալեքսանդր II-ի անմիջական հսկողությամբ սենատի աստիճանավորները վարձու «վկաներ» էին հավաքագրում և կեղծ մեղադրանքներ հեղյուրում՝ Պետրոպավլովյան ամրոցի Ալեքսեյան ռավելինի պատերի ներսում Չերնիշևսկին գրում էր իր դարաշրջանի լավագույն երկերից մեկը՝ Ռուսաստանի հեղափոխական երիտասարդության գործունեության ու պայքարի ուղեցույցը՝ «Ի՞նչ անել» վեպը: Նալբանդյանը նույնպես, 1862 թ. հուլիսից մինչև 1865 թ. մայիսն ընկած ժամանակահատվածում լարված աշխատում էր: Հարազատների և իրեն այցելող մի քանի մտերիմ ընկերների միջոցով նա կապ էր պահպանում հայ հասարակական շրջանների հետ, անհրաժեշտ տեղեկություններ ստանում ինչպես արևելահայերի, այնպես էլ արևմտահայերի առօրյա մասին: Նա առանձնահատուկ ուշադրությամբ էր հետևում Սվաճյանի գործունեությանը և ստանալով ազատախոհ «Մեղուի» հետապնդումների լու-

րը՝ ի պաշտպանություն այդ թերթի, գրում է «Ազգային թշվառություն» հոդվածը: Սերունդները Նազարյանի անձնուրացությանն են պարտական այն բանի համար, որ Նալբանդյանի հոդվածը՝ «Յուսիսափայլի» խմբագրի ստորագրությամբ լույս է ընծայվել ամսագրում²⁰: Նազարյանի շնորհիվ է Նալբանդյանի հոդվածը կատարել իր պատմական դերը՝ ուղղություն տվել արևմտահայ դեմոկրատական ուժերի պայքարին: Նալբանդյանի ամենօրյա նամակները, որոնք անվանապես հասցեագրված էին եղբորը, բայց իրականում հայ բարեկամներին, յուրատեսակ հրապարակախոսական ելույթներ էին, որոնցում, կարծեք «Յիշատակարանի» թերթերի միջոցով, նա արծարծում էր հայ հասարակությանը հուզող օրվա հարցերը:

Պետրոպավլովյան ամրոցում Նալբանդյանը շատ ժամանակ էր հատկացնում նաև գրական-գիտական աշխատանքներին: Բերդում նա գրում է գեղագիտական, լեզվաբանական, փիլիսոփայական իր լավագույն ուսումնասիրությունները, որոնց միջոցով ձգտում էր նպաստել հայ նորաստեղծ գրականության զարգացման, հայ փիլիսոփայական մտքի կազմավորման, առհասարակ գիտական մտքի առաջընթացի գործին:

Այստեղ Նալբանդյանը գրում է «Սոս և Վարդիթերի» կրիտիկան», որը նոր դարագլուխ է բացում հայ գրականության պատմության մեջ: Այն, որ «Կրիտիկան» ժամանակին չի հրապարակվել և չի կատարել իր դերը XIX դ. երկրորդ կեսի մեր գրական գործընթացում, բնավ չի նսեմացնում գեղագիտական մտքի այդ հոյակապ հուշարձանի արժեքը: «Սոս և Վարդիթերի» կրիտիկան» հավաստում է հայ գրականագիտական մտքի զարգացման մի աստիճան, որը միանգամայն ներդաշնակում էր XIX դ. 40-60-ական թթ. ռուսական հեղափոխական-դեմոկրատական գեղագիտական մտքի նվաճումներին:

Անհրաժեշտ սկզբնաղբյուրների սակավության և հեղինակի՝ իրականությունից կտրված լինելու հանգամանքները թեև խանգարում են «Աշխարհաբարի քերականության» ստեղծմանը, բայց Նալբանդյանին, այնուամենայնիվ, հաջողվում է բանտում գրել 35 մամուլ ծավալով ծրագրված այդ աշխատության շուրջ 15 մամուլը: Դժբախտաբար, ձեռագիրը կորել է, բայց 1900 թ. տպագրված ու մեզ հասած փոքր հատվածներն իսկ վկայում են այդ հետազոտության անուրանալի արժանիքների մասին:

²⁰ «Յուսիսափայլ», 1864, թիվ 3:

Պետրոպավլովյան ամրոցում Նալբանդյանը կարդում է գերմանացի փիլիսոփա Ռ. Յայմի «Յեզեչը և նրա ժամանակը» աշխատությունը և այդ առիթով գրի առնում իր նկատառումներն ու դիտողությունները («Քաղվածք և մտածությունք»): Նալբանդյանը քննադատում է Յեզեչի փիլիսոփայական ուսմունքը, որն իդեալականացնում էր ժամանակի պրուսական հետադիմական վարչակարգը, սահմանափակում մարդու համոզմունքների ազատությունը: Այս առումով, Նալբանդյանը նախապատվությունը տալիս է Ֆոյերբախին, որը բանականության չափանիշ դարձնում էր մարդուն: «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության համար իբրև բնաբան նա ընտրել է Ֆոյերբախի «Քրիստոնեության էությունը» աշխատության դրույթներից մեկը²¹: Նալբանդյանը փիլիսոփայությունը կապում է միայն իրականության հետ: «Մտահայաց փիլիսոփայությունը,– գրում է նա,– արժեք չունի մեր օրերում: Այն փիլիսոփայությունը, որ անմիջապես չէ բխում մարդկային կյանքից և որ չէ դադարում դարձյալ մարդկային կյանքի վերա, քանի որ մարդը ապրում է և օդ է շնչում, մեք հրատարակում ենք նորան իմաստականություն և խաբեություն: Մարդն է փիլիսոփայության և՛ հեղինակը, և՛ առարկան»²²:

Նալբանդյանը մի քայլ առաջ է անցնում Ֆոյերբախից, նրա հայեցական մատերիալիզմին հակադրելով փիլիսոփայության ակտիվ, ներգործուն բնույթը: Նալբանդյանն անվերապահորեն չի հրաժարվում հեզելյան փիլիսոփայության ժառանգությունից և ներժելով նրա իդեալիզմը՝ գնահատում է այդ ուսմունքի դիալեկտիկ մեթոդը: Դիալեկտիկական մեթոդը Նալբանդյանը, ինչպես և նրա մեծ ժամանակակիցները՝ ռուս հեղափոխական դեմոկրատները, ծառայեցնում է ժողովրդի լուսավորության, նրա ազատագրական պայքարի գործնական նպատակներին: Փիլիսոփայական ճշգրիտ տեսության որոնումների ճանապարհին Նալբանդյանը միակն էր հայ իրականության մեջ, որի փիլիսոփայական հավատամքը սերունդներին առաջնորդում էր վճռական պայքարի՝ հանուն ժողովրդի ազատագրման և նրա բարօրության ձեռքբերման:

Պետրոպավլովյան ամրոցի կիսախավար և խոնավ խցիկը գիտական աշխատասենյակ չէր, թեև Չերնիշևսկին, Նալբանդյանը, Պիսարևն

²¹ [Իմ աշխատության գաղափարքը միայն եզրակացությունք են, փաստերի հետևանք, նոքա ըստինքյան գաղափարք չեն, այլ կերպարանած, կենդանի կամ պատմական իրողությունք:]

²² Միքայել Նալբանդյան, Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ, էջ 69:

իրենց աննկուն կամքի շնորհիվ ստեղծագործում էին օր ու գիշեր: Բանտային դաժան պայմանները, այն հիվանդությունները, որոնցով տառապում էր Նալբանդյանը և որոնք հաճախ սրվում էին՝ նրա կյանքը դարձնելով մղձավանջային, չէին խախտում նրա աշխատանքային ռիթմը: Անընկճելի կամքի ուժով նա հաղթահարում է ֆիզիկական թուլությունը, արհամարհում բանտային հսկիչների մշտաթուն ներկայությունը:

Նալբանդյանը շտապում էր... նա տենդագին աշխատում էր ոչ միայն հայ հասարակական կյանքի առաջադրած՝ օրվա հարցերին պատասխանելու, այլև իր ժողովրդի ապագայի, «հայոց ազգի համար հարյուր տարի հետո գալոց օրերի» բարվոքման մտահոգությամբ:

Նալբանդյանի՝ իբրև հրապարակախոսի և քաղաքացու նկարագիրը, աշխատանքի ոճը բնորոշ են 60-ական թվականների բոլոր հեղափոխական-դեմոկրատներին, որոնց հայրենասիրությունը և նվիրվածությունը ժողովրդին, քաղաքացիական արիությունը, սկզբունքայնությունը, հավատարմությունն իրենց նվիրական գաղափարներին, դաստիարակել են դեմոկրատական մտավորականության և հեղափոխական երիտասարդության բազում սերունդների:

«Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը ծոնելով հայ երիտասարդությանը, Նալբանդյանն իր լավագույն հույսերը կապում էր այդ սերնդի հետ: Նրան կոչ անելով նայել դեպի առաջ, պայքարել ապագայի համար՝ նա մարգարեաբար գուշակում էր, որ այդ պայքարն ապարդյուն չի անցնի և տառապած հայ ժողովուրդն անվերապահորեն կհասնի իր «կենսամորոգ և որոտընդոստ հարության» բաղձալի ժամանակներին:

Նալբանդյանն իր հասարակական-հեղափոխական գործունեության ընթացքում մշտապես կապված է եղել ռուս հեղափոխական-դեմոկրատ գործիչների հետ և կրել Բելինսկու, Չերնիշևսկու, Գերցենի հայացքների բարեբեր ազդեցությունը: Ելնելով հայկական կյանքի առանձնահատկություններից և արտահայտելով իր ժողովրդի դեմոկրատական խավերի ազատասիրական տենչերն ու ձգտումները՝ նա հայ հասարակական միտքը հասցրել է ռուսական հեղափոխական-դեմոկրատական մտքի մակարդակին:

ՔԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՊՐՊՏՈՒՄՆԵՐ*

Միքայել Նալբանդյանի երկերի լիակատար ժողովածուի հրատարակությունը, նրա կյանքի տարեգրության լույս ընծայումը, ինչպես նաև Աշոտ Զովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» երկհատոր մենագրության հրապարակումը՝ նալբանդյանագիտության կարևորագույն նվաճումներից են²³:

Մեր կարծիքով, սակայն, նալբանդյանագիտության բնագավառներից մեկը դեռևս կարոտ է քննության: Հայտնի է, որ Նալբանդյանի երկերի լիակատար ժողովածուի մեջ առաջին անգամ ընդգրկվել են մի շարք հոդվածներ, որոնք «Հյուսիսափայլում» լույս են ընծայվել զանազան գրական կեղծանուններով: Այդ հոդվածների մի մասն, անկասկած, պատկանում է Նալբանդյանի գրչին և մեր բանասերները շնորհակալ գործ են կատարել հարստացնելով Նալբանդյանի ժառանգությունը: Սակայն, դրա հետ մեկտեղ Նալբանդյանին են վերագրվել հոդվածներ, որոնց ուշադիր ընթերցանությունը կասկած չի հարուցում, որ դրանք պատկանում են այլ հեղինակների: Թվում է ժամանակն է, որ մեր բանասերները ուշադրությամբ քննելով այդ հոդվածները, զտեն Նալբանդյանի ստեղծագործությունը և ազատեն այն ավելորդ բեռից:

Այդ կարգի հոդվածներից մեր ուշադրությունը գրավել է Ա. Ա. Ե. ստորագրությամբ՝ «Նամակ Կոմս Էմմանուելը» խորագիրը կրող հոդվածը, որը տպագրվել է «Հյուսիսափայլում» և ուղղված է Ստեփանոս քահանա Մանդինյանի դեմ²⁴:

Այդ նամակը ժամանակին անվերապահորեն համարելով Նալբանդյանի գրչի արգասիքը, մենք փորձել ենք վերծանել դրանում զետեղված

* Տպագրվել է՝ ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1958, թիվ 8, էջ 83-87:

²³ [Միքայել Նալբանդյան, երկերի լիակատար ժողովածու, հ. I-IV, Երևան, 1940-1949; Ա. Մ. Ինճիկյան, Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, Երևան, 1954; Աշ. Զովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք I-II, Երևան, 1955-1956:]

²⁴ [«Հյուսիսափայլ», 1861, թիվ 9, էջ 221-225:] 1860 թ. հունվարին Մանդինյան քահանան իր «Մեղու Հայաստանի» թերթում տպագրում է բանաստեղծ Սեյադի «Տեսիլ» պատկվիլային բանաստեղծությունը՝ ուղղված Ստեփանոս Նազարյանի դեմ: Թեկուզ ուշացումով, «հյուսիսափայլականները» Ա. Ա. Ե.-ի բանավիճային նամակով պատասխանում են Մանդինյանի ելույթին:

Ֆելիետոնը²⁵: Սակայն, նամակի խորագրնին ուսումնասիրությունը մեզ հետագայում բերեց այն եզրակացության, որ այն չէր կարող պատկանել Նալբանդյանի գրչին՝ հետևյալ նկատառումներով.

1. Նամակը լույս է տեսել «Յուսիսափայլում» 1861 թ. սեպտեմբերին, այն ժամանակ, երբ Նալբանդյանը 1860 թ. նոյեմբերից ճանապարհորդում էր արտասահմանում և ըստ իր իսկ խոստովանության՝ չուներ թե՛ ժամանակ և թե՛ հնարավորություն աշխատակցելու «Յուսիսափայլին»: Այսպես, 1861 թ. հունիսի 26-ին (հուլիսի 8-ին) Կալկաթայից Անանիա Սուլթանշահին հղված նամակում նա գրում էր. «Ամենևին ձեռնհաս չեմ «Յուսիսափայլի» համար աշխատելու. եղանակը, դատաստանական զբաղմունքը, պանդխտության դժնդակ ծանրությունը խլում են ինձանից իմ վերջին հնարները: Բայց դու աշխատիր գեթ մի հատ ազատամիտ բան թարգմանելու: Ինչ և իցե այդ օրագիրը մեր թախքմի օռգանն է. հույս ունիմ, որ շուտով կկատարես խնդիրքս: Նազարյանը կսրբագրե այն չնչին թերությունքը, որ պիտի լինին քո գրվածքում»²⁶:

Գրեթե նույն միտքն է հաստատում և Նազարյանը, որը 1861 թ. մարտին գրում էր. «Նալբանդյանը այս րոպեիս Լոնդոնումն է, ոչինչ լուր չունիմ նորանից և ոչինչ գործակցություն «Յուսիսափայլին»: Նա գնացել է այնտեղ Նախիջևանցոց հանձնարարությամբ, որ գործ կատարե, Յնդկաստանի մեջ կտակած արծաթը ձեռք բերելու Նախիջևանի օգտի համար: Նա և ինձ մոռացել է ուրեմն ևս առավել հեռավորքը»²⁷:

Ինչո՞վ ապա բացատրել այն հանգամանքը, որ 1861 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին «Յուսիսափայլում» տպագրվել են Ալֆոնզո Ռաթթի ստորագրությունը կրող «Հռոմեական նամակը» և Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունը²⁸: Բանն այն է, որ բանաստեղծությունը գրված էր նախքան նրա արտասահմանյան վերջին ճանապարհորդությունը և վաղուց կարող էր գտնվել Նազարյանի տրամադրության տակ: Ինչ վերաբերում է «Հռոմեական նամակին», ապա այդ հղվածում արծարծված են 1858 թ. վերջին Ներսիսյան դպրոցում տեղի ունեցած ցնցող իրադարձությունները, որոնց մասին Նազարյանը տակավին 1859 թ. մի շարք նամակներ և նույնիսկ մի հոդված էր ստացել Թիֆլիսից: Նազարյանի նամակներից մեկից պարզվում է, որ ժամանակին գրաքննությունը նրան արգելել է տպագրել այդ

²⁵ Տե՛ս [Մ. Մխթարյան, Մ. Նալբանդյանի շուրջ արևելահայ մամուլում ծավալված մի պոլեմիկա...] ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1956, թիվ 4:

²⁶ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. IV, Երևան, 1949, էջ 109:

²⁷ Մաշտոցյան Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 144, վավ. 303:

²⁸ [Ա. Ռաթթի, Հռոմեական նամակ... «Յուսիսափայլ», 1861, թիվ 10, էջ 301-330; Կոմս Էմանուել, Իտալացի աղջկա երգը... Նույն տեղում, 1861, թիվ 11, էջ 400-402:]

դեպքը լուսաբանող՝ Գ. Փարսադանյանի (Գ. Մուրադյան) Թիֆլիսից ուղարկած թղթակցությունը, ուստի և նա ստիպված է եղել այդ հոդվածն իր ընդարձակ ծանոթագրություններով հանդերձ հետ ուղարկել Թիֆլիսի իր բարեկամներին, որպեսզի նրանք գոնե ձեռագիր վիճակում այն տարածեն հասարակության լայն շրջաններում²⁹:

Ելնելով ստեղծված իրավիճակից, Նալբանդյանը, հավանաբար, ստիպված է եղել դիմելու եզոպոսյան լեզվի օգնությանը և գրել է «Ղոմեական նամակը», որը, մեր կարծիքով, գրաքննական արգելակները շրջանցելու նպատակով Նազարյանը նպատակահարմար է գտել տպագրել ուշացումով՝ 1861 թ.:

Մինչ արտասահմանյան ճանապարհորդությունը՝ Նալբանդյանը հազիվ թե անդրադառնար Ա. Ա. Ե. ստորագրությունը կրող նամակում արժարծված հարցերին: Ինչպես նշեցինք, «Տեսիլ» բանաստեղծությունը տպագրվել էր 1860 թ. հունվարին. Նալբանդյանը 1859 թ. հոկտեմբերից մինչև 1860 թ. հունիսը գտնվում էր Պետերբուրգում և զբաղված էր իր քննություններով, թեկնածուական թեզով և ապա արտասահմանյան ճանապարհորդության նախապատրաստական աշխատանքներով: Նա Մոսկվա է ժամանում միայն հունիսին և 11 օր անց մեկնում Նոր-Նախիջևան: Եթե այդ ժամանակամիջոցում կամ հենց Մոսկվայում նա հասցրած լիներ գրել այդ նամակը, ապա ոչ մի հիմք չենք տեսնում այն բանում, որ բանավիճային այդ ելույթի տպագրությունը Նազարյանը հետաձգեր ամբողջ մեկ տարով:

2. Նալբանդյանին վերագրվող այդ նամակում գետեղված է մի ֆելիտոն, որն սկսվում է հետևյալ պարբերությամբ.

«Պատվելի առողջամիտ ազգակից, գիտեն, որ կցանկանայիր իմանալ որևիցե մեկ նորություն, եթե վաղուց լսած չլինեիր: Անցյալ 1860 թվականի հունվար ամսո 23-ին պատահելով Սատանի հայ Շունե գյուղի մեջ, տեսա մի զարմանալի անասնանոց, թեպետ վաղուց տեսած էի, բայց այդ ամենից զարմանալի էր, որի մուտը արժեր վեց կոպեկ. շուտով հատուցի և մտա. բայց ի՛նչպես զարմացա վերահատու լինելով...»³⁰:

Այս հատվածը գրեթե բառացիորեն արտագրված է «Հիշատակարանում» (գլուխ է) գետեղված մի նամակից, որը մեր կարծիքով, ուղղված է Գ. Այվազովսկու «Մասյաց աղավնու» դեմ և սկսվում է հետևյալ պարբերությամբ.

²⁹ Տե՛ս նույն տեղում, Երիցյանի արխիվ, թղթ. 150, վավ. 49:

³⁰ Միքայել Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. II, Երևան, 1947, էջ 362:

«Ինձ վաղուց հայտնի է, որ Հիշատակարան ես գրում և կը ցանկանայիր իմանալ որևիցե անսովոր բան: Այս երկու ամսումը պատահելով մի քանի վաճառահանդեսների մեջ, տեսա մի թափառական գազանանոց, որի մուտքը արժեր կես մանեթ: Շուտով հատուցի և մտա, բայց ի՛նչպես զարմացա վերահասու լինելով նորա տիրոջ խաբեբայությանը»³¹:

Հազիվ թե Նալբանդյան-բանավիճողն արտահայտչական նոր միջոցներ չգտներ և ստիպված լիներ 1861 թ. արտագրելու ամսագրերից մեկի դեմ 1858 թ. գրած իր ստեղծագործության թեկուզ և մեկ պարբերությունը՝ բոլորովին այլ պարբերականի դեմ ուղղված նամակում:

3. «Հիշատակարանի» էջերում կոմս Էմմանուելին հղված նամակներից և ոչ մեկում մեծարանքի խոսք չի նկատվում Նալբանդյանի հասցեին: Այդ նամակները որպես կանոն սկսվում են հետևյալ սեղմ բառերով. «Ողորմած պարոն Կոմս Էմմանուել», «պարոն Կոմս Էմմանուել», «Պատվական եղբայրս Կոմս Էմմանուել», «Սիրելի եղբայրս Կոմս Էմմանուել» և «արգո պարոն Կոմս Էմմանուել»: Սակայն, Ա. Ա. Ե.-ի նամակն ուղղված էր իր «ազատամիտ և անխարդախ ազգակից», «պատվելի առողջամիտ ազգակից» Կոմս Էմմանուելին, որի «ճշմարիտ ազգասիրության և ազգօգուտ գործակատարության» համար նամակագիրը մեծարում էր նրան:

4. Վկայակոչելով Նալբանդյանի «Հիշատակարանում» արտահայտված այն միտքը, թե Կոմս Էմմանուելը ներկարարի կարասներ ունի, որոնց մեջ ընկած կենդանիները հասարակությանը երևում են «ներկված և դժվար ճանաչելի բրդով», Ա. Ա. Ե.-ն գրում է. «Քո գործարանի կարասները չունին նյութերի պակասություն և դու հարկադրված ես այդ գործերը հառաջ տանել մինչև ժամանակի վախճանը: Երանի թե ես ևս օգնող լինեի այդ գործակատարությանը, նորա համար, որ Հայաստանի ծխյալ ավերակների մեջ բավականին հաստամորթ արջեր կան ներկելու: Բայց ավաղ ասելույս, նոքա շատ, և ես միայն. և կարասներս սակավ և ներկիս գույները պակասավոր, խնդրեմ դուք ինքներդ օգնություն հասուցանեք, եթե ո՛չ, ինձ ևս գերի կվարեն դեպի Մասյաց հաղթանդամ ուրվականների ամրոցը»³²:

Այս նամակում այնքան ակնածանք կա դեպի Կոմս Էմմանուելի տարվա մեջ զանազան գույներով անբան կենդանիներ ներկող ամենակարող տակառները և այնքան մտավախություն իր կարասների պակասության և գույների սակավության մասին, որ չի կարելի չնշմարել հեղի-

³¹ Նույն տեղում, հ. I, Երևան, 1945, էջ 382:

³² Նույն տեղում, հ. II, էջ 362:

նակի անվստահությունը «Հիշատակարանը» հիշեցնող գործ ձեռնարկելու համար, որի անհրաժեշտությունը, սակայն, խիստ մեծ էր այդ օրերին:

5. Նալբանդյանի հետ միասին մեծարելով Նազարյանին, Ա. Ա. Ե.-ն նրա արժանիքներից է համարում և այն, որ «այդ ճշմարտության սպասավորը քաջ գիտեճալով յուր սուրբ պարտականությունը դեպի յուր կրոնը և դեպի յուր ընկերը, հավասարապես լցուցել է մինչև ցայսօր յուր սպասավորության չափը և պայմանը»³³:

Հայտնի է, որ «Հյուսիսափայլում» 1860 թ. տպագրված «Մենդելսոն, Լեսսինգ և Լավատեր» հոդվածին³⁴ կից ծանոթագրության համար կատաղի հալածանք է սկսվում Նազարյանի դեմ: Նա հռչակվում է լուսթերական, աղանդավոր, հայոց եկեղեցու և հավատի թշնամի. նույնիսկ էջմիածնի սինոդը «Հյուսիսափայլը» փակելու վճիռ է կայացնում: Ամսագիրը հաջողվում է փրկել միայն Նազարյանի առեւի ջանքերի շնորհիվ: Անշուշտ, 1860 թ. վերջերի և 1861 թ. սկզբների այս լուրջ իրադարձությունները նկատի ուներ նամակագիրը, երբ շեշտում էր Նազարյանի նվիրվածությունը կրոնին և հետևապես նրա դեմ բարդված հերյուրանքների անհիմն լինելը:

Նախ Նալբանդյանը Նազարյանին չէր կարող գնահատել նրա կրոնասիրության համար: Այնուհետև անկախ այդ բանից, նախքան իր արտասահման մեկնելը նա չէր կարող կանխատեսել իրադարձությունների հետագա ընթացքը:

Ի վերջո, արտասահմանյան ուղևորությունների ժամանակ զբաղված լինելով միանգամայն լուրջ հարցերով, Նալբանդյանը հագիվ թե անհրաժեշտ գտներ ուշադրություն նվիրելու Մանդինյան քահանային:

6. Ա. Ա. Ե.-ն իր նամակում հայտնում է հետևյալ ուշագրավ միտքը. «Գիտեմ, որ կցանկանայիր իմանալ որևիցե մեկ նորություն, եթե վաղուց լսած չլինեիր»: Առաջին հայացքից անիմաստ թվացող այս միտքը հետաքրքրական է հետևյալ նկատառումով. նամակագիրը, հարկավ, համոզված էր, որ Նալբանդյանը «վաղուց», այսինքն արտասահմանյան ճանապարհորդության նախօրյակին կարդացած կլիներ «Մեղու Հայաստանի» թերթի համապատասխան համարը և գուցե նույնիսկ մոռացած այն, ուստի նրա ուշադրությունը հրավիրում է այդ հարցի վրա, որի դատավճիռը պատրաստվում էր կայացնել նրա իսկ ռճով ու եղանակով:

7. «Հիշատակարանում» Նալբանդյանն այս կամ այն առիթով խո-

³³ Նույն տեղում, էջ 359:

³⁴ [Ստ. Նազարյան, Մենդելսոն, Լեսսինգ և Լավատեր: Վիճաբանելով կրոնի վերա- «Հյուսիսափայլ», 1860, թիվ 10, էջ 298-313:]

սելով Նազարյանի և իր փոխհարաբերությունների մասին, նրան կոչում է միմիայն «հորեղբայր»: Ա. Ա. Ե.-ն, սակայն, գրում է. «Ձեր համար ասում են, որ ներկարարի կարասներ ունի յուր բարեկամի (ընդգծումը մերն է – *Մ. Մ.*) գործարանի մեջ»:

8. Ա. Ա. Ե.-ի նամակից ակնհայտ է դառնում, որ Նալբանդյանից բացի հեղինակը կապված է եղել նաև Նազարյանի հետ, որի մասին արտահայտվում է պատկառանքով և գրեթե երկյուղածորեն:

Նազարյանի հայացքների որոշակի ազդեցության հետ են աղերսվում Ա. Ա. Ե.-ի նամակի մի շարք խորհրդածությունները՝ կապված հայերի նախնի փառքի և ներկա անմխիթար կացության, լուսավորության հաղթանակի, նախահայրերից ժառանգած ավանդույթը պահպանելու և այն ապագա սերնդին կտակելու կոչի հետ: Ինքնին հասկանալի է, որ «Երկրագործության» հեղինակը 1861 թ. չէր կարող մտորել նման խղճուկ հարցերի շուրջ:

9. Նամակում բավական տեղ է հատկացված Ստեփանոս քահանա Մանդինյանի «դպրոցի» նկարագրությանը թիֆլիսում, որն, անկասկած, պարունակում է ինքնակենսագրական տարր և չի առնչվում Նալբանդյանի կենսագրությանը: Հայտնի է, որ խոսելով մանկական տարիներից ստացած կրթության մասին՝ Նալբանդյանն իր ուսուցչին (Օգսենտ տիրացու) անվանում է «վարպետ» կամ «խալֆա», մինչդեռ այս նամակում որոշակիորեն խոսվում է Ստեփանոս քահանա Մանդինյանի մանկավարժական գործունեության մասին:

10. Նամակի լեզուն դեռևս անկատար է, լի բարբառային և գրաբարյան մի շարք արտահայտություններով, որը բնորոշ չէ Նալբանդյանի՝ հատկապես այդ օրերին գրած հոդվածների լեզվին:

Այսպիսով, մենք հանգել ենք այն եզրակացության, որ Ա. Ա. Ե. ստորագրությունը կրող նամակը պատկանում է «Հյուսիսափայլի» խմբագրությանը մոտ կանգնած գործիչներից մեկի գրչին, որն իր պարտքն է համարել պաշտպանել անսագրի խմբագրի պատիվը Մանդինյանի թերթի հարձակումներից և մերկացնել վերջինիս գործունեության հակաժողովրդական էությունը: Այդ նամակագիրը չնայած անձամբ չի ճանաչել Նալբանդյանին, բայց այնքան լավատեղյակ է եղել նրա ստեղծագործությանը և գաղափարապես այնպես հոգեհարազատ նրան, որ իրեն իրավունք է վերապահել օգտվել նրա բանավիճային զինանոցից և բազմիցս վկայակոչել «Հյուսիսափայլի» զանազան դրվագները: Նամակի ուշադիր ընթերցանությունը բացահայտում է երրորդ անձնավորության ջերմ սիրո արտահայտությունը Նալբանդյանի և Նազարյանի նկատմամբ, ինչպես նաև այն համեստ տոնը, որով նա արտահայտվում

է իր իսկ կարողությունների մասին:

Ինքնուրույն ոչ մի գաղափարով աչքի չընկնող Ա. Ա. Ե.-ի նամակը լոկ մատնում է Նալբանդյանին նմանվելու հեղինակի ջանքերը: Բնականաբար, այդ նամակը որևէ բան չի ավելացնում Նալբանդյանի գրական ժառանգությանը և մեծ հրապարակախոսը որքան արագ թոթափի իրեն վերագրված նման բնույթի հոդվածների լուծը, այնքան լավ:

ՆՈՐԻՑ ՍԱՐԳԻՍ ՎԱՐՇԱՍՅԱՆՑԻ «ՆԱՄԱԿԻ» ԱՌԹՎՐ

«Պատմա-բանասիրական հանդեսում» 1964 թ. բանասիրական գիտությունների թեկնածու Ռուզան Նանումյանը հանդես եկավ «Մի կարևոր փաստի վերականգնում» հոդվածով, որով ճշգրտում էր նալբանդյանագիտության առեղծվածներից մեկը³⁵: Խոսքը վերաբերում է Սարգիս Տեր-Միքայելյան Վարշամյանցի «Նամակին», որը հրատարակվել է «Հյուսիսսփայլ» ամսագրում 1860 թ.³⁶: Ինչպես հայտնի է, Նալբանդյանի Երկերի լիակատար ժողովածուի առաջին հրատարակության խմբագրությունը, մտացածին համարելով թե՛ Վարշամյանց ազգանունը, թե՛ վայրի անվանումը (Փայտակարան), որտեղից ուղարկված էր «Նամակը», այն համարել է Նալբանդյանի գրչի արգասիքը և ընդգրկել նրա Երկերի մեջ³⁷:

Ռ. Նանումյանը, սակայն, վերոհիշյալ հոդվածում հաստատում է Վարշամյանցի՝ իբրև իրական անձնավորության ինքնությունը և նրան անվերապահորեն համարում Կոմս Էմմանուելին՝ Նալբանդյանին հղված «Նամակի» հեղինակը:

Վարշամյանցի «Նամակի» բազմակողմանի ուսումնասիրությունը և դրան առնչվող փաստերը, սակայն, մեզ հանգեցնում են այն համոզման, որ իրավացի էին Նալբանդյանի Երկերի լիակատար ժողովածուի հրատարակիչները, որոնք, հենվելով այս կարևոր փաստաթղթի մի շարք առանձնահատկությունների վրա («ընդհանուր շունչը, նամակագրի լեզուն և ոճի, տեղ-տեղ պոլեմիկական տոնը և այլն»)՝³⁸, այն համարել են Նալբանդյանի ստեղծագործությունը:

Իսկ ինչպես վարվել Ռ. Նանումյանի բերած փաստարկների հետ, ըստ որոնց՝ Վարշամյանց ազգանունով գործիչ հիրավի ապրել է Բաքվում, որը 1864 թ. հետո եղել է տեղի Մարդասիրական ընկերության գործունյա անդամներից և վարել այդ ընկերության ատենադպրի պաշ-

^{*} Տպագրվել է՝ «Պատմա-բանասիրական հանդես», 1981, թիվ 3, էջ 243-252:

³⁵ Ռ. Պ. Նանումյան, Մի կարևոր փաստի վերականգնում.— «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), 1964, թիվ 3, էջ 187-195:]

³⁶ [«Նամակ» (ստացված Բաքվից «Հյուսիսսփայլի» անունով), Փայտակարան, 1860 թվականի օգոստոսի 12-ին.— «Հյուսիսսփայլ», 1860, թիվ 11, էջ 384-396:]

³⁷ Միքայել Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. II, էջ 296-301:

³⁸ Նույն տեղում, էջ 434:

տոնը, 1870-1880 թթ. թղթակցել է «Մշակին» և նույնիսկ հեղինակ է մի գրքույկի: Նա, հավանաբար, զբաղվել է նաև գրական աշխատանքով. «Մեղու Հայաստանի» թերթում զետեղված է Ի. Ա. Կոչիլովի «Ազոալ և աղվես» առակի նրա թարգմանությունը, կատարված ժամանակի համար բավականաչափ պատշաճ գրական լեզվով³⁹:

Այսպիսով, ըստ Ռ. Նանունյանի, Սարգիս Վարշամյանցը միանգամայն իրական անձնավորություն է և հարկ է հավանական համարել, որ նա, իրոք, «Նամակ» է հղել «Հյուսիսափայլի» խմբագրությանը (կամ Կոմս Էնմանուելին), թերևս խնդրելով բացատրություն տալ գրական նոր լեզվի զարգացման հարցում ժամանակի պարբերականների դիրքորոշման վերաբերյալ:

1860 թ. օգոստոսի 12-ի թվակիր «Նամակի» մուտքի խոսքում Ս. Վարշամյանցն ընդհանրացնող գնահատական է տալիս «Հյուսիսափայլի» գործունեությանը՝ դրա հետ կապելով հայ նոր գրականության սկզբնավորումը, «կենդանի ազգի մեջ կենդանի լեզվով խոսելու և գրելու» իրողությունը: Այնուհետև նամակագիրն այն միտքն է հայտնում, թե «Հյուսիսափայլը» պարտավոր է հսկել և մյուս թերթերի լեզվի մաքրությանը, անաչառ խոսք ասել դրանց արժանիքների և թերությունների մասին: Հիմնական հարցը, սակայն, որ հուզում է Վարշամյանցին, Մսերյանների լեզվական քաղաքականությունն է, նրանց ամսագրի անկանոն լեզուն: «Ճառքաղը», նշում է նամակագիրը, «աշխարհաբար լեզուն շինել է տիրացուի շիլափլավ կամ ռուսաց պահոց (պասվա) վիճեզրետ»⁴⁰: Նամակագիրը շեշտում է, որ կարդալով «Ճառքաղը»՝ հարյուրավոր պարզամիտ ընթերցողներ կարող են ապակոմսորոշվել և Մսերյանների հեղինակության ազդեցության ներքո որդեգրել նրանց ամսագրի լեզուն, աղավաղել աշխարհաբարը: Վարշամյանցը խնդրում է Կոմս Էնմանուելին տպագրել իր «Նամակը» և համապատասխան ծանոթագրություններով զգուշացնել ընթերցողներին՝ հեռու մնալու «Մսերյանների մատենագրական հերձվածից»:

«Նամակում» վեր է հանվում ևս մեկ գործնական հարց. Մսեր Մսերյանը 1856 թ. Լազարյանների տոհմի պատմությունը գրելով գրաբար լեզվով, իր քայլը բացատրում էր գրաբարի արժանիքներով և աշխարհաբարն անվանում «անհամ, թույլ, տգեղ և անհեթեթ»⁴¹: Այնինչ, երկու

³⁹ «Մեղու Հայաստանի», 1860, թիվ 36, էջ 288:

⁴⁰ Միքայել Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. II, էջ 296:

⁴¹ [Յիշատակարան կենաց եւ գործոց Մեծանուն պայազատաց Լազարեան տոհմի: Շարադրեալ 'ի Մսերայ մագիստրոսէ և ասպետէ Գրիգորեան Մսերեանց, Մոսկուա, 1856, էջ X:]

տարի դրանից անց, նույն Մսերյանը «ճռաքաղը» հրատարակում է աշխարհաբար և այն էլ աշխարհաբարի այնպիսի մի աղավաղված ձևով, որն իսկապես «անհամ» էր, «թույլ» և «տգեղ»: Խնդիրն այն է, գրում է «Նամակի» հեղինակը, որ եթե աշխարհաբարը դեռևս չունի իր քերականությունը, այդ չի նշանակում, թե կարելի է գրել՝ ինչպես պատահի, առանց հետևելու ուղղափոսական կանոններին: Ընդհակառակն, ավելի դժվար է գրել այդ լեզվով, քանի որ աշխարհաբարը կենդանի լեզու է և ամբողջ ազգը կարող է հանդես գալ գրողի դատավորի դերում:

Վարչամյանցի «Նամակի» տպագրությունից անմիջապես հետո, հնարավորություն չունենալով իսկույն պատասխանել հողվածին, Մսերյանները շտապում են «Յուսիսափայլի» խմբագրության նկատմամբ իրենց վերաբերմունքն արտահայտել մի գռեհիկ քառատողով, որով ոչ միայն հայիոյում էին Նալբանդյանին և Նազարյանին, այլև քառատողին կից բնաբանով («Առ ցփն շրթամբբ») ոչնչացնում նրանց վաստակը: Ահա այդ քառատողը.

*Տիրացուի Շիլա-փլավ,
Վարդապետի Քալլա-փաչե...:
Յայս երկուքից թե ո՞րն է լավ
Ճաշակառուն քա՛ջ ծանաչե՞⁴²:*

Տողատակի ծանոթագրությամբ («Ի «Յուսիսափայլն» 1860 ամի, ամսատետր 11, էջ 385») բացահայտելով «Շիլա-փլավ» բառի աղբյուրը՝ Մսերյանները մեկ անգամ ևս հավաստում էին, որ քառատողն ուղղված է «Յուսիսափայլի» գործիչների դեմ:

Մեկ ամիս անց «ճռաքաղում» տպագրվում է Ջարմայր Մսերյանի «Դարձված բանից առ Սարգիս Տեր-Միքայելյան Վարչամյանց» հողվածը՝ ուղղված Ս. Վարչամյանցի դեմ, որից ակնբախ է, որ Մսերյաններն այդ պահին «Նամակի» հեղինակ էին համարում Վարչամյանցին⁴³: Ջ. Մսերյանը կշտամբում է Վարչամյանցին այն բանի համար, որ «ճռաքաղի» լեզվի մասին իր դատողությունները Ս. Մսերյանին հայտնելու փոխարեն նա հողվածն ուղարկել է նրա հակառակորդների պարբերաթերթին՝ շահելու համար Նազարյանի համակրանքը և աչքի առաջ ունենալով անձնական օգուտը:

Այնուհետև իրադարձությունները հաջորդում են միմյանց: Բաքվում ստացվում են «Յուսիսափայլի» և «ճռաքաղի» համարները, որոնց նյութերին ծանոթանալով՝ «ճռաքաղի» Շամախիի գործակալ, բժիշկ

⁴² «ճռաքաղ», 1860, քիվ 9, էջ 143:

⁴³ Նույն տեղում, 1861, քիվ 13:

Դավիթ Ռոստոմյանցն իր և Ս. Վարշամյանցի անունից մի նամակով դիմում է Մսերյաններին և հայտնում, թե «Յյուսիսափայլուն» տպագրված «Նամակի» համար Վարշամյանցը պատասխանատվություն չի կրում: Քանի որ Ռոստոմյանցի նամակը մեզ չի հասել, դիմենք Ձ. Մսերյանին, որը վերաշարադրում է այդ շատ կարևոր նամակի բովանդակությունը: Վարշամյանցին հղած՝ 1861 թ. հունվարի 18-ի թվակիր նամակում Ձ. Մսերյանը գրում է, որ Ռոստոմյանցի՝ ղեկտեմբերի 23-ի թվակիր նամակի «միջեն իմացաք՝ թե «Յյուսիսափայլի» 11-րդ տետրակում տպագրված Ձեր ստորագրությամբ նամակը՝ բնավին Ձերը չէ՛, և թե՛ նորա մեջ չկան **ո՛չ Ձեր բառերը, և ո՛չ Ձեր իմաստը**, որո վասն և խնդրում եք ներողամտություն»⁴⁴:

Այս նույն նամակում Մսերյան-որդին առաջարկում է Վարշամյանցին մանուկի էջերում հրապարակել ճշմարտությունը, այլապես, ինչպես նա գրում է, ինքը կշարունակի իր հողվածի տպագրությունը՝ ուղղված, բնականաբար, նրա դեմ՝ ուն ստորագրությամբ տպագրվել էր «Նամակը»: Մինչ այդ Ձ. Մսերյանը «ճռաքաղում» մի ծանուցում էր հրապարակել, որով հայտնում էր, թե առժամանակ դադարեցնում է իր «Դարձված բանից...» հողվածի շարունակության տպագրությունը մինչ այն պահը, երբ ստանա Վարշամյանցին հղած իր նամակի պատասխանը՝ «ի մասին նորա ստորագրութեամբ տպեալ նամակին»⁴⁵:

Սարգիս Վարշամյանցը, որը, հարկ է ենթադրել, գիտեր «Յյուսիսափայլի» արժեքը, Մսերյանի պահանջն անպատասխան է թողնում: Հավաստիանալով, որ Վարշամյանցը չի ցանկանում հանդես գալ «Յյուսիսափայլի» դեմ՝ Ձ. Մսերյանը մայիսի սկզբին տպագրում է «Դարձված բանից...» հողվածի շարունակությունը: Ի դեպ, հողվածը, որը նախատեսված էր չորս բաժնից, մնում է անավարտ:

Ձ. Մսերյանի հողվածի երկրորդ հատվածը մարտական մի ելույթ է «Յյուսիսափայլի» խմբագրության դեմ և իրենից ներկայացնում է Ս. Մսերյանի լեզվագիտական դրույթների պարզաբանումն ու պաշտպանությունը: Այս հողվածում ուշադրության արժանի են երկու հարցադրումներ. առաջինն այն է, որ Ձ. Մսերյանն իր հոր հետևողությամբ աշխարհիկ լեզուն համարում է «անհամ», «թույլ», «անհեթեթ», «գեղջուկ» և «գռեհիկ»: Երկրորդ խնդիրը, որը տվյալ դեպքում մեծ կարևորություն է ձեռք բերում՝ նամակի հեղինակի ինքնության վերաբերյալ նրա ակնարկներն են, որոնց կանդիդատնանք ստորև:

⁴⁴ Նույն տեղում, թիվ 20, էջ 331:

⁴⁵ Նույն տեղում, թիվ 15, էջ 253:

2. Մսերյանի երկրորդ հոդվածով ավարտվում է Վարշամյանցի «Նամակի» տպագրության և դրա շուրջն առաջացած իրարանցման պատմությունը, բայց հենց այստեղ է ծագում ամենամեծ առեղծվածը. ո՞վ էր «Նամակի» հեղինակը:

Ռ. Նանունյանն անվերապահորեն Վարշամյանցին համարելով Կոմս Էմմանուելին հղված «Նամակի» հեղինակ՝ հենվում է մասնավորապես հետևյալ կռվանների վրա.

1. Սարգիս Տեր-Միքայելյան Վարշամյանցը մտացածին անուն չէ: Նա Բաքվի հասարակական գործիչներից էր և իր զարգացման մակարդակով ընդունակ՝ գրելու «Հյուսիսսփայլում» տպագրված «Նամակը»:

2. «Նամակում կա պատշաճ հարգանքի տոն Մսերյանցի անձի և նրա վաստակների նկատմամբ», մի բան, որն անհարիր է Նալբանդյանի խառնվածքին:

3. «Նամակը» թվագրված է օգոստոսի 12-ով, երբ Նալբանդյանն արդեն գտնվում էր Նոր Նախիջևանում: Ուստի՝ «Վարշամյանցի Նամակը չէր կարող Նալբանդյանի ձեռքն ընկած լինել»: Եվ քանի որ «Նամակը» հղված էր Կոմս Էմմանուելին, Նազարյանը ոչ միայն այն խմբագրել է այլև «հանդես է եկել նաև Կոմս Էմմանուելի անունից»:

4. Աշխարհաբարի գնահատականի հարցում Նալբանդյանի հայացքները չեն ներդաշնակում Վարշամյանցի նամակի թեզերին:

Այս փաստարկներին հետևում է հեղինակի եզրակացությունը. «Գտնում ենք, որ այդ Նամակը կապ չունի Նալբանդյանի անվան հետ: Նա պատկանում է Վարշամյանցին և հարկ է ուղղել սխալը, հանելով այն Նալբանդյանի Երկերի ժողովածուի երկրորդ հատորից»⁴⁶:

Ընդունելով հանդերձ Ռ. Նանունյանի հոդվածի արժանիքները՝ մասնավորապես Վարշամյանցի անձի հետ կապված փաստերի հրապարակման առումով, մենք, այնուամենայնիվ, կփորձենք վիճարկել նրա առաջադրած փաստարկների հավանականության խնդիրը:

Մեր կարծիքով, Ս. Վարշամյանցը չէր կարող լինել Կոմս Էմմանուելին հղված «Նամակի» հեղինակը, և ահա թե ինչու: 1860 թ. երբ հրատարակվում է հիշյալ «Նամակը», Վարշամյանցը դեռևս չէր դրսևորել իրեն գրական-հասարակական աշխատանքների ասպարեզում. նա ընդամենը «Մեղու Հայաստանի» թերթում տպագրել էր «Ազգավն ու աղվեսը» առակի թարգմանությունը: Անգամ Զ. Մսերյանն իր առաջին հոդվածում անուղղակիորեն հայտնում էր, որ նա անհայտ անուն է գրական աշխարհում (գրելով այդ նամակը, շեշտում է Մսերյանը, «կամեցար նո-

⁴⁶ Ռ. Պ. Նանունյան, նշվ. աշխ., էջ 195:

րանով նախ՝ հայտնի անել, մեր ազգին՝ քո մինչև ցայժմ մատենագիտության ասպարեզի մեջ անհայտ մնացած անունը և անձը »)⁴⁷:

Բայց այս հարցի մեկ կողմն է: Ուշագրավ է և այն, որ «Նամակը» թե՛ արժարժած տեսական հարցերի, թե՛ կառուցվածքի, թե՛ լեզվաոճական առանձնահատկությունների առումով կապվում է «Յիշատակարանի» հետ, մատնում դրանց հեղինակների նույնության փաստը: «Նամակի» մուտքի խոսքը, որտեղ տրվում է «Յյուսիսափայլի» գնահատականը և նշվում դրա վաստակը հայ նոր գրականության զարգացման գործում, Նալբանդյանի՝ նույն հարցին նվիրված գնահատականների մի նոր արտահայտությունն է⁴⁸:

«Նամակում» քննարկվում են ժամանակի հյուսիսափայլյան շրջանակի լուսավորիչներին հուզող՝ աշխարհաբարի և գրաբարի փոխհարաբերության, հայերեն խոսակցական լեզվի և գրաբարի զարգացման օրինաչափությունների հետ կապված հարցերը, որոնց գիտական քննությունը հազիվ թե կարող էր մատչելի լինել ամսագրի շարքային մի թղթակցի:

Այնուհետև «Նամակը» շաղախված է նուրբ հումորի երանգով և երգիծական արտահայտություններով, որոնք որոշակի հարցերի կապակցությամբ շարունակաբար կրկնվելով, զգալիորեն հզորացնում են հեղինակային խոսքի ներգործուն ուժը: Ջուտ հրապարակախոսական մի հնարանք է այս, որը հատուկ էր միայն Նալբանդյանի գրելաձևին:

Նամակագիրն ուշադրություն է դարձնում այն հարցի վրա, որ Մսերյանները ծրագրել էին ընդհատված «ճռաքաղի» հրատարակությունը վերսկսել տարվա կեսին: Նրանց այդ վճիռը, որն ուղղակիորեն կապվում էր բաժանորդներ ձեռք բերելու՝ խմբագրության ճիգերի հետ և արժանանում է նամակագրի ծաղրին, ինքնին վկայում է այն մասին, որ հարցի նկատմամբ այդպիսի վերաբերմունք կարող էր դրսևորել մեկ այլ խմբագրություն: Բաժանորդների առումով «Յյուսիսափայլին» նույնպես բախտը չէր ժպտում, ուստի՝ տրամաբանական է, որ դրա խմբագրությունը նկատեր «ճռաքաղիների» փոքրիկ խորամանկությունը: Մինչդեռ վարչամյանցին կամ շարքային մեկ այլ գործչի հազիվ հետաքրքրեր այն հարցը, թե երբ է վերահրապարակվելու «ճռաքաղը»՝ օգոստոսի՞ց, թե հունվարից:

Ռ. Նանունյանի այն կարծիքը, թե Մսերյաններն իրենց քառատողում և այլ գրություններում վարչամյանց ազգանվան ներքո նկատի են

⁴⁷ «Ճռաքաղ», 1861, քիվ 13, էջ 218:

⁴⁸ Զմնտ. **Միքայել Նալբանդյան**, երկերի լիակատար ժողովածու, հ. II, էջ 296; *Նույնի՝ Յիշատակարան...*, նույն տեղում, հ. I, էջ 386:

ունեցել իրենց թերթի Բաքվի բաժանորդ Ս. Վարշամյանցին, կարիք ունի որոշ պարզաբանումների: Ըստ նրա՝ «ճռաքաղում» գետեղված քառյակում ակնարկ չկա Նալբանդյանի հասցեին և այն, ինչպես և Մսերյանի առաջին հոդվածը, ուղղված է Վարշամյանցի դեմ: Յոդվածն, իրոք, ուղղված է Վարշամյանցի դեմ, բայց քառյակը հասցեագրված է բացառապես «վարդապետ» Նազարյանին և «տիրացու» Նալբանդյանին (հիշենք վերջինիս գործունեության բնույթը Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի հոգևոր թեմի առաջնորդարանում):

Ժամանակին մենք հրապարակել ենք Մսերյանների արխիվում եղած մի ձեռագիր բանաստեղծություն, որը վերագրել ենք Ջ. Մսերյանին: Պասկվիլային այդ բանաստեղծության մեջ, չնայած այն բանին, որ հիշատակվում է Վարշամյանցի ազգանունը, մեր խորին համոզմամբ՝ հեղինակն, այդուհանդերձ, ակնարկում է Նալբանդյանին, թեև Ռ. Նանունյանը մեզ առարկում է այդ հարցում: Ահա խնդրո առարկա բանաստեղծության առաջին քառատողը.

*«Չարին ծնունդ՝ Նազարյանց
Ի չարության գերազանց,
Եվ քո ընկեր Վարշամյանց
Լիրք է նման հաջող շանց»⁴⁹:*

Այս առումով հետաքրքրական է Ջ. Մսերյանի առաջին հոդվածում տեղ գտած արտահայտություններից մեկը: Այստեղ նա հանդիմանում է Վարշամյանցին՝ իր «Նամակը» «Յյուսիսափայլին» հղելու համար՝ «քաջ գիտենալով «Յյուսիսափայլի» թերթերի միջից պ. Նազարյանցի և նորա ընկեր՝ Կոմսի թշնամությունն, նախանձն և աստելությունն առ իմ հայրն»⁵⁰: Ինչպես տեսնում ենք, այստեղ նույնպես, ինչպես և վերը նշված բանաստեղծության մեջ, Կոմսը մատնանշվում է իբրև Նազարյանի ընկերը: Մեր կարծիքով, հազիվ թե առաջին անգամ «Յյուսիսափայլին» նամակ ուղարկած մի թղթակից հորջորջվեր Նազարյանի ընկեր և նրա հետ մեկտեղ ենթարկվեր Ջ. Մսերյանի անողոք քննադատությանը:

Երկրորդ հոդվածում Ջ. Մսերյանը, որ մի քանի ամիս ժամանակ էր ունեցել ուսումնասիրելու խնդիրը, արդեն որոշակիորեն խոսում է երրորդ անձնավորության մասին, բացառելով Նազարյանի և Վարշամյանցի՝ «Նամակի» հեղինակ լինելու հնարավորությունը: Այսպես, նա գրում է. «Նախընթաց հոդվածիս մեջ ցույց տվեցի ես պ. Վարշամյանց, քո՝ կան քո անունով ստորագրված՝ մեզ և բազմաց հայտնի հեղինակի

⁴⁹ Մ. Գ. Մխիթարյան, «Յյուսիսափայլ» ամսագիրը, Երևան, 1958, էջ 53:

⁵⁰ «Ճռաքաղ», 1861, թիվ 13, էջ 218:

իսկական կամքը և նպատակը»⁵¹: Նույն նամակի այլևայլ հատվածներում դարձյալ դիմելով Վարչամյանցին, նա նշում է. «Աստված կյանք և կարողություն տա ձեզ, պ. Վարչամյանց, և ձեզ **պ. Թա՛գ կացած հեղինակ**», կամ «պ. Վարչամյանցը և **նորա քարտուղար հեղինակը**», «պ. Վարչամյանցը և **նորա Թագ կացած ընկերը**» (ընդգծումները մերն են – *Մ. Մ.*):

Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ «Յուսիսափայլի» շրջանակի գործիչների թվում այդ օրերին Նալբանդյանից բացի չկարմեկը, որին «Ճռաքաղի» խմբագրությունը «մեծարեր» «բազմաց հայտնի հեղինակ» անվանումով, ապա պարզ կդառնան Ջ. Մսերյանի ակնարկները՝ նամակի «Թագ կացած հեղինակի» հասցեին:

Ջ. Մսերյանն ապրում էր Մոսկվայում և ակնդետ հետևում «Յուսիսափայլի» խմբագրության քայլերին: «Մեղու Յայաստանի» թերթում տպագրված նրա հոդվածում սպրդել են արտահայտություններ, որոնցից պարզվում է, որ Մսերյանները զանազան ճանապարհներով տեղեկություններ էին ձեռք բերում «Յուսիսափայլի» խմբագրության ներքին գործերի վերաբերյալ⁵²: Ջ. Մսերյանը հազիվ թե սխալվեր Վարչամյանցի ստորագրությունը կրող «Նամակի» հեղինակի ինքնությունը բացահայտելու հարցում, ուստի հարկ է, որ մենք չթերազնահատենք նրա կարծիքները:

Մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ չենք կարող հաշվի չառնել և մեզ հասած ամենահավաստի վկայությունը՝ Դավիթ Ռոստոմյանցի տված բացատրությունը Մսերյաններին, որը Ռ. Նանումյանը սոսկ հիշատակել է՝ առանց անհրաժեշտ հետևությունների հանգելու: Նա այն միտքն է հայտնում, թե «Նամակի» հեղինակը, Մ. Մսերյանի աշխարհաբար լեզուն քննադատելով հանդերձ, բարձր է գնահատում նրա վաստակը գրաբարի ասպարեզում. ինչպես գրում է Նանումյանը՝ Նալբանդյանը չէր կարող, «գլուխ խոնարհել և գովասանքի խոսքեր շռայլել այնպիսի հակառակորդի հասցեին, որի գործունեության նկատմամբ նա ուներ իր որոշակի բացասական կարծիքը»⁵³: Ծանոթանանք «գնահատականի» այդ խոսքին: Ամենախիստ քննադատության ենթարկելով Մ. Մսերյանի աշխարհաբար լեզուն և առհասարակ «Ճռաքաղը» համարելով «և՛ գրաբարի, և՛ աշխարհաբարի ավերիչ», հոդվածագիրը վերջում ավելացնում է. «Թո՛ղ գերապատիվ մագիստրոսը ներե մեզ վեհանձնաբար, մեր կարծիքը հրապարակելու համար նրա աշխարհաբար լեզվի

⁵¹ Նույն տեղում, թիվ 22, էջ 358:

⁵² Տե՛ս «Մեղու Յայաստանի», 1860, թիվ 17, 32:

⁵³ Ռ. Պ. Նանումյան, նշվ. աշխ., էջ 189:

վերա: Մեք ոչ միայն ոչինչ թշնամություն, ոչինչ ատելություն և նախանձ չունինք դեպի նա, այլ դորա հակառակ և սիրող ենք նորա գրաբար աշխատասիրութեններին»⁵⁴ (ընդգծումը մերն է – Մ. Մ.): Նալբանդյանը «Հիշատակարանում» սիրո համանման գեղումներ է շռայլում «Հյուսիսափայլի» երդվյալ հակառակորդ, մանկավարժ Մովսես Իսահակյանի հասցեին, որին Շահբեգը նույնիսկ պատրաստվում էր իր զավակների կնքահայրը դարձնել: «Նամակի» հեղինակը դիմում է նույն հնարանքին. հեզմական ձևով «սեր է բացատրում» հակառակորդին... Բայց ահա, ինչպես և «Հիշատակարանում», հեղինակը կտրուկ շրջադարձ է կատարում: Եթե «Հիշատակարանում» նա հրաժարվում է Իսահակյանին կնքահայր դարձնելու մտադրությունից, ապա «Նամակում»՝ Մսերյանին խորհուրդ է տալիս «մեր սիրելի ազգի օգտի համար» հրաժարվել աշխարհաբարից և հին բարբառով օգուտ բերել «սուրբ եկեղեցւոյ Հայաստանեայց և լուսաճնունդ զավակաց նորին»⁵⁵: Ի դեպ, վերջին արտահայտությունը փոխառված է «ճռաքաղի» հայտարարությունից, որտեղ նշած էր, թե խմբագրությունն ամսաթերթի հրատարակությունը հանձն է առել «հատկապես 'ի փառս սուրբ եկեղեցւոյ Հայաստանեայց, և 'ի հոգեշահ զբոսանս լուսաճնունդ զավակաց նորին»: Մեր կարծիքով, այս ամենը շատ հեռու է հակառակորդի հասցեին «զովասանական խոսք» լինելուց:

Ռ. Նանունյանի հաջորդ փաստարկն այն է, թե Վարչամյանցի նամակը թվագրված է 1860 թ. օգոստոսի 12-ով, հետևապես, մինչ այն Մոսկվա հասներ, չէր կարող ընկնել Նալբանդյանի ձեռքը: Նրա կարծիքով, նամակը խմբագրել է Նազարյանը, դրան տալով «իր ընդհանուր շունչը և պոլեմիկական ինքնատիպ ոճը»: Ինչ վերաբերում է Նալբանդյանի ստորագրությունը կրող տողատակի ծանոթագրություններին, ապա «պետք է ենթադրել, – գրում է Նանունյանը, – որ Նազարյանը հանդես է եկել նաև Կոնստանդնուպոլիսում, քանի որ նամակը ուղղված է եղել նրան»⁵⁶:

Նշենք, որ ամեն բանից առաջ, ամսաթիվը կարող էր մտացածին լինել: «Հյուսիսափայլի» պատմությունից մեզ հայտնի են փաստեր, երբ Նալբանդյանը, գտնվելով Մոսկվայում, ամսագրում տպագրված նամակի տակ, իբրև գրության վայր, նշել է Փարիզը և կամ գտնվելով Լոնդոնում, այն պատրանքն է ստեղծել, թե իբր նամակն ուղարկել է Բեռլինից:

⁵⁴ «Հյուսիսափայլ», 1860, թիվ 11, էջ 396:

⁵⁵ Նույն տեղում:

⁵⁶ Ռ. Պ. Նանունյան, նշվ. աշխ., էջ 195:

Երբեմն հետ ու առաջ է տարել ամսաթվերը և այլն: Ամսաթիվն այս դեպքում ոչինչ չի ապացուցում: Կարևորն այն հարցադրումն է, որն առաջադրել էր «Հյուսիսափայլի» խմբագրությունը՝ վերաշարադրելով Վարշամյանցի «Նամակը»: այդ հարցադրումը կապված էր XIX դարի 60-ական թթ. ժամանակաշրջանի հայ իրականության ամենակենսական հարցերից մեկի՝ գրական հայերենի զարգացման ուղիների պարզաբանման հետ:

1860 թ. հունիսին Մսերյանները տարածում են «ճռաքաղի» հրատարակությունը վերսկսելու վերաբերյալ իրենց պաշտոնական ծանուցումը (ամսագիրը չէր հրատարակվում հունվարից), որի լեզուն առաջին առիթն է ընծեռում խոսելու «ճռաքաղի» լեզվի «ավերիչ» հետևանքների մասին: Երկրորդ պատճառը՝ ամսագիրն օգոստոսից-օգոստոս հրատարակելու գաղափարն էր: Համաձայն ընդունված կարգի՝ յուրաքանչյուր թերթ սկսում է հրատարակվել տարեսկզբից, բայց Մսերյանները վստահ չլինելով, որ կարող են անհրաժեշտ քանակությամբ բաժանորդներ ունենալ, ընտրում են «հարմար» մի ամիս, երբ հարևան թերթերի մրցակցության «վտանգը» հասնում էր նվազագույնի:

Մեր կարծիքով, այս օրերին, հունիսի 16-ից մինչև հուլիսի 6-ը գտնվելով Մոսկվայում, Նալբանդյանը, Նազարյանի հետ մեկտեղ, նախապատրաստել է մի հոդված, որը պետք է ընթերցողներին կողմնորոշում տար «ճռաքաղի» ուղղության և լեզվի վերաբերյալ: Այդ հոդվածի համար իբրև հիմք նրանք, հավանաբար, ընդունել են Վարշամյանցի՝ խմբագրությանն ուղարկած «Նամակը», որը փոխվել է ամճանաչելի լինելու աստիճանի՝ թե՛ «բառերի», թե՛ «իմաստի» առումով, ինչպես վկայում է Ռոստոմյանցը⁵⁷: Ամսաթիվը նույնպես փոխվել է այն դիտավորությամբ, հավանաբար, որ Նալբանդյանի՝ նամակի հետ առնչություն ունենալու ենթադրությունն անհավանական թվա (նա հուլիսի 6-ին պետք է մեկներ Մոսկվայից): Բայց եթե մի պահ ընդունենք, որ նամակը գրել է Վարշամյանցն օգոստոսի 12-ին, ապա այն հազիվ թե Մոսկվա հասներ, ուսումնասիրվեր տեղում և Նազարյանի ծավալուն ծանոթագրություններով տպագրության պատրաստվեր ամսագրի 11-րդ համարում: Չէ՞ որ այդ համարի նյութերը Պետերբուրգում գրաքննության կողմից տպագրության էին թույլատրվել սեպտեմբերի 6-ին, իսկ դատելով Ռոստոմյանցի նամակի «անցած ճանապարհից» (դեկտեմբե-

⁵⁷ Ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ Ռոստոմյանցը, գրելով հանդերձ, թե տպագրված «Նամակը» Վարշամյանցին չի պատկանում, չի ոչել, թե վերջինս առհասարակ «Հյուսիսափայլին» նամակ չի հղել: Նա սոսկ արձանագրել է կատարված փաստը. նամակի բառերը և իմաստը Վարշամյանցինը չեն:

րի 23-ի թվակիր նամակը Մոսկվա էր հասել հունվարի 17-ին), լավագույն դեպքում այն կարող էր Մոսկվա հասած լինել օգոստոսի վերջերին:

Ինչ վերաբերում է Ռ. Նանունյանի այն դիտողությանը, թե Վարշամյանցի նամակում արժարժված խնդիրը «ոչ մի կապ չուներ աշխարհաբարի մասին Նալբանդյանի ունեցած պատկերացումների և մշակած սկզբունքների հետ», ապա, կարծում ենք, որ այդ եզրակացությունը շտապողականության կնիք է կրում: Նալբանդյանի լեզվական հայացքները, նրա ասույթները և այդ հարցին նվիրված հոդվածներն իրենցից ներկայացնում են լեզվաբանական մի բարդ համակարգ, որի քննությունը մասնագիտական առավել լուրջ պայմաններ է ենթադրում:

Այսպես, Սարգիս Վարշամյանցի նամակը ծրագրային մի փաստաթուղթ է, որով «Յուլիսասփայլի» խմբագրությունը լուծում էր երկու հարց: Նախ իսկապես բարոյական պատասխանատվություն կրելով ժամանակի հայ պարբերականների լեզվի համար, խմբագրությունը բացահայտում էր «ճռաքաղի» խմբագիրների լեզվական քաղաքականության սնանկությունը: Բանն այն էր, որ աշխարհիկ գրական լեզուն նոր էր միայն կազմավորվում, և «Յուլիսասփայլի» գործիչները խիստ զգայուն էին այդ լեզվի նկատմամբ ցուցաբերվող անփութությունների հանդեպ: Այս առումով լուրջ տագնապների տեղիք էր տալիս «ճռաքաղի» ծանուցման լեզուն, որն իբրև անսագրի լեզու, կարող էր անուղղելի դեր կատարել «Յուլիսասփայլի» լեզվական ձեռքբերումները վտանգելու գործում⁵⁸:

Երկրորդ խնդիրը «Յուլիսասփայլի» դիրքորոշման պարզաբանումն էր գրական լեզվի զարգացման հարցում: Այստեղ է, որ հարցի քննարկմանը միջամտում է լեզվաբանական լուրջ գիտելիքների տեր Նազարյանը, որը տողատակի ծանոթագրությունների ձևով մի ամբողջ գիտական տրակտատ է հրամցնում ընթերցողին: Սակայն, քանի որ այս նամակում քննարկվում էին այնպիսի ծանրակշիռ խնդիրներ, ինչպիսիք էին գրաբարի և աշխարհաբարի հնության և ապրած բարեշրջման, XIX դարում գրաբարի և աշխարհաբարի փոխհարաբերության և դրանց ունեցած կշռի, աշխարհիկ գրական լեզվի զարգացման ուղիների

⁵⁸ Ահա մի հատված Մսերյանների տարածած՝ Վարշամյանցի «Նամակում» հղված ծանուցումից, որի լեզուն, նամակագրի արտահայտությամբ, «ոչ գրաբար է, ոչ աշխարհաբար, այլ մի ինքնահնար, անկանոն լեզու»։ «Ի նոյեմբեր ամսեան անցեալ 1859 ամի, մեք ծանուցած էաք՝ թէ «ճռաքաղ» բանասիրական անսագրի տպագրութիւնն առժամանակ մի 'ի յունուար ամսոյ ներկայ տարուոյս պիտի դադարի, և թէ զկնի քանի մի ամսոց 'ի սկսանիլ կրկին անգամ հրատարակութեան նորին, ունիմք առանձին Յայտարարութեանք ծանուցանել մեր ամենասիրելի Յամագգեաց»:

ճշգրտման հարցերը, ապա առաջին հայ լուսավորիչների և լեզվաշինարարների հայացքները նույնպես ամբողջությամբ չէին համընկնում: Դա միանգամայն օրինաչափ երևույթ է և պատմական դարաշրջանի ոգու արտահայտությունը: Խնդրի լուծման ուղիներն այնքան բարդ էին ու հակասական, որ Նազարյանի և Նալբանդյանի հայացքները չէին կարող համահունչ լինել: Պետք չէ նաև մոռանալ, որ նրանց քննության առարկան մի խնդիր էր, որը հետագա տասնամյակներում ևս, ընդհուպ մինչև մեր օրերը, մնացել է լեզվաբանների ուշադրության կենտրոնում և առիթ տվել բազմաթիվ վեճերի:

Այսպիսով, մեր համոզմամբ, «Հյուսիսսփայլի» թղթակից Վարշամյանցը հազիվ թե համարձակություն ունենար հրապարակային պայքարի ասպարեզն իջնելու իբրև լեզվի զարգացման հարցում որոշակի կազմակերպված տեսակետի պաշտպան և հակառակ թևի տեսակետները մերժող կողմ: Մենք գտնում ենք, որ Վարշամյանցի նամակը գրված է բանավիճային այնպիսի ցայտուն ձեռագրով, նոր զարգացող աշխարհաբարի դատի պաշտպանության այնպիսի նպատակասլացությամբ և կրքով, որ հազիվ թե դրա հեղինակը լիներ թեկուզ և առաջադիմական հայացքների տեր ու զարգացած մի անձնավորություն, ինչպիսին էր «Հյուսիսսփայլի» Բաքվի թղթակիցը:

Սակայն, հարկ է ավելացնել, որ նամակը թեև պատկանում է Նալբանդյանի գրչին, բայց Նազարյանի ծանոթագրություններն այնպիսի գիտական արժեք ու ծավալ ունեն (բուն բնագրին ոչնչով չզիջող), որ նամակն անենայն իրավամբ ձեռք է բերում երկու հեղինակի համատեղ աշխատանքի նշանակություն:

Ինչպես արդեն առիթ ունեցանք նշելու, ձեռքի տակ ունենալով առաջին հիմքը՝ Վարշամյանցի «Նամակը», «Հյուսիսսփայլի» խմբագիրը և գլխավոր աշխատակիցը հնարավորություն են ստացել իրենց ելույթը քողարկելու դրա հեղինակի անվան ներքո՝ ստեղծելու համար այն պատրանքը, թե ժամանակի հրատապ հարցերի շուրջ ծավալված մտքերի փոխանակությամբ՝ «Հյուսիսսփայլի» դիրքերից մասնակցում էին նաև ժամանակի մտավորականության այլ ներկայացուցիչներ:

ՅԻՆ ԱՌԵՂԾՎԱԾԻ ՎԵՐԾԱՆՍԱՆ ՆՈՐ ՓՈՐՁ*

Նալբանդյանագիտության դեռևս ամբողջությամբ չբացահայտված առեղծվածներից է «Յյուսիսափայլ» ամսագրում տպագրված նամակներից մեկի հեղինակի ինքնության խնդիրը⁵⁹: Սարգիս Տեր-Միքայելյան Վարչամյանց ստորագրությամբ՝ Կոնստանդնուպոլիսում հղված այդ նամակի հեղինակի իսկության վերաբերյալ կասկածներ են հայտնվել նույնիսկ 1860 թ., նամակի տպագրությունից անմիջապես հետո, բայց վերականգնել ճշմարտությունը չի հաջողվել: Սարգիս Վարչամյանցի ինքնության հարցով 1940-ական թթ. լրջորեն զբաղվել է Միքայել Նալբանդյանի Երկերի լիակատար ժողովածուի խմբագրությունը: Հատուկ ուշադրություն դարձնելով «Նամակում» վերհանված հարցերի, դրա լեզվի և ոճի առանձնահատկությունների, բանավիճային ուղղվածության վրա՝ խմբագրությունը Վարչամյանց ազգանունը համարել է Նալբանդյանի գրական կեղծանունը և «Նամակը» զետեղել մեծ հրապարակախոսի Երկերի լիակատար ժողովածուի երկրորդ հատորում:

Տարիներ անց, սակայն, բանասիրական գիտությունների թեկնածու Ռուզան Նանունյանը սխալ համարելով Նալբանդյանի «Երկերի» խմբագրության ենթադրությունը, փորձել է հաստատել նամակագիր Վարչամյանցի հեղինակային իրավունքը⁶⁰: Այսպես, հողվածագիրը հայտնում էր, որ Սարգիս Վարչամյանց անուն-ազգանունով գործիչ իրականում ապրել է Բաքվում, զբաղվել ազգասիրական, լուսավորական գործունեությամբ և իր հետաքրքրասիրությունների բերումով ու զարգացման մակարդակով միանգամայն ի վիճակի է եղել նման մի «Նամակ»-հողված ուղարկելու «Յյուսիսափայլի» խմբագրությանը:

Ռ. Նանունյանի հաղորդումը նույնպես առարկության հանդիպեց: 1981 թ. «Պատմա-բանասիրական հանդեսում» տպագրված բանավիճային մեր հողվածում՝ այս հարցի շուրջ մենք այն համոզմունքը հայտնեցինք, որ Նալբանդյանի «Երկերի» հրատարակիչներն ունեցել

* Տպագրվել է՝ ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1998, թիվ 3, էջ 53-63:

⁵⁹ «Նամակ (ստացված Բաքվից «Յյուսիսափայլի» անունով), Փայտակարան. 1860 թվականի օգոստոսի 12-ին».- «Յյուսիսափայլ», 1860, թիվ 11, էջ 384-396:

⁶⁰ Ռ. Պ. Նանունյան, նշվ. աշխ.:

են բոլոր հիմքերը «Նամակը» հատորում զետեղելու համար: Ինչ վերաբերում է Ռ. Նանունյանի վկայակոչած փաստերին, ապա, մեր կարծիքով, նրա կռվանների համար, հավանաբար, հիմք է ծառայել իրական Վարչամյանցից ստացված ինչ-որ թղթակցություն, որը խմբագրությունը հիմնովին վերափոխելով, դարձրել էր հակառակորդների դեմ ուղղված բանավիճային հոդված⁶¹: Պատահական չէր ուրեմն, որ «Նամակի» հրապարակումից անմիջապես հետո Մսերյաններն այդ փաստաթղթում նշմարել են Կոմս Էմմանուելի՝ «բազմաց հայտնի հեղինակի» մասնակցությունը գործին: «Հյուսիսափայլի» խմբագրության նման ձեռնարկումը մենք տրամաբանական էինք համարում, հաշվի առնելով այն թշնամական մթնոլորտը, որն ստեղծվել էր ամսագրի շուրջը՝ առաջին իսկ համարի տպագրությունից ի վեր:

«Հյուսիսափայլի» առաջին համարը բացվում էր «Հայկական լեզվի խորհուրդը» ծրագրային առաջաբանով, որը Նազարյանի նախախյուսիսափայլյան շրջանի աշխատություններում արժարժված գաղափարների ընդհանրացված գիտական շարադրանքն էր: Այստեղ նա կրկին հայտարարում էր նոր ժամանակների պահանջներին համապատասխան՝ աշխարհաբար լեզվի կիրառությանն անցնելու իր վճիռը, բացահայտում 1860-ական թվականների ազգային զարթոնքը խթանող գործոնների դերը և նշանակությունը: Օգտվելով Նոր տարվա շնորհավորական խոսքի հնարավորությունից, «Հյուսիսափայլի» խմբագիրը եռանդուն գործունեության էր կոչում ազգայիններին, շնչավորում Հայրենիք հասկացությունը: Քաղաքացիական ազնիվ պաթոսով տոգորված այս անկաշառ խոսքը հայությանն էր հաղորդում այն միտքը, թե կար Հայրենիք, որին պարտավոր էին ծառայել հասարակության բոլոր անդամները: Նույնիսկ ժողովրդին դիմելու նոր եղանակը՝ «Ազգի անդամներ», «Հայազնյա մարդիկ», «Մեր պատվելի եղբայրք և ընկերք» արտահայտությունները, ժամանակի ոգին խորհրդանշող և ազգի քաղաքացիական արժանապատվությունը շեշտող նորույթներ էին:

Խորապես համոզված լինելով, որ խավարամուլներին այլևս չի հաջողվի կասեցնել կյանքի առաջընթացը, Նազարյանն ազգասեր գործիչներից պահանջում էր գործել վստահորեն և ջախջախել «խավար վիշապի գլուխը»: Առաջիկա ամխուսափելի պայքարում հաղթելու առաջին գորեղ զենքը Նազարյանը համարում էր ժողովրդին հասկանալի և կիրթ աշխարհաբարը, առանց որի անհնար էր գտնում ամենօրյա

⁶¹ Մ. Հ. Մխիթարյան, Նորից Սարգիս Վարչամյանցի «Նամակի» առթիվ. – «ՊԲՀ», 1981, թիվ 3, էջ 243-252: [Տե՛ս նախորդ հոդվածը:]

հաղորդակցությունը նրա հետ, ինչպես նաև հայ նոր գրականության ստեղծումն ու ազգային կյանքի նորոգությունը: Առաջինը մեր իրականության մեջ՝ Նազարյանը հրապարակում է գրական աշխարհաբարի մշակման համարձակ մի ծրագիր, ըստ որի՝ մերժվում էր գրաբարի գերիշխանությունը նոր լեզվի վրա, բայց և միաժամանակ անընդունելի էր համարվում որևէ բարբառի անվերապահորեն դիմելու ճանապարհը: Այս առիթով նա գրում էր. «Մեր սիրտը վկայելով, որ գռեհիկ ժողովրդի վայրենացած լեզվով ամենևին անհնար էր ուսումն տալ ազգին, ընտրեցինք մի ընդհանուր ոճ խոսակցության, ինչքան կարելի էր, հեռի պահելով մեզ տեղական առանձին բարբառներից, հետևելով միայն այն առավել ընտիր աշխարհաբար հայախոսությանը, որ հայաբնակ քաղաքներումը Ռուսաստանի, լսվում է ընդհանրապես»⁶²: Սակայն, գրաբարի հարուստ ժառանգությունից նա իսպառ չէր հրաժարվում: «Մեր հայոց գեղեցիկ աշխարհաբար լեզուն,– գրում էր նա,– պիտո է յուր փոքր ի շատե անարատ դրության մեջ հառաջ գնա, մի ոտքը պահելով միշտ հին նախնական հիմքի վերա, օր ավուր լցուցանելով յուր պակասությունքը հին լեզվի ճոխ գանձարանից»⁶³: Այս պարագայում նա հայկաբաններից պահանջում է պահպանել չափի զգացումը և գրաբարից վերցնել միայն ամենամահրաժեշտը:

«Հայկական լեզվի խորհուրդը» հոդվածը, որը XIX դարի 60-ական թվականների հայ հասարակական կյանքի վերափոխման, եվրոպական քաղաքակրթության օրինակով դրա նորոգության մի բացառիկ կարևոր ծրագրային փաստաթուղթ էր, սրերով է ընդունվում ժամանակի հետա-հայաց գործիչների կողմից: Կարճ ժամանակից մթնոլորտն ավելի է շիկանում, երբ «Հյուսիսափայլի» էջերում լույս են ընծայվում Նալբանդյանի, Նազարյանի և ամսագրի մյուս աշխատակիցների թե՛ ընթացիկ հոդվածները, թե՛ պատասխանները բանավիճողներին: «Մեղու Հայաստանի», «Ճռաքաղ», ապա նաև «Մասյաց աղավնի» պարբերաթերթերում տպագրվում էին Ստեփանոս քահանա Մանդինյանի, Սեր և Զարմայր Մսերյանների, Մովսես Իսահակյանի հոդվածները: Սկսած 1860 թ. իր հեղինակավոր խոսքն է ասում նաև Գաբրիել Այվազովսկին: Շուտով բանավիճային հրապարակի տիրակալն է դառնում մոսկովաբնակ բանասեր Հովսեփ Զերքեզյանը, որն իր մարտական հոդվածներով ողողում է ժամանակի թերթերը, չխորշելով նաև սադրանքների և անվայել մատնությունների միջոցներից:

⁶² «Հյուսիսափայլ», 1858, թիվ 1, էջ 31:

⁶³ Նույն տեղում, էջ 34:

Շատ հետաքրքրական է և ժամանակի համար բնորոշ, որ «Հյուսիսափայլի» դեմ սկսված բանավիճային պայքարը զուգակցվում էր նաև այսպես կոչված բանաստեղծական զեղումներով, որոնք իրականում հայիոյանքներ էին՝ չափածո ձևի մեջ, սպառնալիք և կամ հակառակորդին ոչնչացված տեսնելու անմիտ ցանկություն: Վերոհիշյալ պարբերաթերթերը, ի դեպ, ապագա ընթերցողներին «հիշատակ» են թողել իրենց ողորմելի երազների, տեսիլների, չափածո և արձակ առակների մի պատկառելի հավաքածու:

Նազարյանը հարկադրված էր խմբագրական ընթացիկ գործերի հետ մեկտեղ պատասխանել «համաճարակային» բնույթի այդ հողվածներին, թեև իբրև ճշմարիտ հրապարակախոս, նա արժանապատվությունից ցածր էր համարում իջնել մինչև վերը հիշված տեսիլների ու երազների տնաբույս հեղինակներին պատասխանելու մակարդակը: Նազարյանի և Նալբանդյանի հողվածներից բացի, «Հյուսիսափայլում» տպագրվում էին նաև ամսագրի խմբագրությանը մոտ կանգնած մի շարք գործիչների հողվածներն ու բողոքի նամակները (Սադա Ալեքսանդրյանց, Հակոբ Սերոբյանց, Մարտիրոս Սինոնյանց): Այս շարքի հողվածագիրներից էր դիտվում նաև Սարգիս Տեր-Միքայելյան Վարչամյանցը, որի «Նամակ»-հողվածը դարձավ բանավեճերի առարկա: Արդ, անդրադառնալով այդ «Նամակի» հեղինակի ինքնության խնդրին ևս մեկ անգամ:

Ռ. Նանունյանի և տողերիս հեղինակի՝ վերը հիշված բանավիճային հողվածների տպագրությունից տարիներ անց, իրերի բերումով, ծանոթացանք «Արձագանք» շաբաթաթերթում տպագրված մի մահախոսականի, որը սկիզբ դրեց նոր որոնումների: Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի հրատարակիչ Գևորգ Աբիմյանի գործընկեր, հայ մանկավարժ և հասարակական գործիչ Հովսեփ Փոնդոյանի մահվան առիթով գրված այդ մահախոսականում նշված է. «Վերք Հայաստանին» տպագրվելուց հետո Փոնդոյանը կողմնակի կերպով օգնում էր հայր Մանդինյանի «Մեղու Հայաստանի» լրագրին և համեստաբար պահելով յուր անունը, նա մի շարք հողվածներով (1858 և 1859 թվականներին) հերքեց «Հյուսիսափայլի» մեջ երևեցած այն կարծիքը, որ իբր թե մասնավոր անհատները կարող են ժողովրդի համար որևիցե լեզու ստեղծել: Փոնդոյանը այս խնդրից դուրս չէր խառնվում «Մեղուի» և «Հյուսիսափայլի» մեջ հարուցած բանակռվին, բայց յուր վերոհիշյալ գրվածների մեջն էլ արդեն բավականին հմտություն ցույց տվեց, ամենայն քաղաքավարությամբ առաջ բերելով անհերքելի փաստեր օտար գրականությունից: Նա անմիջապես հեռացավ ասպարեզից, երբ հիշյալ երկու

թերթերի բանակոծիչը չափազանցության հասավ»⁶⁴:

Փոնդոյանի հողվածների որոնումները մեզ հանգեցրին հետևյալին. «Մեղու Հայաստանի» թերթում 1858 թ. նա տպագրել է երեք հոդված: Առաջին երկու հոդվածը կրում են հեղինակի պայմանական անվան Մ. Ղ. սկզբնատառերը⁶⁵: Երրորդ՝ անվերնագիր հոդվածը տպագրվել է Թովմաս Դավթյան ստորագրությամբ⁶⁶: Չորրորդ հոդվածը, որն անստորագիր է, լույս է տեսել 1860 թ.⁶⁷: Այն, որ հիշյալ չորս հոդվածը պատկանում են միևնույն հեղինակին, ապացուցվում է ոչ միայն դրանց լեզվի առանձնահատկություններով, որն աչքի է ընկնում Թիֆլիսի բարբառի ինքնատիպ երանգավորումներով, այլև, որ շատ ավելի հատկանշական է, հողվածներում արժարժված խնդիրների տրամաբանական սերտ կապով⁶⁸:

«Քննություն» վերնագիրը կրող առաջին հոդվածում, որն ունի «Պարոն Ստեփանոս Նազարյանցը և նորա գրավոր վաստակը» երկրորդ հիմնական խորագիրը, հողվածագիրն իր նպատակն է համարում հայ գրականության մեջ սկսված աշխուժության կապակցությամբ քննարկել, ապա և միմյանց հետ հաշտեցնել մամուլի էջերում արտահայտվող կարծիքները, որոնք թեև հետապնդում են միևնույն նպատակը, բայց և կարող են դանդաղեցնել ընդհանուր առաջադիմության ընթացքը: Ինչպես պարզվում է Մ. Ղ.-ի հողվածներից, նրան հուզող հիմնական խնդիրն աշխարհաբար գրական լեզվի մշակման նազարյանական ծրագիրն էր, որը նա միանգամայն անընդունելի էր համարում: Բուն հարցին անդրադառնալուց առաջ, հողվածագիրը փորձում է ներկայացնել Նազարյան-գիտնականի գրական վաստակը: Նա այն միտքը

⁶⁴ «Արձագանք», 1883, թիվ 28, էջ 400:

⁶⁵ [Մ. Ղ., քննություն. Պարոն Ստեփանոս Նազարյանցը և նորա գրավոր վաստակը.– «Մեղու Հայաստանի», 1858, թիվ 29, էջ 228-232; թիվ 30, էջ 237-239; *նույնի՝* Բանաքննություն.– Նույն տեղում, թիվ 36, էջ 285-287:]

⁶⁶ [Նույն տեղում, թիվ 48, էջ 380-384:]

⁶⁷ [Պարոն Նազարյանցի աշխարհաբար լեզվի վրա.– Նույն տեղում, 1860, թիվ, 5, էջ 36-40; թիվ 6 էջ 42-46:]

⁶⁸ Միքայել Նալբանդյանի երկերի լիակատար ժողովածուի երրորդ հատորի (Երևան, 1982) ծանոթագրություններում մենք թույլ ենք տվել երկու վրիպում: Խոսելով Մ. Ղ.-ի հողվածների մասին, դրանց հեղինակ ենք համարել Ղազար Մարգարյանին, որի՝ իբրև շաբաթաթերթի աշխատակցի անունը հիշատակված է խմբագրության ծանուցումներից մեկում: Այնուհետև երրորդ հողվածի հեղինակ ենք համարել Թովմաս Դավթյանին: 1858 թ. հոկտեմբերի 22-ի թվակիր այս հողվածի մուտքի խոսքում նշված է. «Այս օրերում Օդեսայից թուրք ստացա՛նք գիտնական Թովմաս Դավթյանից, որով խնդրում է այս հողվածը ժողովրդակա՛ն լեզվի վերա հրատարակել «Մեղու Հայաստանի» լրագրի միջոցով»: Տե՛ս [Մ. Հ. Մխիթարյան, Ծանոթագրություններ.–] Միքայել Նալբանդյան, ԵԼԺ, հ. 3, էջ 362-363:

է հայտնում, թե իբրև դասախոս և գիտնական ճանաչված Նազարյանը տկար է գրաբարի մեջ, իր «Այբբենարանում»⁶⁹ մանուկներին խառնիխուռն գիտելիքներ է հրամցնում, կազմում է բարդ բնագրեր և այլն: Ազգի օգտի համար աշխատելու փոխարեն, Մ. Ղ.-ի կարծիքով, Նազարյանն «առավել ջանադիր է լինում յուր գիտության աստիճանը ցույց տալու ազգին, քան թե նրան մի կերպ օգուտ բերելու»⁷⁰: Այնուհետև արդեն քննության առնելով «Հայկական լեզվի խորհուրդը» ծրագրային հողվածում արժարժված խնդիրները, հեղինակը խստիվ մերժում է բարբառները մշակելու և մեկ գրական լեզու ձևավորելու Նազարյանի ծրագիրը: «Նազարյանը պետք է ձեռ վեր առնի՝ աշխարհաբար լեզվի նորաշինությունիցը», ճանապարհորդի Հայաստանում, ուսումնասիրի բարբառները և հասկանա իր սխալները, հայտարարում է նա: Ջարգացնելով այն միտքը, թե ժողովրդի լեզուն պատմության «կենդանի հիշատակ է», Մ. Ղ.-ն գտնում է, որ սխալ է՝ միմիայն արևմտահայ և արևելահայ լեզուների հեռանկարային լինելու հանգամանքն ընդգծելը և պահանջում է հավասարապես ընդունել բոլոր գավառաբարբառների պահպանման և օգտագործման անհրաժեշտությունը: Չընդունել բարբառները, գրում է նա, կնշանակի «պատմությունը ուրանալ, աշխարհի մեջ եղած իրողությունները և նոցա ծանր-ծանր հետևանքները, որ մի անգամ հառաջացել են և ներգործում են այժմ, ոչինչ համարել, ջուրը ձգել, իսկ այդ խելացի մարդու գործ չէ»⁷¹: Ավելին՝ Մ. Ղ.-ն ծաղրում է բոլորին հասկանալի՝ մեկ լեզու մշակելու Նազարյանի մտադրությունը, ասելով, որ այն կդառնա ոչ թե հայոց լեզու, «այլ պարոն Նազարյանցի լեզու»:

«Բանաքննություն» վերնագրված երկրորդ հողվածում Մ. Ղ.-ն անդրադառնում է Նազարյանի լեզվական հայացքներին, կշտամբում նրան գրաբարից օգտվելու առաջարկի համար, գտնելով, որ «աշխարհաբար լեզվի խոսքերի նյութը պիտի առնվի կենդանի բառարանից, որ է՝ ժողովուրդը»: Ինչ վերաբերում է Նազարյանի այն կարծիքին, թե քանի որ բարբառները քերականություն չունեն, «ես պատճառով պետք է լեզուն ուղղած, կանոնի տակ դրած» լինի, ապա Մ. Ղ.-ն ամենայն համոզվածությամբ գրում է, թե խանգարումն այն չէ, որ այդ լեզուն հեռացել է գրաբարից, այլ այն, «երբ որ մէ մարդ մէ ինքնակոչի պես դուս է

⁶⁹ Ստ. Նազարյան, Առաջին հոգեղեն կերակուր հայազգի երեխաների համար, Մոսկվա, 1853:

⁷⁰ Մ. Ղ., քննություն. Պարոն Ստեփանոս Նազարյանցը և նորա գրավոր վաստակը. — «Մեղու Հայաստանի», 1858, թիվ 29, էջ 232:

⁷¹ Նույն տեղում, թիվ 30, էջ 238-239:

գալի գրականության ասպարեզ ու սկսում է իրմեն օրենքներ հնարել, լեզուն ծռմռել: Պարոն Նազարյանցը խանգարում է հայոց լեզուն: Ափսո՛ս, շատ ափսոս: Մենք ուրախ ենք գոնյա, որ ժողովուրդը չի սեփականում նրա հնարած քերականական ձևերը»⁷²:

Երրորդ հոդվածում, որն իբր ուղարկված էր Օդեսայից և ստորագրված Թովմաս Դավթյան անունով, հեղինակը, կրկին քննության առնելով աշխարհաբար գրական լեզուն մշակելու խնդիրը, այն միտքն է հայտնում, որ այդ հարցի տեսաբանները «ամենևին ծանոթ չեն ժողովրդի լեզվի հետ»: Այստեղից էլ այն թյուր կարծիքը, գրում է նա, որ «իբր թե աշխարհաբար լեզուն չափեմեն դուս աղքատ է»: Թ. Դավթյանը գտնում է, որ այդ գործիչները վաղ հասակում մեկնելով օտար երկրներ, վերադարձից հետո չեն ծանոթանում ժողովրդի կյանքին և նրա կենդանի լեզվին: «Մոռանալով իրենց մայրենի լեզուն, նրանք սկսում են կամաց-կամաց ստեղծել նոր հայոց աշխարհաբար լեզու գրաբարի ազդեցության տակ: Սրա օրինակը կարող է լինել պ. Նազարյանցը»:

Հակադրելով Աբովյանին և Նազարյանին, Թ. Դավթյանը գրում է. «Մեկի աղբյուրը աշխարհաբար գրելիս հիմնիկվա ժողովուրդն է, մյուսի աղբյուրը հայոց գրաբար բառարանն է ու սեփական երևակայությունը... Աբովյանը ամեն ժամանակ իր գրություններում կոնսերվատոր է, պահպանող հայրենական սուրբ ավանդությունների, Նազարյանցը սրա հակառակ զայրացյալ ռադիկալ է, հենց կարծես տակն ու վերև է ուզում անիլ հայրենի սուրբ ավանդությունները»: Նազարյանը, շարունակում է Դավթյանը, ժողովրդին պարտադրում է իր բժշկական ծառայությունը՝ անծանոթ լինելով նրա ցավերին. նրա առաջարկած դեղերն են՝ «անվարավուրդ խոսալը, սաստիկ կշտամբանքը, ...հարայ հրոց հիվանդի վրա, գլուխ դանգ անիլ...», իսկ այս դեղերը կարող են հիվանդին միայն հուսահատեցնել⁷³:

Դարձյալ դիմելով ռուս և օտարազգի գիտնականների ասույթներին, նա անընդունելի է համարում տարբեր բարբառների քերականական ձևերի նույնացումը: Միաժամանակ կրկնելով Մ. Ղ.-ի հոդվածում արտահայտված այն միտքը, թե լեզուներն օգնում են հասկանալու ազգի կյանքի և պատմության հանգամանքները, Թ. Դավթյանը եզրակացնում է, որ «լեզուն պատմության երևելի հիշատակարաններից մեկն է. նշանակում է՝ լեզվի խանգարիչը պատմության նյութերու ու աղբյուր-

⁷² Մ. Ղ..., Բանաքնություն, էջ 287:

⁷³ «Մեղու Հայաստանի», 1858, թիվ 48, էջ 380-381:

ներու խանգարիչ է»⁷⁴:

Շատ ավելի մարտական է այս շարքի վերջին, անստորագիր հող-վածը, որը հեղինակը, հավանաբար, գրել է նախորդ հողվածներում շո-շափված հարցերն ամփոփիչ եզրահանգման հասցնելու նպատակով: Թերևս այս պատճառով են հարցադրումները կրկնվում: Այսպես, նա առարկում է Նազարյանի այն տեսակետին, թե տարբեր բարբառներից հարկ է ստեղծել մեկ, մշակված, բոլորին հասկանալի լեզու: Դարձյալ պնդում է, որ գրականության զարգացումը պետք է ընթանա տեղական բարբառներով, քանի որ «մեր ժամանակը դեռ չէ հասել ընդհանուր լեզ-վի համար»: Այն միտքն է հայտնում, որ մեկ բարբառով գրված «Վերք Յայաստանի» վեպը մատչելի է բոլոր ընթերցողներին, այնինչ Նազար-յանի գրքերն անհասկանալի են: Այնուհետև հողվածագիրը գրողներին խորհուրդ է տալիս ճարտասանական, փիլիսոփայական, վերացական գրվածքների փոխարեն գրել ժողովրդին հասկանալի վեպեր, բանա-ստեղծություններ, որոնք նրան ծանոթացնեն և՛ իրենց լեզվին, և՛ կյան-քին: Բացի այդ, հայտնում է, ի դեպ, այն արտառոց միտքը, թե «գրողնե-րը թող էնպես բաներ գրեն, որ մեր լեզուն կարողանա բացահայտել»: Այս դատողություններին հետևում են նաև այնպիսի մեղադրանքներ, ըստ որոնց՝ Նազարյանը հնարավոր է գտնում նոր լեզվի մշակման ըն-թացքում օգտվել գրաբարյան լեզվածներից, երբեմն նաև եվրոպական բառերից, «իսկ թուրքի, պարսկի խոսքեր, որն որ մոտ երկու-երեք հար-յուր տարի գործ են ածում հայերը, պարոն վարդապետը չէ հրամայում գործ ածել»⁷⁵:

Այնուհետև հողվածագիրն անուղղակիորեն հրապարակում է իր հիմնական նպատակը, որը ստանում է սպառնալիքի երանգ. «Մենք կա-տարյալ վարձատրված կհամարենք մեր գլուխը, եթե մեր խոսքերով մենք հորդոր կըլնենք մեր շնորհալի երիտասարդներին, որ նրանք ուշք-ները դարձնեն մեր ժողովրդական լեզվի վրա ու աշխատեն էս լեզուն հանել էս անվայել արհամարհանքից, որի մեջ որ գտնվում է պ. Նազար-յանցի ու ուրիշների շնորհով»⁷⁶:

Վերջին հողվածում նկատվում են նաև անպատշաճ արտահայ-

⁷⁴ Սույն տեղում: Անկախ Փոնդոյանի նախորդ հողվածների հետ սույն հողվածի ունեցած բացարձակ նմանությունից, մենք անհնար ենք գտնում, որ երեք ամսվա ըն-թացքում «Մեղու Յայաստանի» շաբաթաթերթը կարող էր հասնել Օդեսա, դրա էջերում տպագրված երկու հողվածների հիմնախնդիրը լուսաբանվեր մի նոր, ծավալուն հող-վածում, որը և ուղարկվեր Թիֆլիս ու լույս ընծայվեր:

⁷⁵ Պարոն Նազարյանցի աշխարհաբար լեզվի վրա.— «Մեղու Յայաստանի», 1860, թիվ. 6, էջ 44:

⁷⁶ Սույն տեղում, էջ 46:

տություններ Նազարյանի հասցեին: Այսպես՝ անանուն հեղինակը գրում է, որ Նազարյանի լեզվագիտական հայացքները շատ ցածր են այն մակարդակից, որին հասել է եվրոպական գիտական միտքը շնորհիվ Վ. Յունբուլդի և Գրիմ եղբայրների գործունեության: Այնուհետև միանգամայն անվարան, նա Նազարյանին համարում է մեծամիտ, որն իբր «Յունսիսափայլուն» «իր գլուխը միշտ գոլում է» կամ դափնյա պսակներ է բաժանում: Նա իրեն իրավունք է վերապահում խոսել բոլոր հայերի, հարուստների ու կաթողիկոսների մասին, բայց «ինչի՞ վրա է հաստատում էդ իրավունքը, մենք չենք հասկանում: Թե իրան խոր գիտությունովն է պարծենում, մենք գիտենք ինչ որ-որ է, ու շատին էլ հայտնի է, թե բոլոր նրա աշխատությունները խառնիխուռն դեսից ու դենից հավաքած բաներ են ու թե մենակ նրան պատկանում են հայերի վրա մոզոնած շառերը»⁷⁷:

Եթե առաջին հոդվածներին կարելի էր չպատասխանել, քանի որ Նազարյանի հակառակորդների հայիոյական ելույթների «համանվագի» մեջ դրանք մեծ մտահոգություն չէին պատճառում, ապա վերջին հոդվածը ոչ միայն հատում էր լրագրային բանավեճի պատշաճության սահմանները, այլև որոշակի վտանգ էր ներկայացնում: Ինչպես ասվեց, հեղինակն իր իսկ խոստովանությամբ ձգտում էր «հայ շնորհալի երիտասարդների» ուշադրությունը կենտրոնացնել բարբառների վրա և հասնել այն բանին, որ նրանք ժողովրդական լեզուն «փրկեն Նազարյանի և նրա համախոհների «անվայել արհամարհանքից»: Այս պարագաներում ահա, չնայած իր և Նալբանդյանի բազմաթիվ ելույթներին և հենց «Հայկական լեզվի խորհուրդը» ծրագրային հոդվածին, որում այս խնդիրները հանգամանորեն հիմնավորված էին, անանուն հեղինակի «ջանքերը» կարող էին խաթարել արդեն ձևավորվող գրական լեզվի զարգացման բնականոն ընթացքը:

Սակայն, մեր կարծիքով, կար մեկ հանգամանք, որը Նազարյանին զրկում էր իր ընդդիմախոսի դեմ բանավեճ վարելու հնարավորությունից: Անշուշտ, նա չէր կարող չիմանալ, որ միմյանց հար և նման այդ հոդվածների հեղինակը Փոնդոյանն էր, ա՛յն Յովսեփ Փոնդոյանը, որը Գևորգ Աբիմյանի հետ քաղաքացիական սխրամք էր կատարել, հրատարակելով Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը և փաստորեն այն փրկել կորստից⁷⁸: Անհուն սերը երիտասարդական տարիների իր Մեծ բարե-

⁷⁷ Նույն տեղում:

⁷⁸ Յովսեփ Փոնդոյանը համալսարանական կրթություն ուներ և աչքի է ընկել իբրև մանկավարժ ու հասարակական գործիչ: Նա, միաժամանակ, աշխատակցել է «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթին և «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրին: 1863 թ. այդ ամսա-

կամի նկատմամբ և նրա անգերազանցելի վեպի լույս աշխարհի գալու երջանիկ իրողությունը բարոյական ծանրակշիռ գործոններ էին, որոնք, անկասկած, մեծ շրջահայեցություն են պարտադրել Նազարյան-բանավիճողին: Փոնդոյանին չէր կարելի դասել լրագրային բախումների այն «կորիֆեյների» շարքը, ինչպիսիք էին Նազարյանի «աննկուն» հակառակորդներ Ա. Արարատյանը, Ստ. Մանդիյանը և Յ. Չերքեզյանը: Ուստի, Նազարյանը նրան պատասխանելու խնդիրը լուծել է մեծատաղանդ հրապարակախոսի նախանձելի հնարամտությամբ: Օգտվելով Նալբանդյանի՝ Մոսկվայում գտնվելու հանգամանքից, որը 1860 թ. ամռանը կարճատև այցով Պետերբուրգից ժամանել էր Մոսկվա և պատրաստվում էր ուղևորվել Էջմիածին, Նազարյանը նրա օգնությամբ կազմել է Վարչամյանցի «Նամակը»: Այսպիսով, մենք գտնում ենք, որ Նազարյանի և Նալբանդյանի կողմից ստեղծվել է իբր Բաքվից՝ «Յուսիսափայլին» համակիր մի գործչից ստացված «Նամակ»-հոդված, որը, նրանց համոզմամբ, անհրաժեշտության դեպքում պատշաճ ըմբռնունով կվերաբերվեր կատարվածին: Իրադարձությունների ընթացքն, իրոք, հաստատեց, որ Վարչամյանցի նկատմամբ նրանց ունեցած վստահությունն անհիմն չէր: «Նամակի» տպագրությունից հետո Մսերյանները մի հոդված են հրապարակում նրա դեմ և կշտամբում, որ «Ճռաքաղի» վերաբերյալ ասելիքն իրենց հայտնելու փոխարեն նա դիմել է «Յուսիսափայլին»: Ի պատասխան այդ հանդիմանության, Վարչամյանցի բարեկամ բժիշկ Դավիթ Ռոստոմյանցը, որը միաժամանակ «Ճռաքաղի»՝ Շամախիի գործակալն էր, մի նամակով Մսերյաններին հայտնում է, որ Վարչամյանցն այդ հոդվածի համար պատասխանատվություն չի կրում, քանզի նրա ստորագրությամբ տպագրված նամակը, հետևապես և այդ նամակի «բառերն ու իմաստը» իրենը չեն: Ելնելով դրանից, Մսերյանները պահանջում են, որպեսզի Վարչամյանցը մանուկի էջերում հայտնի ճշմարտությունը: Վերջինս, սակայն, որևէ նամակ չի հրապարակում և իր վրա է առնում Ջ. Մսերյանի «Դարձված բանից» քննադատական հոդվածի հարվածները⁷⁹:

Սակայն, ի՞նչ հարցեր էին շոշափվում Վարչամյանցի «Նամակում»: Այդ «Նամակ»-հոդվածում առերևույթ քննարկվում էր «Ճռաքաղ» երկ-

գրի էջերում նա հրատարակել է երկու մեծարժեք պատմական աշխատություններ՝ Պետրոս դի Սարգիս Գիլանենցի «Ժամանակագրությունը» [1863, թիվ 2, էջ 92-112; թիվ 3, էջ 181-212] և կաթողիկոս Դովսեփ Արղությանի «Յիշատակարանը» [1863, թիվ 4, էջ 278-308; թիվ 5, էջ 321-328; թիվ 6, էջ 419-443; թիվ 7, էջ 505-519; թիվ 8, էջ 582-599] ծավալուն և փաստառատ առաջաբաններով:

⁷⁹ Տե՛ս «Ճռաքաղ», 1860, թիվ 9; 1861, թիվ 13, 15, 20:

շաբաթաթերթի խմբագիրների լեզվական քաղաքականությունը, այն խնդիրը, թե աշխարհաբարն անգոսնող հայր և որդի Մսերյաններն ի՞նչ մղումով են գրաբար հրատարակվող իրենց պարբերաթերթի լեզուն դարձրել աշխարհաբար, այն էլ այնպիսի մի խառնափնթոր գրաբարախառն աշխարհաբար, որը կարող էր վատ օրինակ ծառայել դեռևս լեզվական անհրաժեշտ պատրաստություն չունեցող լրագրողների և ընթերցողների համար: Վարչամյանցի կարծիքով, «Հյուսիսափայլը» պարտավոր է հսկել և մյուս թերթերի լեզվի անաղարտությանը, անաչառ խոսք ասել դրանց արժանիքների և թերությունների մասին: Նա միաժամանակ խնդրում է Կոմս Էմմանուելին՝ տպագրել իր նամակը և համապատասխան ծանոթագրություններով զգուշացնել ընթերցողներին՝ հեռու մնալու «Մսերյանների մատենագրական հերձվածից»:

Վարչամյանցի «Նամակը» թե՛ քննարկված հարցերի և թե՛ կառուցվածքի ու լեզվաոճական առանձնահատկությունների առումով միաժամանակ կապվում է Կոմս Էմմանուելի «Հիշատակարանի» հետ և մատնում դրանց հեղինակների նույնության փաստը: Այն գրված է Նալբանդյանի գրչին հատուկ երգիծական ոճով և փայլում է սրամտությամբ ու Մսերյանների լեզվական հայացքները գլխովին ջախջախելու վարպետությամբ: Բայց այս, ինչպես ասացինք, «Նամակի» միայն երևութական կողմն է: «Նամակի» հեղինակը Վարչամյանցի անունից, կարծեք հենց այնպես, անուղղակիորեն, բարձրացնում է նաև իբր Վարչամյանցին հետաքրքրող, սակայն, իրականում Փոնդոյանի հողվածներում արժարժված հիմնական վիճահարույց խնդիրները, իսկ Նազարյանն օգտվելով խմբագրի՝ իր իրավունքից, տողատակի ծանոթագրության ձևով անմիջապես տալիս է նամակագրին հետաքրքրող հարցերի գիտական, համակողմանի բացատրություններ:

Այսպիսով, ահա, խմբագրության կողմից ստեղծված «Նամակի» հիմնական նպատակն արտահայտվել է դրա ենթատեքստում, որը հնարավորություն է ընձեռել Նազարյանին, իբր Վարչամյանցի դեմ վարած բանավեճի քողի ներքո հերքելու Փոնդոյանի անընդունելի հայացքները և մեկ անգամ ևս հիմնավորելու գրական աշխարհաբարի մշակման անհետաձգելիությունը, որն այդ պահին համարում էր «ազգի մեծակշիռ օգուտներից մեկը»: Այս հանգամանքն է «Նամակը» զրկել հողվածի դասական միաձույլ կառուցվածքից և այն դարձրել տողատակի ծանոթագրությունների «իշխանությանը» ստորադաս նորածն մի տրակ-

տատ⁸⁰:

Նազարյանը և Նալբանդյանը Վարշամյանցի «Նամակի» միջոցով ի լուր ընթերցողների, առաջին իսկ պարբերությամբ, հաստատում էին «Հյուսիսսփայլի» պատմական դերը և նշանակությունը՝ իբրև հայ նոր գրական լեզվի լինելության առիավատյան, իբրև հայ նոր գրականության ստեղծման անմիջական և հզոր գործոն: Այս իմաստով անսահման դիպուկ է ձևակերպված «Նամակի» մուտքի խոսքը՝ գրված Կոնստանդնուպոլիս-Վարշամյանցի կողմից: Ահա այն.

«1858 թվականը արժանի է ոսկեղեն տառերով արձանագրվելու ամենայն բանասեր Հայկազնի հիշատակարանի մեջ: Հայկական նոր գրականության պատմությունը այս թվականից պիտի սկսանի յուր առաջին շրջանը: Այս թվականին ծնավ «Հյուսիսսփայլ» օրագիրը: Ոչ մի օրագիր ոչ մի ազգի մեջ այնքան ազդեցություն չէ արած գրականության վերա, այնքան բարի պտուղներ չէ բերած այսպիսի կարծ միջոցում, որքան այդ բազմարդյուն օրագիրը, որ հյուսիսից փայլելով, մի ամենևին նոր լույս թափեց մեր կենդանի բարբառի վերա, առաջին և գլխավոր պատճառ դառնալով կենդանի ազգի մեջ կենդանի լեզվով խոսելու և գրելու»⁸¹: Նազարյանը և Նալբանդյանը՝ գրական աշխարհաբարի ձևավորման իմաստուն հեղինակները, հայ ընթերցողին ավետում էին մեր իրականության մեջ կատարված պատմական մեծ երևույթի ծնունդը, XIX դ. 60-ական թվականների լուսավորական շարժման ամենանշանակալից ձեռքբերումը:

«Հյուսիսսփայլի» ուղղության հարցը լուսաբանելուց հետո ասագրի խմբագրությունն անցնում է իր հիմնական խնդրին՝ Փոնդոյանի հողվածներում արծարծված մեղադրանքների քննությանը: Ինչպես ակնհայտ դարձավ վերջինիս հողվածների համառոտագրությունից, դրանք հիմնականում հետևյալներն էին. հայոց գրական լեզուն իր զարգացումը պետք է ապրի միմիայն բարբառային-խոսակցական լեզվի հենքի վրա, այն պահպանելու ճանապարհով: Միանգամայն անընդունելի է առանձին անհատների կողմից լեզվի մշակման կամ նոր լեզու ստեղծելու որևէ փորձ, անթույլատրելի է գրաբարյան լեզվածների օգտագործումը, մինչդեռ թուրք-պարսկական խոսակցական լեզուների տարրերը, որոնք մտել են հայ բարբառների մեջ, պետք է պահպանվեն:

⁸⁰ Եթե «Նամակի» բուն բնագիրը զբաղեցնում է հասարակ շարվածքի 253 տողը, ապա Նազարյանի ծանոթագրությունները, շարված պետիտով՝ զբաղեցնում են 234 տող: Մեքենագրված տողերի հաշվարկով նամակի բնագիրը զբաղեցնում է միայն 233 տող, այնինչ, Նազարյանի տողատակի ծանոթագրությունների տողերի քանակը հասնում է 285-ի:

⁸¹ «Հյուսիսսփայլ», 1860, թիվ 11, էջ 384:

Շատ հետաքրքրական է, որ այս «Նամակում» մեծ տեղ է տրվել նաև Մսերյանների լեզվական քաղաքականությանը, որը շփման եզրեր չունեի Փոնդոյանի հարցադրումների հետ: Սակայն, Փոնդոյանին և Մսերյանին ինչ-որ չափով համախմբելով մեկ հարկի տակ, հողվածագիրները երկու խնդիր էին լուծում: Նախ նրանք պաշտպանության ներքո էին վերցնում աշխարհաբար՝ Մսերյանների հարվածներից և միաժամանակ, սատարում գրաբարի իրավունքները՝ բարբառայնության նվիրյալների հարձակումներից: Հարցի էությունը նրանում էր, որ Մ. Մսերյանը 1856 թ. գրաբարով տպագրված «Յիշատակարան Լազարեան տոհմի» գրքի առաջաբանում հայտարարում էր, թե անարժան է համարել այն գրել աշխարհաբար, որովհետև «որչափ համեղական և ազդոյ և գեղեցիկ առաջինն է, այնչափ անհամ է վերջինն, թոյլ, տգեղ, անհեթեթ և զուրկ միանգամայն, 'ի կարի կարևորացն կանոնաց ուղղախօսութեան»⁸²: Հակադրվելով այս տեսակետին, Նալբանդյան-Վարշամյանցը յուրովի է հրամցնում Փոնդոյանի ղեկավար այն միտքը, թե աշխարհիկ լեզուն յուրաքանչյուր մտածող և ընթերցող հայի կողմից ոչ միայն չի համարվում անհամ, թույլ, տգեղ և անհեթեթ, այլև «կարող է փոխ տալ մեռած գրաբարին և՛ համ, և՛ ազդուություն, և՛ գեղեցկություն, և՛ ուղղախոսության կարի կարևոր կանոններ: ...Մեր խոսքին հավատալու համար,— շարունակում է Նալբանդյանը,— խնդրում ենք պատվելի մագիստրոսից յուր խրթին հայկաբանության բարձրությունից մի փոքր ցած իջանել և առանց կանխակալ դատողության, մտադրությամբ կարդալ ևս. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը և մեր այժմյան օրագիրները»⁸³:

Նազարյանը տողատակում, արդեն իր կողմից, մերժում է և՛ Մսերյանների, և՛ կարծեցյալ Վարշամյանցի (այն է՝ Փոնդոյանի) տեսակետները: Նա ցավ է հայտնում, «որ ստիպված է ասել երկու կողմերին ևս, թե շեղված են ճշմարտության ճանապարհից, հառաջ բերելով մինը բարենտաբար և մյուսը, անիմաստաբար խոսք ու զրույց, որ ոչինչ արժեք չունին գիտության դատաստանի առաջև»: Ղեկավարվելով միմիայն գիտական չափանիշներով, նա հայտարարում է, որ հայոց աշխարհաբար լեզուն, առանց որևիցե մշակության չի կարող մեռած գրաբարին տալ գեղեցկություն և ուղղախոսության շատ հարկավոր կանոններ: Ավելին, նա խոստովանում է, որ մերժում է նաև «այն ռամկախոսությունը, որի վերա հիմնած է մեր շատ սիրելի հիշատակի բարեկան Ապովյանի

⁸² [Յիշատակարան կենաց եւ գործոց Մեծանուն պայազատաց Լազարեան տոհմի..., էջ X:]

⁸³ «Ղյուսիսափայլ», 1860, թիվ 11, էջ 389:

«Վերջ Դայաստանի» գիրքը: Մենք չենք խոսում այստեղ դորա մեծ խորհրդավոր բովանդակության վերա»,- միաժամանակ ավելացնում է նա: Նազարյանը գտնում է, որ «ոչինչ համեմատություն չկա գրոց, կարելի է ասել տասն դար մշակված լեզվի և այժմուս աշխարհաբարի մեջ, եթե առնու՛նք դորան լոկ այնպես, ինչպես որ կենդանի է անկիրթ ռամկի բերանում, առանց որևիցե դպրութենական մշակության: Այդտեղ գրոց լեզուն, թե շատ և թե փոքր մշակված մեր հին հեղինակների ձեռքով, երևում է մի պերճ թագավոր, և աշխարհաբարը, ինչպես նա գործ է ածվում բուն ռամկի բերանում, հազիվ թե արժանի նորա ոտքը համբուրելու»: Նա հայտնում է նաև, որ այս չի նշանակում, թե ինքը պաշտպանում է հին լեզվի իրավունքը, «ոտնակոխ առնելով աշխարհաբարը». ընդհակառակը, շեշտում է, որ իր ամբողջ գործունեության ընթացքում ինքն ապացուցել է, որ «ոչ մի հայ մեր օրերում այնքան բազմամասնյա հանդես տված չէր այդ աշխարհաբարին, ինչքան մեք, «Յուսիսափայլի» հրատարակողը»⁸⁴: Այսուհանդերձ, ինչպես Մ. Մսերյանը, Նազարյանը նույնպես գտնում էր, որ աշխարհիկ լեզուն անկանոն է և թույլ, ինչպիսին է և «բազմությունը», «ուրեմն և անհնարին՝ մատենագրել այդ լեզվով ազգի դաստիարակության և լուսավորության համար»: Փոնդոյանին պատասխանելով Մսերյանի հարցադրման միջոցով, Նազարյանը գտնում է, որ ժամանակի անհետաձգելի պահանջն է ոչ թե ձեռք մեկնել «մեր հին օրերի մեռած գրախոս լեզվին», որը ոչինչ հարակցություն չունի ազգի ներկա կյանքի հետ, այլ ժամանակի մեծ և կարևոր խնդիրն է համարում, «որ հրաժարվելով բազմության վայրենացած լեզվից, մշակվի փոքրիշատե մաքուր մնացած և քաղաքացի հասարակության մեջ գործածական աշխարհաբարը, որ դորանով այժմյան սերունդը ստանա մի հարմարավոր գործի կրթության և լուսավորության»:

Ինչ վերաբերում է Փոնդոյանի այն մեղադրանքին, թե Նազարյան-գործիչը և կամ որևէ այլ անհատ իրավունք չունեն նոր լեզու ստեղծելու կամ մշակելու, ապա «Յուսիսափայլի» խմբագիրը կրկին մեկնաբանում է գրական աշխարհաբարի մշակման անհրաժեշտությունն ու իր տեսակետն այդ հարցում, հերքելով միանգամայն նոր լեզու ստեղծելու իր՝ կարծեցյալ հավակնությունը:

Նա **սխալ դատողություն** է անվանում այն միտքը, թե քանի որ ժողովրդական լեզուն մշակագործվելով կորցնում է իր ազգային հարա-

⁸⁴ Նազարյանի ծանոթագրություններից վերցված քաղվածքները տե՛ս նույն տեղում, էջ 389-394:

գատությունը, ուրեմն «պիտո է ամենկին անմշակ մնար, որ պահպաներ յուր ազգայնությունը»: «Զէ.– առարկուն է Նազարյանը,– մատենագի՛րը կարող է միայն մշակել, կանոնել, գեղեցկացնել, ճոխացնել մի արդեն տված նյութ լեզվի, բայց նա չունի իրավունք լեզուն փոփոխել. և այդ բանը արած չեն մեր հայոց հեղինակքը»⁸⁵:

Նազարյանն իր մեծարժեք ծանոթագրություններում ուշադրություն է հրավիրում նաև այն իրողության վրա, որ լեզուն և մատենագրությունը, «այս երկու մեծ հայելի պատկերքը ազգային կյանքի», գտնվում են մշտական փոփոխության մեջ, ուստի և, բնականաբար, նոր կյանքը պահանջում է նոր կարգ, նոր օրենք, նոր լեզու, նոր մատենագրություն: Ահա թե ինչու, «միտ դնելով նոր Եվրոպայի մատենագրության ընթացքին», ըստ որի ամենայն ազգի նորոգ շինության համար օգտագործվում են շատ նյութեր հնության միջից, «այդպես է ընթացել և միշտ «Յյուսիսափայլի» հրատարակողը»: Նա դարձյալ Փոնդոյանին էր պատասխանում, բացատրելով, որ իր կողմից «հին լեզվի բոլոր պատվական նյութքը գործ են դրված նոր աշխարհաբարի մեջ, հետևելով լեզվի ընդհանուր լոգիկային և դուրս ձգելով ռամկական տաճիկ ձևերը խոսակցության, որ մտել են հայերի մեջ իբրև մի տխուր ժառանգության տաճկական իշխանության»⁸⁶:

Նալբանդյանն իբրև նամակագիր, իր հերթին, մերժում է Մսերյանների որդեգրած «աշխարհաբարը», անուղղակիորեն պատասխանում Փոնդոյանի հարցադրումներին: Եթե գրաբարով գրող հեղինակների համար անհամեմատ դյուրին է հարազատ մնալ գրաբարի հին, քարացած ձևերին, նշում է նա, ապա շատ ավելի դժվար է գրել «անդադար շարժողության մեջ գտնվող» կենդանի ժողովրդի լեզվով: Փույթ չէ, որ աշխարհաբար լեզվի կանոնները դեռևս տպագրված չեն «Քերականություն» խորագիրը կրող գրքի մեջ, որն ազգային գրականության վերջին խնդիրներից է: Սակայն, կրթված և մտածող հեղինակներն իրենց գիտելիքների և նուրբ ճաշակի շնորհիվ կարող են հարդարել և կոկել «անգրագետ ժողովրդի ավերած ու տգեղացրած նյութը լեզվի»: Այս իմաստով նկատի առնելով Մսերյանների «Ճառքաղի» աշխարհաբար կարծված «ինքնահնար ու անկանոն լեզուն», Նալբանդյանն անուղղակիորեն, բայց բառացի, բնականաբար, առանց անվան հիշատակության, մեջբերում է Փոնդոյանի ասույթներից մեկը, որը նա կրկնում է իր հողվածներում: «Եթե մի քանի հայք,– գրում է Նալբանդյանը,– հանիրավի համարում են «Յյուսիսափայլը» աշխարհաբար լեզվի խանգարիչ, այդ

⁸⁵ Նույն տեղում, էջ 394:

⁸⁶ Նույն տեղում:

օրենքով ո՛րչափ ևս առավել «ճռաքաղը» պիտի համարվի և՛ գրաբարի, և՛ աշխարհաբարի ավերիչ»⁸⁷:

Կարծում ենք, Վարշամյանցի «Նամակի» հրապարակումն այն վճռական դերն է կատարել, որ Փոնդոյանը ոչ միայն վերջնականապես համոզվելով Նազարյան-գիտնականի հարցադրումների ճշմարտացիության մեջ, այլև ըմբռնելով նրա ազնիվ պահվածքի խորհուրդը, աննպատակահարմար է գտել շարունակել բանավեճը նրա հետ և այս պայթարուն իր դերն ավարտված համարել⁸⁸:

Հովսեփ Փոնդոյանի խոհեմությունը, սակայն, քիչ է օգնում Նազարյանին: Հետագայում նույնպես, աննահանջ ու համառորեն շարունակում էին գործել նրա հակառակորդները, որոնց հողվածներն ու վտանգավոր սադրանքները տապալում են ոչ միայն Նազարյանի լուսավորական որոշ ձեռնարկումները, այլև նյութական ու բարոյական խոչընդոտներ հարուցում նրա խմբագրական աշխատանքի համար:

Նալբանդյանի ձերբակալությունից հետո մենակ և անօգնական Նազարյանը 1863 թ. ժամանակավորապես ընդհատում է «Հյուսիսափայլի» հրատարակությունը: 1864 թ. նա թեև կարողանում է շարունակել ամսագրի տպագրությունը, բայց 1865 թ., այնուամենայնիվ, հարկադրված դադարեցնում է լրագրային գործունեությունը:

Ինչ վերաբերում է Վարշամյանցի «Նամակին», ապա այն Նազարյանի խմբագրական-հրապարակախոսական գործունեության բացառիկ հետաքրքրական էջերից է, պրոֆեսիոնալ լրագրողի ինքնատիպ մի հնարանք, որն այսօր իսկ կարող է զարմանք ու հիացմունք պատճառել հայ լրագրության մասնագետներին:

⁸⁷ Նույն տեղում, էջ 395:

⁸⁸ Ուշադրության արժանի է նաև Վարշամյանցի «Նամակի» դասական ասույթ-բնաբանը՝ «Պատուոն բարեկամս է, բայց է՛լ ավելի մեծ բարեկամս է ճշմարտությունը»: Այս բնաբանը, որն ամենայն իրավամբ կարելի է հողվածի հիմնական բաժնի՝ ենթատեքստի վերնագիրը համարել, անշուշտ, ուղղված էր մի մարդու, որին հարգելով հանդերձ, խմբագրությունը հարկադրված էր ցավ պատճառել նրան:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԾԱԾԿԱՆՈՒՆԵՐԻ ՇՈՒՐՋ*

Միքայել Նալբանդյանի կեղծանունների վերծանմանը նվիրված հոդվածում բանասիրական գիտությունների դոկտոր Սերգեյ Դարոնյանը փորձում է ապացուցել, որ 1860-1862 թթ. «Հյուսիսափայլ» ամսագրում վեց կեղծանուններով տպագրված յոթ հոդվածների հեղինակը Նալբանդյանն է⁸⁹: Հոդվածի մուտքի խոսքում նա հիշեցնում է, որ այդ ծածկանունների վերծանման հարցով առաջինը զբաղվել է գրականագետ Ասատուր Ասատրյանը, որը բոլոր ծածկանուններն անվերապահորեն վերագրել է Նալբանդյանին⁹⁰:

Հոդվածում բերվում է նաև ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի կարծիքն այն մասին, որ բացառությամբ «**Կամսար Խաչատուրյան**», գուցե նաև «**Կիրակոս Մարգարյան**» ծածկանունների, մյուսները, հավանաբար, պատկանել են Ստեփանոս Նազարյանին: Ս. Դարոնյանը, սակայն, բաժանում է Աս. Ասատրյանի տեսակետը և նոր փաստարկներով ջանում այն հիմնավորել:

Աս. Ասատրյանի երկրորդ հոդվածը, որը նվիրված է բացառապես «Կամսար Խաչատուրյան» ծածկանվան քննությանը, միանգամայն համոզիչ է: Հոդվածագիրը թե՛ «Նամակի» լեզվաոճական առանձնահատկությունների վերլուծությամբ, թե՛ «Նամակից» քաղված առանձին մտքերը՝ Նալբանդյանի հոդվածների համապատասխան հատվածների հետ համադրելու միջոցով, ապացուցում է, որ «Կամսար Խաչատուրյան» ծածկանունը պատկանում է նրան:

Միաժամանակ գտնում ենք, որ «Մարտիրոս Ասլանբեկ» ծածկանունով տպագրված հոդվածը ևս կարող էր պատկանել Նալբանդյանի գրչին: Այս ծածկանման վերաբերյալ Ս. Դարոնյանի փաստարկները միանգամայն հիմնավորված են: Ինչ վերաբերում է «**Կիրակոս Մարգարյան**» «**Պողոս Ղուկասյան**», «**Թյությունջի Հակոբ Սերոբյանց**» և

* Տպագրվել է՝ ՀՍՄՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, թիվ 3, էջ 59-69; թիվ 5, էջ 63-73:

⁸⁹ Ս. Դարոնյան, Մ. Նալբանդյանի կեղծանունների շուրջ.– ՀՍՄՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ «ԼՀԳ»), 1984, թիվ 12; 1985, թիվ 3:

⁹⁰ Աս. Ասատրյան, Մ. Նալբանդյանի գրական ծածկանունների հետքերով.– «Գրական թերթ», 23. X. 1954, *ունյի* Միքայել Նալբանդյանի ստեղծագործության նորահայտ էջերից մեկը.– «ՊԲՀ», 1960, թիվ 3:

«Ճատուր Զեւեպի» ստորագրությամբ տպագրված հինգ հոդվածին, ապա մեր խորին համոզմամբ, դրանց հեղինակը չէր կարող լինել Նալբանդյանը:

Նալբանդյանագետ Ս. Դարոնյանի հետ մեր տարակարծությունները բխում են հարցի քննության մեթոդաբանական ակունքներից: Նրա հոդվածի թե՛ մուտքի, թե՛ ավարտի խոսքից ակնհայտ է, որ հեղինակը հետազոտությունները կատարել է գերազանցապես Նալբանդյանի հրապարակախոսության լեզվի և ոճի շրջանակներում⁹¹, մի բան, որը հաստատվում է նաև հոդվածի շարադրանքով: Սակայն, լեզուն և ոճը առեղծվածների բացահայտման անհրաժեշտ հանգամանքներից միայն մեկը կարող են լինել: Տվյալ պարագայում մենք մեծ նշանակություն ենք տալիս հետևյալ հանգամանքներին, որոնցով առաջնորդվել ենք:

1. Ե՞րբ է գրվել հոդվածը, և հեղինակը, որին այն վերագրվում է, որտե՞ղ էր գտնվում այդ ժամանակ: Գործնականորեն նա կարո՞ղ էր այն գրել, թե ոչ:

2. Պատմական կոնկրետ ժամանակահատվածի ի՞նչ իրադրությամբ արդյունք է հոդվածը և որքանո՞վ է այն առնչվում ենթադրյալ հեղինակի տվյալ պահի զբաղումներին:

3. Կարծեցյալ հեղինակն իր քաղաքական հավատամքի բերումով կարո՞ղ էր քննարկվող հարցերը շոշափել այն տեսանկյունով, ինչպես դրանք արտացոլվել են փաստաթղթում:

4. Ի՞նչ են բացահայտում հոդվածի և հավանական հեղինակի աշխատությունների լեզվաոճական յուրահատկությունների համեմատության արդյունքները:

Փորձենք հիմնավորել մեր առարկություններն ըստ առանձին հոդվածների՝ դրանց տպագրության ժամանակագրական կարգով:

ԿԻՐԱԿՈՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ. Այս ստորագրությամբ՝ «Նամակ առ հրատարակողը» թղթակցությունը տպագրվել է 1860 թ.⁹²: Նամակի գրության առիթը «Ճռաքաղի» խմբագիրներից մեկի՝ Ջարմայր Մսերյանի (Սկայորդի) «Մեղու Յայաստանի» թերթում տպագրած «Մասնավոր թղթակցությունն էր», որտեղ «Յյուսիսափայլի» երդվյալ հակառակորդն արդեն երկրորդ անգամ հայտնում էր, թե «Կոմս Էմմանուելն այսուհետև գործակից լինելու չէ՝ պ. Նազարյանցին»⁹³: Այնուհետև՝ իբրև «զվարճալի անցք», հայտնում էր, թե Ա. Սուլթանշահի՝ «Յյուսիսափայլում» տպագրված «Յայոց ազգի լուսավորիչքը» պիեսը թարգմանություն է

⁹¹ Ս. Դարոնյան, նշվ. աշխ.– «ԼՂԳ», 1984, թիվ 12, էջ 31; 1985, թիվ 3, էջ 62:

⁹² «Յյուսիսափայլ», 1860, թիվ 8:

⁹³ «Մեղու Յայաստանի», 1860, թիվ 17, էջ 130:

«Սովորեն են նիկ» ամսագրից: Հեռանալով «զվարճալի ոճի» սահմաններից՝ Ջարմայր-Սկայորդին մուտք է գործում բանասարկության ոլորտը. «Այս բանս երկբայական է կացուցանում և «Հյուսիսափայլի» մյուս հոդվածների հեղինակական գրված լինելը»⁹⁴: Այս թղթակցության մեջ Ջ. Ստերյանը գրախոսում է Եզոպոսի առակների հայերեն թարգմանությունը (կատարված Գամառ-Քաթիպայի կողմից) և, վերջում, հարևանցիորեն, պատմում Մոսկվայի հայոց եկեղեցում տեղի ունեցած մի անցքի մասին: Այստեղ, պատարագի ժամանակ, Նազարյանի որդին չի կարողանում ողջույն տալ՝ համաձայն եկեղեցական ծեսի: Սկայորդին նշում է. ներկաներից մեկի այն հարցին, թե ո՞վ է այդ երիտասարդը, հարևանը պատասխանում է. «Նա մեր մեծ լուսավորչի որդին է, որ եղբոր աչքի եղած փուշը տեսանում է, իսկ յուր աչքի մեջ եղած գերանը չէ՛ տեսանում»:

«Հյուսիսափայլը» պատասխանում է այս անպատեհ հոդվածին: Նալբանդյանն իր «Հիշատակարանի» վերջին գլխում ի պատասխան Ջարմայրի տարածած լուրերին՝ հայտնում է «Հյուսիսափայլին» իր նվիրվածության և հետագայում ևս Նազարյանին համագործակցելու վճռի մասին: Թշնամություն և կատաղի նախանձ. ահա թե ինչպես է Նալբանդյանը բնութագրում Ջարմայր-Սկայորդու այն պնդումները, թե իբր «Հյուսիսափայլը» պետք է դադարի կամ թե ինքն այլևս չպետք է համագործակցի Նազարյանին: Նալբանդյանն այնուհետև, Գամառ-Քաթիպայի թարգմանությամբ լույս տեսած Եզոպոսի առակների կապակցությամբ, մի քանի նախադասությամբ զավեշտի է ենթարկում Սկայորդի-քննադատի տեսական ողորմելի գիտելիքները: Եվ միայն այդքան: «Հյուսիսափայլի» այս համարի տպագրությունից անմիջապես անց, հունիսի 27-ին, արտասահմանյան ուղևորության հետ կապված իր գործերով Նալբանդյանը մեկնում է Նոր Նախիջևան, իսկ այնտեղից՝ Անդրկովկաս:

Ծագում է օրինաչափ մի հարց. ի՞նչն էր խանգարում Նալբանդյանին, մի քանի խոսքով պատասխանել Սկայորդուն՝ Նազարյանի որդու հասցեին արված շաղփաղանքի առիթով: Բայց նա այդ չի արել: Նալբանդյանը, հավանաբար, գերադասել է չխոսել այն հարցի մասին, ինչը, թեև նենգ մեկնաբանությամբ, այնուամենայնիվ, **իրական հիմք** ուներ: Նա իրագեկ էր, որ Նազարյանի որդին անգամ հայերեն չգիտի և միանգամայն հնարավոր է, որ եկեղեցում իսկապես վրիպում թույլ տված լիներ: Ի՞նչը և ինչպե՞ս պետք է հերքեր ճանաչված հրապարակախոսը,

⁹⁴ Նույն տեղում, էջ 131:

որին հավատ էր ընծայում հայ ընթերցողը: Ի դեպ, շատ հատկանշական է, որ նա չի փորձում առարկել նաև իր բարեկամ Ա. Սուլթանշահի պիեսի հասցեին Ջարմայրի արած ակնարկին և դարձյալ նույն պատճառով. Ջարմայրն իրավացի էր:

Ուրեմն, ինչպե՞ս է ստեղծվել Կիրակոս Մարգարյանի հերքողական նամակը: Հավանաբար, Նալբանդյանի պատասխանը չի գոհացրել Նազարյանին և, կարելի է ենթադրել, որ վիրավորված ինքնասիրության պաշտպանության մտադրությամբ՝ նա վճռել է հանդես գալ առանձին հոդվածով: Նազարյանը թերևս հույս ուներ ճակատային այդ հարվածով չեզոքացնել հայր ու որդի Մսերյանների հարձակումները, բայց ավա՜ղ, նրանց հարձակողական եռանդն անսպառ էր: Սկայորդին «Մեղուի» հետագա համարներում նույնպես հայիոյուն էր Նազարյան-հեղինակին, անդամահատում նրա հոդվածները և վեր հանում դրանցում տեղ գտած կարծեցյալ սխալները:

Ինչևիցե, Նալբանդյանի՝ մայիսին գրած պատասխանին հետևում է Կ. Մարգարյանի՝ հունիսին գրած հոդվածը, որը տպագրվում է օգոստոսի համարում («Հյուսիսափայլի» 8-րդ համարի գրաքննական թույլտվությունը ստացվել էր հունիսի 27-ին): Բայց անդրադառնա՞նք նամակին: Մարգարյանը պատմում է, որ հայ գիմնագիտի հետ տեղի ունեցած միջադեպի օրը, նույն պատարագի ժամանակ իրեն անվայելուչ է պահել Սսեր Մսերյանը: Տարիներ շարունակ գծոված լինելով Մոսկվայի հայոց եկեղեցու քահանայի հետ, նա, ծեսի կարգին հակառակ, ոչ թե մոտենում է քահանային՝ նրանից անձամբ ողջույն առնելու համար, այլ իր փոխարեն ուղարկում ճենարանական մի աշակերտի: Պատարագին ներկա գտնվող երկու աշակերտ, պայմանական անվանումով՝ Շնավոնը և Ղևին, հայտնում են իրենց վրդովմունքն այն առիթով, որ ճենարանի իրենց կրոնուսույցը խախտում է եկեղեցական ծեսի կանոնները:

Ահա Նալբանդյանին վերագրվող նամակի ամբողջ էությունը: Իսկ ինչպե՞ս է այն գրված: Վեր հանելու համար Մսերյանի խոսքի և գործի միջև եղած հակասությունը, հոդվածագիրը 14 մեջբերում է կատարում աստվածաշնչյան այն բարոյախրատական քարոզներից, որոնք կրոնուսույցը վկայակոչում էր իր դասերի ժամանակ: Առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, որ ութ էջանոց այս հոդվածի երկու էջից ավելին հատկացված է միայն կրոնական ասույթների: Բայց չափի զգացման դեմ կատարված այդ մեղանչումը հասկանալի է դառնում, երբ ծանոթանում ենք Նազարյան-Մսերյաններ բանավեճերի պատմությանը: Դեռևս 1858 թ. Մ. Մսերյանը «Մեղու Հայաստանի» թերթում **Վահան Արամյան** ստորագրությամբ տպագրել էր մի հոդվածաշար, որում քննա-

դատում էր «Յուսիսափայլի» առաջին համարի նյութերը և, մասնավորապես Նազարյանի «Յայկական լեզվի խորհուրդը» ծրագրային հոդվածը: Այս հոդվածից առանձնացնելով 14 հատված՝ հայր-Մսերյանը քննարկում էր դրանք և վեր հանում, իր կարծիքով, դրանցում արտացոլված դատապարտելի մտքերը: Այսպես, Նազարյանը մեղադրվում էր հայոց լեզուն աշխարհի մեծնաառաջին լեզուն չընդունելու, գրաբարը մեռած լեզու համարելու, մի «անզգաստ և անհեռատես երիտասարդի հետ» ազգի գործիչներին պարսավելու համար և այլն⁹⁵:

Կարծում ենք՝ Կիրակոս Մարգարյան ստորագրությունը կրող հոդվածը գրել է Նազարյանը: «Յուսիսափայլի» խմբագիրը, որն առանձին հոդվածով դեռևս չէր պատասխանել Մսերյանին, այժմ հատուցում էր իր պարտքը, ներկայացնելով Մսեր-կրոնուսույցի բարոյական դատապարտելի վարքագիծը և միաժամանակ իբրև ժուռնալիստական հնարանք՝ հոդվածում մեջբերված 14 ասույթներով հիշեցնում նրա արգահատելի հոդվածը՝ 14 մեղադրականով: Սակայն, այդ հոդվածը չի պարունակում գաղափարական կամ գրական-հասարակական նշանակություն ունեցող այնպիսի մի պրոբլեմ, որին Նալբանդյանն իր անսահման զբաղվածության պայմաններում ժամանակ հատկացներ:

Յիրավի, հիշենք այդ փաստաթղթի բուն ոգին, որն արտահայտված է Մսերից դժգոհություն հայտնող աշակերտների խոսակցության ժամանակ. «Մեք դժբախտաբար վիճակված գոլով այսպիսի կրոնուսուցչի դաստիարակության, մնացել ենք անտեղյակ, տգետ, ի՞նչ բանի մեջ (վա՛յ մեզ), մեր կրոնի ու հավատի ուսման մեջ»: Գիմնագիտի՝ ողջունել չիմանալու մեղքի համեմատությամբ, նրանք գտնում են, որ կրոնուսույցի «գնացքը ընդդեմ քրիստոնեական հավատի... մահու չափ աններելի մեղք է»: Ի լրումն այս ամենի՝ հոդվածագիրը Ջարմայրին է վերադարձնում նրա ծաղրը. «Սկայորդին ահագին գերանը տեսել չէ և բննում է չնչին շյուղերը»⁹⁶:

Կիրակոս Մարգարյանի նամակն ընդգծված անձնականության բնույթ է կրում, որին իբրև բնաբան կարող էր խիստ բնորոշ լինել «ակն ընդ ական...» ասույթը:

Մի քանի խոսք Ս. Դարոնյանի հիմնավորումների մասին:

1. Ապացուցելու համար, որ Կ. Մարգարյանը Նալբանդյանի կեղծանունն է, Ս. Դարոնյանը, ինչպես և Աս. Ասատրյանը, այն միտքն է հայտնում, թե նամակագիրը խոսելով հետագայում իր գրելիք առավել

⁹⁵ Նույն տեղում, 1858, թիվ 24, 25, 35:

⁹⁶ «Յուսիսափայլ», 1860, թիվ 8, էջ 177:

ընդարձակ հողվածի մասին, նկատի ունենալով Վարչամյանցի նամակը⁹⁷: Այս առիթով Ս. Դարոնյանը մեկ անգամ ևս անդրադառնում է Նալբանդյանի «Վարչամյանց» ծածկանվան հարցին և բավականին հաջող հիմնավորում այն տեսակետը, թե «Վարչամյանց» ծածկանունով հանդես է եկել Նալբանդյանը⁹⁸: Բայց սա ոչնչով չի օգնում գործին, քանզի հարցի էությունը նրանում է, որ Վարչամյանցի նամակը կազմվել էր Նալբանդյանի և Նազարյանի համատեղ ջանքերով, թերևս նրանց թղթակից Վարչամյանցի նախնական նամակի հենքի վրա⁹⁹: Եթե հաշվի առնենք այս հանգամանքը, ապա Նազարյանը նույնպես իրավունք կստանա հանդես գալու «Կ. Մարգարյան» ծածկանունով ու նաև իբրև խմբագիր՝ լիիրավ հայտարարելու, որ առաջիկայում Մսերի դեմ պետք է տպագրի ավելի ծավալուն մի հոդված:

2. Ս. Դարոնյանն այն կարծիքն է հայտնում, որ Կ. Մարգարյանի նամակի առիթով հայր և որդի Մսերյանները, նամակի հեղինակին անվանելով «Նորածին Կիրակոս» կամ Շնավոնի և Ղևիի մասին ասելով, թե նրանք «դեռ չեն ծնված», «բացահայտորեն ակնարկում էին ամենահաս կոմս Էմմանուելին»: Դրան հետևում է ավելի ընդհանրացված մի հայտարարություն, ըստ որի՝ «արդեն ժամանակակիցները կռահում էին, թե ո՞վ էր թաքնվում «Կիրակոս Մարգարյան» ստորագրության տակ»¹⁰⁰: Նախ Ս. Դարոնյանի հոդվածից բնավ ակնհայտ չի դառնում, թե ժամանակակիցներն ինչի՞ց էին կռահում այդ զաղտնիքը: Երկրորդ՝ Շնավոնի և Ղևիին համարելով **դեռ չծնված**, Մսերը նկատի ունենալով այն, որ այդ անունները ոչ թե իրական, այլ մտացածին են: Ինչ վերաբերում է **«Նորածին Կիրակոս»** անվանմանը, ապա Ջարմայան

⁹⁷ Վերը նշված հոդվածում Աս. Ասատրյանը հիմնականում քննության է առել «Կիրակոս Մարգարյան» ծածկանվան հետ կապված խնդիրը, բայց բանասիրական որևէ հիմնավոր փաստով չի հաստատել այդ վարկածը: Տե՛ս Աս. Ասատրյան, Ս. Նալբանդյանի գրական ծածկանունների հետքերով:

⁹⁸ Ս. Դարոնյանը վկայակոչում է այն փաստը, որ Նալբանդյանը «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսը» պամֆլետում Մսերին է վերագրել մի արտահայտություն, որը, բազմիցս կրկնվելով Վարչամյանցի նամակում, դարձել է դրա լեյտմոտիվը: Քանի որ «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսն» անտիպ էր, իրավացիորեն նկատում է Դարոնյանը, ապա այդ արտահայտությունը Վարչամյանցի նամակում կարող էր օգտագործել միմիայն Նալբանդյանը: Այս հետաքրքրական դիտողությամբ հանդերձ, Դարոնյանն այստեղ թույլ է տալիս մի էական վրիպում: Նալբանդյանի կողմից Մսերին «պարտադրված» այդ ասույթն իրականում պատկանում էր Մսեր Մսերյանի գրչին: 1856 թ. Մոսկվայում հրատարակված Մսերի՝ «Յիշատակարան կենաց եւ գործոց Մեծանուն պայազատաց Լազարեան տոհմի» աշխատության առաջաբանից վերցնելով այդ խոսուն արտահայտությունը, Նալբանդյանը, այն բազմիցս կրկնելով, զավեշտի է ենթարկում Մսերյանի տեսակետը գրաբար-աշխարհաբար լեզուների հարաբերության հարցում:

⁹⁹ Տե՛ս Մ. Գ. Մխիթարյան, Նորից Սարգիս Վարչամյանցի նամակի առթիվ:

¹⁰⁰ Ս. Դարոնյան, նշվ. աշխ.— «ԼՂԳ», 1984, քիվ 12, էջ 34:

այդ հորինել էր իբրև պատասխան՝ Կ. Մարգարյանի «Նամակում» օգտագործված «Նորամանուկ Սկայորդի» վիրավորական բառախաղին:

3. Ս. Դարոնյանի այն ենթադրությունը, թե Կիրակոս Մարգարյանի անունը ստեղծվել է «Ոչ Մարկոսը և ոչ Կիրակոսը» արտահայտությունից, որը հաճախ է օգտագործել Նալբանդյանը, թույլ հիմնավորում է: Այդ արտահայտությունն օգտագործել են շատերը, այդ թվում Ստ. Նազարյանը և Գ. Տեր-Յովհաննիսյանը:

4. Կ. Մարգարյանի նամակը կրում է «11.VI.-1860, Մոսկվա» նշումը: Ս. Դարոնյանը «մտացածին» է համարում այս տվյալները և հայտարարում, թե նամակը «գրելու պահին Ս. Նալբանդյանը գտնվում էր Պետերբուրգում և ոչ թե Մոսկվայում»¹⁰¹: Բայց ի՞նչ հիման վրա: Ինչպես ասում են՝ փակագծերը չեն բացվում: Մեզ մնում է վերհիշել Նալբանդյանի՝ Պետերբուրգ-մոսկովյան կյանքի վերջին ամիսների օրակարգը:

1860 թ. գարնանը Նալբանդյանը Պետերբուրգում սաստիկ զբաղված էր: Նա քննություններ էր հանձնում արևելագիտության թեկնածուի աստիճան հայցելու համար և գրում ավարտական թեզ, որը, ի դեպ, պաշտպանում է հունիսին: Միաժամանակ նա գրում էր «Հիշատակարանի» վերջին, մեծածավալ գլուխը, որտեղ պատասխանում էր Սկայորդու զրպարտություններին, շրջանցելով Նազարյանի որդու հարցը: Ի վերջո, Նալբանդյանը նախապատրաստվում էր մի շատ պատասխանատու ճանապարհորդության, որը նույնպես ժամանակ էր խլում նրանից: «Կ. Մարգարյանի» նամակ-հոդվածը նա չէր կարող գրել Պետերբուրգում ոչ միայն զբաղվածության, այլև այն պատճառով, որ հենց մայիսին էր շարադրել «Հիշատակարանի» վերջին գլուխը, որի համար չէր նախատեսել Մոսկվայի եկեղեցում տեղի ունեցած անցուդարձի նկարագրությունը¹⁰²:

Մենք հրատապ որևէ առիթ չենք տեսնում այն բանի համար, որ Նալբանդյանը հունիսին կրկին անդրադառնար Մսերյանների հյուսած կոպիտ կռվախաղին: Ինչ վերաբերում է հոդվածը Մոսկվայում գրելու հնարավորությանը, ապա այդ նույնպես անհավանական ենք համարում: Նալբանդյանը Մոսկվա է մեկնել հունիսի 16-ին: Նրա տրամադրության տակ կար միայն տասն օր և հազիվ թե այդ կարճ ժամանակամիջոցում, արտասահման մեկնելու նախօրյակին, նա ժամանակ գտներ գրելու թե՛ Վարշայանցի ստորագրությամբ լույս ընծայված բանավի-

¹⁰¹ Նույն տեղում, էջ 36:

¹⁰² «Յյուսիսափայլի» 6-րդ համարի գրաքննական թույլտվությունը ստացվել է 1860 թ. մայիսի 30-ին:

ճային ծանրակշիռ հողվածը և թե՛ Կ. Մարգարյանի՝ ծավալով փոքր ու գաղափարական տեսակետից խղճուկ նամակը: Թեև Նազարյանը խոցված էր և մտահոգ, բայց Նալբանդյանի խիղճը հանգիստ էր, որովհետև հունիսյան համարում ինչպես հարկն է պատասխանել էր և՛ Դ. Չերքեզյանին, և՛ Ջ. Մսերյանին:

Վերջում հիշենք «Մեղու Հայաստանի» թերթի թղթակցություններից մեկից քաղված մի վկայություն, որի հեղինակը՝ ոմն Անդրեաս Պետրոսյան, մեր հանոգմամբ նույն ինքը՝ Սկայորդին, անուղղակիորեն հաստատում է, որ նամակի հեղինակը Նալբանդյանը չէր: Խոսելով մեզ հետաքրքրող նամակի մասին, նա գրում է. «Կոմսը այնտեղ չէր», որ մին երազ հորիներ կամ մին այլաբանական վեպով թեթևացներ գիմնագիստի տգիտությունը ազգային կրոնագիտության մեջ (Ամերիկայումը ևս գիտեն, թե Կոմս էմմանուելը յուր մեծ ճանապարհորդության մեջ է): Բայց այնտեղ էր Կիրակոս Մարգարյանը, որ թեպետ կոմս չէ և **դորանով միայն զանազանվում է** էմմանուելից, սակայն շատ լուսավորված և դաստիարակված մարդ է»¹⁰³ (ընդգծումները մերն են – Մ. Մ.): Արդյոք ակնարկը չի՞ վերաբերում Նազարյանին, որն էմմանուելից «զանազանվում էր» միայն կոմսի տիտղոս չունենալով, իսկ իրականում «շատ լուսավորված և դաստիարակված մարդ էր»: Շատ հավանական է, որովհետև Մսերյանները և Չերքեզյանն իրենց բանավիճային հողվածներում սիրում էին ծաղրել Նազարյանի գիտական աստիճանը և նրա «լուսավորված» լինելու հանգամանքը¹⁰⁴: Ամեն դեպքում, այս փաստաթուղթը մեծ արժեք է ձեռք բերում իբրև ժամանակակցի, և առավել ևս հակառակորդների բանակում ընդգրկված գործիչներից մեկի վկայություն: Ինչպես վկայում են փաստերը, այդ գործիչները ստույգ տեղեկություններ ունեին «Հյուսիսափայլի» խմբագրության անցուղարձի մասին:

ՊՐՈՍ ԴՈՒԿԱՍՅԱՆ. Պ. Դուկասյանի «Մի քանի խոսք: Գերապատիվ վարդապետ Արևելյան լեզվագիտության Ս. Նազարյանցի և նորա հակառակորդների վերա, բարեմիտ ընթերցողների դատաստանի առաջև» հողվածի¹⁰⁵ գրության անմիջական շարժառիթը Հովսեփ Չերքեզյանի անվերնագիր հողվածն էր Նազարյանի դեմ¹⁰⁶: Հիմք ընդունելով

¹⁰³ «Մեղու Հայաստանի», 1861, թիվ 6, էջ 47:

¹⁰⁴ Ջարմայրը, օրինակ, մի հողվածում «Հյուսիսափայլի» աշխատակիցներին անվանում է «Հյուսիսափայլի» լույսով լուսավորյալ անձինք» կամ «նոր եվրոպական լուսավորությամբ զարդարված և լուսավորված անձինք»: Տե՛ս նույն տեղում, 1860, թիվ 17, էջ 131:

¹⁰⁵ «Հյուսիսափայլ», 1860, թիվ 12, էջ 488-514:]

¹⁰⁶ «Մեղու Հայաստանի», 1860, թիվ 13, [էջ 98:]

«Յյուսիսափայլի» նյութերը, Չերքեյանն իր պարտքն էր համարում «Մեղու Յայաստանի» «բարեհամբավ լրագրում» ցույց տալ Նազարյանի ով լինելը, բացահայտել նրա հրապարակախոսության «վտանգավոր» էությունը, ապացուցել, որ Նազարյանն իրավունք չունի բարոյականություն քարոզել, քանի որ նրա հողվածներում իբր «բարոյականության նշույլ չկա»: Չերքեյանն իր հիմնական մեղադրանքներն ու հետևությունները ձևակերպում է հողվածի ինը հատվածներում: Ընդ որում, հենց առաջին հատվածում ստանձնում է փորձված մատնիչի դեր՝ հայտարարելով, թե Նազարյանն իր անսագրի միջոցով տարածում է լուծերականություն: Այնուհետև «Յյուսիսափայլի» խմբագրին նա կշտամբում է հայ հոգևորականությանը և «ազգի նշանավոր անձանց» անվանարկելու համար, Նազարյանի «Չոգեբանություն» ձեռնարկը համարում հեղինակի «տկարության և բոլորովին տգիտության անմահ արձան», նրան անվանում սուտ ազգասեր, արծաթասեր, շողոքորթ և այլն:

«Յյուսիսափայլի» խմբագրությունը վճռում է չպատասխանել հայ-հոյական այս ելույթին, բայց, ընդառաջելով հայ առաջավոր գործիչների պահանջին, ամսագրում, Չերքեյանն, այնուամենայնիվ, ստանում է իր հողվածի գնահատականը: Կոմս Էմմանուելի «Յիշատակարանի» վերջին գլխում Նալբանդյանը վերլուծում է Չերքեյան-քննադատի, քաղաքացու և գիտնականի վարքագիծը, հայտարարում, որ նա իր իսկ հողվածով վարկաբեկել է իրեն: Նալբանդյանը գտնում է. քանի որ Չերքեյանն ու «Մեղուն» մարմնավորում են դարավոր տգիտությունը և հայ հասարակական կյանքի խոցերը, ապա հարկ է վիրաբուժական հնարներով «հայկական հիվանդ կազմվածքը» ազատել այդ ախտից: Նա օրինաչափ է համարում տգիտության և գիտության միջև ծագած պատերազմը և զինվորագրվելով գիտությանը՝ օրինում և ընդունում է այդ պատերազմը: Նալբանդյանը չի անդրադառնում հողվածագրի առանձին թեզերին, ավելորդ համարելով խոսել այն «անխորհուրդ ունայնաբանության» մասին, որը Չերքեյանն ընծայել էր «Մեղուի» ընթերցողներին¹⁰⁷:

1860 թ. հունիսից հետո, սակայն, երբ լույս է տեսնում «Յյուսիսափայլի» 6-րդ համարը, իրադարձությունները զարգանում են այնպիսի հունով, որ Նազարյանը ստիպված է լինում հրապարակայնորեն պաշտպանել իր պատիվը և անսագիր հրատարակելու իրավունքը: Բանն այն է, որ սկսած դեռևս հունվարից և մինչև դեկտեմբեր, «Մեղու Յայաստանի»

¹⁰⁷ «Յյուսիսափայլ», 1860, թիվ 6:

տանի», «ճռաքաղ» և «Մասյաց աղավնի» պարբերականները բառացիորեն զբաղված էին «Յուսիսափայլի» քննադատությամբ ու ծաղրուծանակի էին ենթարկում ամսագրի խմբագրին և աշխատակիցներին: Մեր խնդրի սահմաններից դուրս է դարի՝ այդ բացառիկ աղմկալից և դրամատիկ բանավեճի բոլոր կողմերին անդրադառնալը, որը, հիրավի, կղերաֆեոդալական հոսանքի մարող ուժերի օրհասական գոտեմարտն էր լուսավորության տեսաբանների գաղափարախոսության դեմ: Հիշենք միայն, որ բանավեճի կիզակետն է դառնում Նազարյանի «Մենդելսոն, Լեսսինգ և Լավատեր» հոդվածի տպագրությունը «Յուսիսափայլում»¹⁰⁸, որն ազդարարում է Նազարյանի և նրա ամսագրի դեմ ուղղված վայրագ արշավանքի սկիզբը:

Նալբանդյանը թիֆլիս է հասնում օգոստոսին, երբ Ստեփանոս քահանա Մանդինյանն այստեղ, հուլիսից ի վեր, «Մեղու Յայաստանի» շաբաթաթերթում տպագրում էր Չերքեյանի «Նազարյանց և նորա նշանակությունը հայոց գրականության մեջ» վարկաբեկիչ հոդվածաշարը¹⁰⁹, իսկ նույն պարբերականի՝ հոկտեմբերի 22-ի համարում, Սկայորդին առաջինը՝ ահագանգում է «Յուսիսափայլի» 10-րդ համարի «նահացու մեղքի» մասին¹¹⁰: Նազարյանը, որն արդեն կարող էր ծանոթ լինել Չերքեյանի հոդվածաշարի առաջին գլուխներին, չէր կարող չգիտակցել իր ամսագրին սպառնացող վտանգը: Նա գիտեր, թե ում թելադրանքով և ինչպիսի հետևողականությամբ էր գործում Չերքեյանը (այդ «կաշառակեր անպիտանը»)¹¹¹: Չերքեյանի ձեռքով է, որ մեծահարուստ Յովնանյանը ձգտում էր պատժել «հյուսիսափայլականներին»՝ «Մեռելահարցուկ» վեպի տպագրության համար: Դա, իսկապես, շատ վտանգավոր զինակցություն էր, և Նազարյանը պետք է փորձեր վնասագերծել հակառակորդին:

Մեր կարծիքով այս հանգամանքների բերումով է կյանքի կոչվում **Պողոս Ղուկասյան** ստորագրությունը կրող հոդվածը, որն արդեն շարադրված էր հոկտեմբերի 20-ին¹¹² և տպագրվում է դեկտեմբերին: Մեր խորին համոզմամբ՝ այս հոդվածը պատկանում է Նազարյանի գրչին:

¹⁰⁸ [Ստ. Նազարյան, Մենդելսոն, Լեսսինգ և Լավատեր: Վիճաբանելով կրոնի վերա- «Յուսիսափայլ», 1860, թիվ 10, էջ 298-313:]

¹⁰⁹ «Մեղու Յայաստանի», 1860, [թիվ 31, էջ 242-248; թիվ 32, էջ 254-256; թիվ 33, էջ 261-264; թիվ 34, էջ 269-272; թիվ 35, էջ 275-278; թիվ 36, էջ 285-287; թիվ 37, էջ 293-296:]

¹¹⁰ [Նույն տեղում, թիվ 43, էջ 340-342:]

¹¹¹ Ստ. Նազարյան, Նամականի. տեքստը կազմեց, ծանոթագրեց և առաջաբանը գրեց Ռուզան Նանունյանը, Երևան, 1969, էջ 261:

¹¹² Նույն տեղում, էջ 235:

Թվում է՝ բանավիճային- պաշտոնական այս ելույթում առավել ազատ և անկաշկանդ արտահայտվելու համար է, որ Նազարյանը ճակատային գիծ է դուրս բերել իր կրկնակին՝ Պողոս Ղուկասյանի դիմակը կրող մտացածին մի հոդվածագրի: Չէ՞ որ նա ոչ միայն պետք է պատասխաներ Չերքեզյանի հերյուրանքներին, այլև, անհրաժեշտության բերումով, կարողանար ներկայացնել իր իսկ արժանիքները և բարոյական գերազանցությունը հակառակորդի նկատմամբ:

Հոդվածագիրը հիմնավորապես հերքում է Չերքեզյանի մեղադրանքները և միաժամանակ, արդեն որերորդ անգամ, հանգամանորեն բացատրում պատմական ժամանակաշրջանի առաջադրած լուսավորականության խնդիրներն ու այդ ուղղությամբ հայ ժողովրդի անելիքները: Ծանոթությունը Նազարյանի ստեղծագործության հետ թույլ է տալիս նկատել, որ այս հոդվածը նրա լուսավորական ծրագրերի ամբողջ համակարգի մի նոր, ընդհանրացված արտահայտությունն է, դրա հավատո հանգանակը: Ուստի, զարմանալի չէ, որ հոդվածի լուսավորական ծրագրի լեյտմոտիվը բառացի համընկնում է «Վարդապետարան կրօնի» աշխատության առաջաբանի համապատասխան մտքին: Ահա այդ զուգահեռը. «Մեր ժամանակը երկաթի գավազանը ձեռքին, պահանջում է յուր արդարացի հարկը. միթե՞ կարելի է փախչել ժամանակի պահանջողութենից»¹¹³. «Բնությունը և ժամանակը՝ երկաթի գավազանը ձեռքին՝ պահանջում է յուր արդարացի հարկը»¹¹⁴ (ընդգծումները մերն է – Մ. Մ.):

Ուշադրության արժանի է ևս մեկ հանգամանք: Նախքան Չերքեզյանի հարցադրումներին անդրադառնալը՝ Նազարյանը փորձում է հաշիվներ մաքրել Առաքել Արարատյանի հետ: 1858-1859 թթ. վերջինս երկու գրքույկով առաջինն էր հրապարակային հարձակում ձեռնարկել Նազարյանի դեմ: Նրա այդ ելույթների մասին Նազարյանն արտահայտվել էր «Թափառական հրեա» վեպի՝ Նալբանդյանի թարգմանության մասին գրած «Կրիտիկայի» տողատակում¹¹⁵: Այժմ, երբ պատեհ առիթ էր ընձեռվել խոսելու, նա պատասխանում է նաև Արարատյանին: Նազարյանը հոդվածի 16 էջից չորսը նվիրում է նրան և ոգևորվում այնպես, որ նույնիսկ Արարատյանին է վերադարձնում նրանից ստացած մի

¹¹³ «Յուսիսափայլ», 1860, թիվ 12, էջ 495:

¹¹⁴ Մ. Նազարյան, Վարդապետարան կրօնի հասարակաց հայախօսութեամբ, մասն առաջին, Մոսկվա, 1853, էջ 10:

¹¹⁵ [Ստ. Նազարյան, Կրիտիկա. Թափառական հրեա, գործ էժեն Սյու ֆրանսիացու] – «Յուսիսափայլ», 1858, թիվ 10, էջ 317-318:

թշնամական արտահայտություն («միշտ անպտուղ չորասցին ցանք քո և միշտ այլան կատականաց եղիցիս դու առաջի քո և այլոց ազգաց») ¹¹⁶:

Միթե՞ Նալբանդյանը ժամանակ ուներ Մոսկվայում գտնված տասն օրերին (ինչպես կարծում է Ս. Դարոնյանը) գրել մի հսկայական հոդված՝ մեկ առ մեկ պատասխանելով Չերքեզյանին և կամ «Դիմագրաւի...» էջերում որոնել Արարատյանի մտքերն ու անեծքները: Նալբանդյանն ինչո՞ւ պետք է հիշեր, որ Արարատյանը դրամ է խնդրել իր գրքույկների տպագրության համար: Այնինչ Նազարյանն այդ փաստն օգտագործում է՝ Արարատյանի այն մեղադրանքը չեզոքացնելու մտադրությամբ, ըստ որի՝ ինքն իբր փողեր է կորզել ազգայիններից իր գրքերի տպագրության համար: Չերքեզյանին ուղղած պատասխանում Նալբանդյանը խոսում է զավեշտի եղանակով, հակառակորդին ջախջախում ընդհանրացնող խոսքով: Նա պարտավորված չէ մեկ առ մեկ պատասխանել Չերքեզյանի հերյուրանքներին: Նազարյանը, սակայն, հարկադրված է մեկ առ մեկ, հարց առ հարց պատասխանել, մեկնաբանել, բացատրություններ տալ: Թեև նա ևս, չկորցնելով հոգու կորովը, պախարակում է հակառակորդներին, մատնացույց անում նրանց խավարամիտ գաղափարների սնանկությունը:

Այսպիսին է հոդվածից ստացած մեր տպավորությունը, որը հաստատվում է Նազարյանի հակառակորդների հոդվածներում տեղ գտած մի շարք «վկայություններով»: Շրջանցել այդ փաստերը, չենք կարող, քանի որ Նազարյանի մոսկովյան հակառակորդները ճշգրիտ լրատվություն էին ստանում «Հյուսիսսփայլի» խմբագրի և նրա համախոհների յուրաքանչյուր քայլի մասին: Բերենք միայն մեկ օրինակ: Իր հերթական թղթակցության մեջ Ջարմայրը «Մեղու Հայաստանի» թերթի ընթերցողներին պատմում է, թե որոշ մարդիկ Մոսկվայում ինչպիսի անհամբերությամբ են սպասելիս եղել («օր է օր, ժամ է ժամ, րոպ է ի րոպ է») «Հյուսիսսփայլի» 6-րդ համարի լույս ընծայմանը: «Միայն ես, – պարծենում է Սկայրդդին, – որ գիտեմ այն ամենայն, ինչ որ ծնանում է «Հյուսիսսփայլի» աշխատասիրողաց մտքում, իրավունք չէի տված ինձ սպասել այնպիսի անհամբերությամբ այն տետրակի ի լույս տեսանելույն, **որովհետև նորա բովանդակությունն հույժ հայտնի էր ինձ**» (ընդգծումը մերն է – Մ. Մ.): Այնուհետև Ջարմայրը պատմում է, որ ինքը «Մեղուի» բաժանորդներին կանխավ չի պատմել այդ համարի բովանդակության մասին,

¹¹⁶ Տե՛ս Ա. Արարատեան, Դիմագրաւ ընդդէմ սատան յարուցելոց ամենապատուական նախամայր մաքուր լեզուիս հայոց, Տփիսիս, 1858, էջ 17:

որպեսզի «անբախտ չառնի» «Հյուսիսափայլի» խմբագրության (թերևս տպարանի) մի աշխատակցի, «որ ըստ սխալական կարծյաց պարոն Նազարյանի, կասկածանաց տակ էր ընկած, որպէս հայտնող ինձ նորա գաղտնիքները»¹¹⁷: Այսպես, թե այնպես, մեզ համար կարևորն այն փաստն է, որ հակառակորդներին «հույժ հայտնի էր» ամեն ինչ:

Այժմ ծանոթանանք Պողոս Ղուկասյանի ինքնության մասին նրանց հայտնած կարծիքներին: Պողոս Ղուկասյանի «Մի քանի խոսք...» հոդվածը մեծ աղմուկ է առաջ բերում: «Հյուսիսափայլի» ելույթին պատասխանում են Չերքեզյանը¹¹⁸, Մարտիրոս Ադամյանցը¹¹⁹ և Մսեր Մսերյանը¹²⁰: Իր հոդվածին կից նամակում Չերքեզյանը հեզգնանքով շնորհավորում է Նազարյանին, նրա նոր համախոհի՝ Պ. Ղուկասյանի երևան գալու առիթով: Չերքեզյանի թե՛ նամակից, թե՛ հոդվածում բերված արտահայտություններից հստակորեն երևում է, որ Պողոս Ղուկասյանին նա չի համարում իրական անձնավորություն և գրական այդ ծածկանունը որևէ ակնարկով չի կապում Նալբանդյանի հետ: Մենք կանդորադառնանք միայն այդ ծածկանվանն առնչվող Չերքեզյանի ակնարկներին ու ենթադրություններին՝ մի կողմ թողնելով բուն բանավեճին առնչվող խնդիրների քննությունն ու մեկնաբանությունները, որոնք, թեև հետաքրքրական են, այդուհանդերձ, կապ չունեն ներկա հոդվածի հետ:

Չերքեզյանը Ղուկասյանին համարում է Սադայի երկվորյակը, և հայտարարում, թե այնպես, ինչպես կիսագրագետ Սադա Ալեքսանդրյանցի անունով Նազարյանը հոդվածներ էր հրապարակել իր դեմ¹²¹, այժմ էլ կերտել է մի նոր կերպար՝ Պողոս Ղուկասյանին, որի տիպը, դիմում է նա Նազարյանին, «տալիս է մեզ տեղիք մտածելու, թե նորա անունով ստորագրված նամակը ձերն է»: Նա շարունակում է. «Ո՛վ կամենա, թող լինի այդ Պողոսը, արական ըստ սեռին և կամ չեզոք, էական կամ իբր էական, մենք դարձուցանում ենք մեր խոսքը դեպի ձեզ»¹²²: Այս տողերից ակնհայտ է դառնում, որ Ղուկասյանը չի դիտվում իբրև իրական անձնավորություն: Այդ են հաստատում և ներքոհիշյալ տողերը, որտեղ Չերքեզյանն ամենայն հստակությամբ նշում է, որ այդ

¹¹⁷ «Մեղու Հայաստանի», 1860, թիվ 32:

¹¹⁸ «Մասյաց աղավնի», 1861, թիվ 4-5, 9-11:

¹¹⁹ «Ճռաքաղ», 1861, թիվ 18-19/ԺԸ-ԺԹ:

¹²⁰ «Մեղու Հայաստանի», 1860, թիվ 51:

¹²¹ Սադա Դավթյան Ալեքսանդրյանցը շամախեցի վաճառական էր, Նազարյանի մտերիներից, որը «Հյուսիսափայլում» (1860, թիվ 7) բողոքի մի հոդված է տպագրում («Նամակ առ իրատարակողը») Չերքեզյանի հոդվածի դեմ: Ժամանակակիցները, այդ թվում և Չերքեզյանը, ոչ առանց հիմքի, Սադայի նամակում տեսնում էին Նազարյանի «ձեռագիրը»:

¹²² «Մասյաց աղավնի», 1861, թիվ 4, էջ 42:

անունը շինծու է: «Արդյոք դ՞ուք չեք,– գրում է նա,– որ 12 ամսատետրակում ասում եք եղջերուաքաղ* Ղուկասյանի անունով...» և կամ՝ «Հա՛, կարող ես ցույց տալ Սադային, Նալբանդյանին և այլ մին քանի Ղուկասյանի նման եղջերուաքաղ մարդիկ...»¹²³:

Հարկ է նկատել, որ Չերքեզյանը բավականաչափ ճիշտ պատկերացում ուներ այն իրավիճակի մասին, որը ծնունդ էր տվել Ղուկասյանի նամակին: Նա նշում է, որ «Մեղուի» 13-րդ համարում տպագրված իր հոդվածից ահաբեկված՝ Նազարյանը օգնության է կանչել ընկերներին՝ Նալբանդյանին և Սադային, որոնք «Հյուսիսափայլում» հանդես են եկել Չերքեզյանի դեմ: Բայց այնքանով, որքանով նրանք, ըստ էության, չեն պատասխանել Չերքեզյանին և միայն «հայիոյել են» նրան և միայն գովել ու մխիթարել Նազարյանին, վերջինս հարկադրված է եղել մի ըստ միոջե «քննել իր գրվածը»: Ճշմարտանման է: Հետևությունը... Չերքեզյանը մեղադրողի պաշտոնական կեցվածք առնելով, եզրափակում է միտքը. «...Դուք գրում եք ոչ թե պատասխան, այլ մեծ ու երկար տարփողական ճառ ձեր անձին: Ինչպե՞ս չեք ամաչում, պարոն, ինքներդ ձեզ այդչափ գովելով»¹²⁴:

Ինչպես տեսնում ենք, հոդվածի հեղինակ է ճանաչվում Նազարյանը և ոչ Նալբանդյանը: Այս միտքը հաստատվում է Չերքեզյանի հոդվածի նաև մեկ այլ հատվածում: Կանգ առնելով Պողոս Ղուկասյանի նամակի պատկերավոր արտահայտություններից մեկի վրա, ըստ որի՝ ժամանակի կատաղի ալիքներին չի դիմանում հետադիմականների հին, խարխուլ նավը, Չերքեզյանը գրում է. «Ի՞նչ նավի վրա ես խոսում, ի՞նչ ալիքներ են երևում քո աչքերիդ, ի՞նչ դեկ, ի՞նչ առազաստներ են պատկերանում քո երևակայության:

Նույն և նման ձևով, նույն խուժադուժ նորաշեն բարբառով, Նալբանդյանցը, ազգային կատակերգության երկրորդ խաղարկուն, երբ մենք ապացուցել էինք քո գրվածների անբարոյականությունը, խոսել էր բանդագուշանոք...»¹²⁵:

Այս նամակին հաջորդում է Սսերյանների «ճռաքաղում» 1861 թ. տպագրված՝ ոմն «Բուն թիֆլիզեցի» Մ. Ադամյանցի հոդվածը¹²⁶: Հոդ-

* Եղջերուաքաղ - եղջերուի և արու այծի զուգավորությունից ծնված երևակայական կենդանի:

¹²³ Նույն տեղում, թիվ 10, էջ 116:

¹²⁴ Նույն տեղում, թիվ 4, էջ 42:

¹²⁵ Նույն տեղում, թիվ 9, էջ 101:

¹²⁶ Մ. Ադամյանց, Պողոս Ղուկասյանի «Մի քանի խոսք» վերնագրով հոդվածի դեմ, որ տպած է «Հյուսիսափայլ» օրագրի մեջ, 1860 ամի, դեկտեմբերի ամսատետրակումը, երես 481-514.– [«Ճռաքաղ», 1861, թիվ 18-19/ԺԸ-ԺԹ:]

վածագիրը նախ հայտարարում է, որ «Պողոս Ղուկասյան» անունը մտացածին է, քանի որ այդպիսի մարդ չկա Թիֆլիսում¹²⁷: Շատ հետաքրքրական է, որ Ադամյանցն առաջին տողերից մինչև հողվածի ավարտը հանդես է գալիս Առաքել Արարատյանի պաշտպանությամբ և ցավ հայտնում, որ ինչ-որ մեկը համարձակվել է վիրավորել «ազգային անձնադիր» այդ մշակին: Սա բանավիճային բնույթի ծրագրային հողված է գրված Թիֆլիսի «կենտրոնում», ամենայն հավանականությամբ Արարատյանի և Մանդինյանի կողմից: Ինչպես երևում է հողվածի շարադրանքից, Մարտիրոս Ադամյանց ծածկանունով հանդես է եկել Ստ. Մանդինյանը, որն իրեն համարում էր «մեծ հայկաբան» Արարատյանի աշակերտը: Ի դեպ, Ներսիսյան դպրոցում մի քանի տարի Արարատյանին աշակերտել էր և Նազարյանը, որը հետագայում նաև նամակագրական կապ էր պահպանել ուսուցչի հետ: Եվ ահա Ադամյանցը մեղադրում է Նազարյանին երախտամոռության մեջ, մեծագույն նվիրվածությամբ պաշտպանում իր ուսուցչի պատիվը, նրան հռչակում «այն Սոփերա ձույլ ոսկին, զոր որքան ցխոտես և փոշոտես, յուր հարզն ու փայլը չի՛ կորցնիլ»¹²⁷:

«Ճռաբաղի» հողվածը, որն ինչպես ասացինք, ծայրից ծայր շոշափում էր Նազարյան-Արարատյան հակամարտության խնդիրը և կրկնում «Մեղու Չայաստանի» թերթում տպագրված՝ Մանդինյանի հողվածի թեզերը «Հյուսիսափայլի» դեմ, ոչ մի ակնարկով չի առնչվում Նալբանդյանի հետ¹²⁸: Հիշենք այդ հողվածի մի քանի արտահայտությունները, որոնք մեզ համար կարևորություն են ներկայացնում: Ադամյանցը, որոշակիորեն ժխտելով Պողոս Ղուկասյան անձնավորության գոյությունը («անվանակեղծ Պողոս», «սուտ տիֆլիսեցի Պողոս», «ստանուն Պողոս»), հայտարարում է. հողվածագիրը չնայած ծածկում է անունը՝ «մեք իրան իմացանք»: Այնուհետև բերում է հետևյալ փաստարկները:

1. Դիմելով Պողոսին, Ադամյանցը նշում է, թե նա դեռ ծնված չէր, երբ պաստոր Դիտրիխի պատվերով Արարատյանն «Աստվածաշունչը» թարգմանել է աշխարհաբար: Բնականաբար, ժո-

* Պ. Ղուկասյանի նամակն ուղարկված էր «30-ին օգոստոսի 1860 թ.», իբր՝ Թիֆլիսից:

¹²⁷ Նույն տեղում, թիվ 18/ԺԸ, էջ 300: Ի դեպ, Մանդինյանը դեռևս 1859 թ. մայիսին օգտագործել էր այս նույն արտահայտությունը: Չնայած ոմանք անպիտան են համարում գրաբարը, գրում էր Մանդինյանը, «բայց նա ձույլ Սոփերա զուտ ոսկի է, որքան աղտոտի կամ ցխոտի, յուր արժեքն և պատվականությունն չի կորցնիլ.— «Մեղու Չայաստանի», 1859, թիվ 21, էջ 167:

¹²⁸ Նույն տեղում, 1858, թիվ 16:

ղովրդական այդ արտահայտությունը չպետք է բառացի ընկալվի: Նա դրանով շեշտում է Ներսիսյան դպրոցում նրանց՝ ուսուցիչ-աշակերտ լինելու հանգամանքը:

2. Թեպետ Պողոս ես դրել անունդ, գրում է Ադամյանցը, բայց պահպանել ես նախկին բնությունդ և հալածում ես ճշմարտաւերներին: Ադամյանցը նկատի ունի 1858-1860 թթ. «Յյուսիսափայլում» տպագրված քննադատական հոդվածներն ու գեղարվեստական, հրապարակախոսական գործերը:
3. «Ղազախ և Բորչալուի հայքն, որք քեզ շատ ծանոթ են, Ղարաբաղի հայերի պես չեն խոսում»: Մանդինյանին քաջ հայտնի էր, որ Ներսիսյան դպրոցում Նազարյանի հետ սովորել են նաև Ղազախից և Բորչալուից ուղարկված պատանիներ, մի բան, որ նա չէր կարող ասել Նալբանդյանի վերաբերյալ:
4. «... Այլ դու, որ քեզ եվրոպացի պրոֆեսորների կարգումն ես դրել, ... այդ ի՞նչ սխալներ ես թույլ տալիս քո հոդվածում»¹²⁹: Նախ հայ գործիչների թվում այդ պահին հանրաճանաչ պրոֆեսոր էր Նազարյանը, ապա հայտնի է, որ նրա հակառակորդներն ընդգծված հաճույքով ոչ միայն ծաղրում էին «Յյուսիսափայլի» խմբագրի գիտական աստիճանն ու կոչումը, այլև ցուցադրաբար մատնանշում նրա, այսպես ասած, լեզվական սխալները: Այս հոդվածի հեղինակը վարվում է նույն կերպ:

Այսպիսով, կարծում ենք, որ Մարտիրոս Ադամյանց կեղծանունով հանդես է եկել Մանդինյանը (անկասկած, Արարատյանի օգնությամբ): Ամբողջ հոդվածը նա շարադրել է «Մեղու Յայաստանի» թերթի գլխավոր տեսաբան և բանաստեղծ Արարատյանի պաշտպանության դիրքերից՝ Նազարյանին վերջնականապես ջախջախելու մտադրությամբ: Ինչպես տեսանք, պայքարի այս ճակատում ևս Նալբանդյանը չի հիշվում ո՛չ ուղղակի և ո՛չ անուղղակի խոսքով:

Այժմ ծանոթանանք Մ. Մսերյանի ելույթին: 1860 թ. նոյեմբերի 28-ին, Արարատյանին հղած նամակում նա հայտնում է «Յյուսիսափայլի» 12-րդ համարում տպագրված Պողոս Դուկասյանի հոդվածի մասին: «Խոյեցին՞», – գրում է նա, – ըստ մարգարութեան Ձերոյ, մոլեգնի օրըս-տօրէ եւ զփրփուրս կատաղութեան թափեցի արդեն Ձեր և յիմ վերայ բերանով Պողոսի ուրումն Դուկասեան, ունիք տեսանել ՚ի վերջին ամսատետրակի «Յիուսիսափայլին» այսր ամի:

¹²⁹ «Ճռաքաղ», 1861, թիվ 19/ԺԹ, էջ 316:

* Նազարյանի հայրը՝ Եսայի քահանան, Պարսկաստանի Խոյ քաղաքից էր:

Թէ զինչ պատասխանի պարտ իցէ տալ անզգամացելունն միոյ՝ դուք ինքնին քաջ գիտեք: Ես ակն ունիմ, թէ ունիք գրել ընդդէմ ղօղանջանաց նորա, զոր արժանն իցէ:

Այլ, յառաջ, քան զայն, կարող եք առ ՚ի խայտառակել զնա՝ տպել ՚ի «Մեղուի» զգրուածո, որ առաքի ընդ սմին, ստորագրութեամբ **Ղուկասու Պողոսեան**: Պարտ է երբեմն և այդպիսեօք խայտառակել զվայրախօսն»¹³⁰:

Ինչպէս ասում են, մեկնաբանութիւններն ավելորդ են: Մնում է ավելացնել, որ Մսերի ուղարկած «Տեսիլ» երգիծական պատկերը, որը բացարձակապէս զուրկ էր գրական արժանիքներից, տպագրվում է «Մեղու Հայաստանի» թերթի 51-րդ համարում՝ **Ղուկիանոս Պողոսյան** ստորագրությամբ: Այդտեղ նկարագրվում էր մի տեսարան դժոխքից և մերկապարանոց հայիոյանքներով ծաղրի էին ենթարկվում «Լյութերի աշակերտ» Նազարյանը և նրա լուսավորական գաղափարները: Ինչ վերաբերում է Նազարյանի դէմ հողված գրելու Մսերի առաջարկին, ապա «ճռաքաղի» ապրիլյան համարներում տպագրված Մարտիրոս Աղամյանցի հողվածը, հավանաբար, դրա ծնունդն էր:

Անդրադառնանք Ս. Դարոնյանի դիտողութիւններին: Նա գտնում է, որ «Պ. Ղուկասյան» ծածկանունը կրող հողվածը Նալբանդյանը գրել է «Մոսկվայում եղած շրջանում՝ 1860 թ. հունիսի 16-27-ին»¹³¹: Մենք արդէն նշեցինք տասն օրում Նալբանդյանի կողմից մի քանի հողված գրելու վարկածի անհավանականության մասին: Կրկնում ենք. Ջ. Մսերյանին և Հ. Չերքեզյանին **մայիսին** ինչպէս հարկն է պատասխանելուց հետո, ոչնչով հիմնավորված չէ **հունիսին** ևս վերոհիշյալ գործիչների դէմ երկրորդ անգամ հողվածներ գրելու՝ նրա ենթադրութիւնը:

Այնուհետև Ս. Դարոնյանն իրավացիորեն մատնանշում է Պ. Ղուկասյանի և Մ. Նալբանդյանի հողվածների միջև եղած մի շարք նմանութիւններ: Դրանք վերաբերում են *կրիտիկա* հասկացողության մեկնաբանութեանը, հայոց լեզվի առաջնութեան հարցի շուրջ արված դատողութիւններին, Նազարյանի դոկտորական գիտական աստիճանի ձեռքբերման կարգին, Ներսէս կաթողիկոսին և Ս. Ջալալյանին տրված գնահատականներին: Իրոք՝ այս հարցերի հետ կապված մտքերը ձևակերպված են Նալբանդյանի «Կրիտիկա «Հանդես նոր հայախոսութեան» և «Նամակ առ հրատարակողը» հողվածներում, ինչպէս նաև «Հիշատակարանի» առաջին զլխում: Բայց սա հարցի մեկ կողմն է միայն: Պ. Ղուկասյանի հողվածում արծարծված վերոհիշյալ խնդիրները նույնչափ

¹³⁰ Մաշտոցյան Մատենադարան, Մսերյանների արխիվ, թղթ. 207, վավ. 2077:

¹³¹ Ս. Դարոնյան, նշվ. աշխ., էջ 38:

կապվում են Նազարյանի նախահյուսիսափայլյան աշխատությունների, «Հայկական լեզվի խորհուրդը» ծրագրային հոդվածի, Գ. Գեղամ-յանցի «Մահացուցակի» տողատակերի, «Հյուսիսափայլի» «Հայ ոմն» թղթակցի նամակի պատասխանի հետ: Թվարկված այս աշխատություններում և հոդվածներում Նազարյանը դեռևս Նալբանդյանից առաջ հրապարակել է իր լուսավորական ծրագրերը, կարդացել գրաբարի դատավճիռը, գիտականորեն հիմնավորել նոր գրական լեզվի քաղաքացիական իրավունքները, հրապարակավ մերժել Մխիթարյան գիտնականների տեսակետները՝ հայերենն աշխարհի առաջին լեզուն համարելու վերաբերյալ, քննադատել Ն. Աշտարակեցու գործելակերպը: Այս իմաստով Պողոս Դուկասյանի հոդվածի համապատասխան բաժիններն առավելապես պետք է կապել վերոհիշյալ աղբյուրների, քան Նալբանդյանի՝ Մանդինյանին տված պատասխանների հետ, որոնք «Հյուսիսափայլի» հրատարակության առաջին ամիսներին կարող էին գրված լինել նույնիսկ Նազարյանի մասնակցությամբ:

Սակայն, հայտնի է, որ «Հյուսիսափայլում» Նալբանդյանն առաջինը տեսականորեն հիմնավորեց կրիտիկայի դերն ու նշանակությունը հայ նոր գրականության զարգացման գործում, ձևակերպեց կրիտիկայի սահմանումը, սկզբնավորեց հայ գրաքննադատական միտքը, ստեղծեց բանավիճային ելույթների չգերազանցված օրինակներ: «Հյուսիսափայլի» հրատարակության սկզբնական շրջանում արդեն, Նալբանդյանը հասունանում էր զարմանալի արագությամբ և շուտով առաջ անցավ իր ուսուցչից, դառնալով հայ հրապարակախոսական մտքի առաջին մեծության աստղ: Ամսագրում տպագրված նրա հոդվածներում և գեղարվեստական գործերում արծարծված մտքերը՝ «Հյուսիսափայլի» հիմնարար դրույթներն էին, որոնք անկաշկանդ օգտագործում էր նաև խմբագիրը: Ժամանակն էր այդպիսին: Ժողովրդական խավերի լուսավորության համար տարվող համատեղ պայքարում «Իմը» և «Քոնը» ընդհանուր զենքերի դեր էին կատարում: Ահա թե ինչու, բանավիճային պայքարում իր խոսքն ավելի դիպուկ և հետևություններն անխոցելի դարձնելու նկատառումով՝ Նազարյանը կարող էր օգտվել իր տաղանդավոր գործակցի բանավիճային հնարանքներից ու տեսական ընդհանրացումներից: Այս կապակցությամբ հիշենք երկու պերճախոս օրինակ: Երբ Նալբանդյանը Փարիզում շարադրում էր «Երկու տող» դասական պամֆլետը՝ օգտագործում է Նազարյանի կողմից մինչ այդ ձևակերպված հետևյալ արտահայտությունը. «Անցան այն ժամանակները, երբ մարդիկ ոգևորվում էին վերացական և միստիկական բաներով, անողո-

քելի իրական աշխարհը, երկաթի գավազանը ձեռքում, պահանջում է յուր արդարացի հարկը» (ընդգծումը մերն է – *Մ. Մ.*)¹³²: Կամ՝ Նազարյանը «Թափառական հրեայի» թարգմանության մասին գրած Կրիտիկայում Նալբանդյանին բնութագրում է «առաքինի, հոգիացած մարդ» խոսքերով¹³³, որոնք Նալբանդյանն օգտագործել էր դրանից մեկ տարի առաջ՝ «Թափառական հրեայի»՝ Նազարյանին նվիրված ընծայակառույցում («ո՛վ առաքինի, հոգիացած Ազգասեր»)՝¹³⁴:

Բացատրությունը, կարծում ենք, պարզ է. գրական աշխարհաբարի ձևավորման ճանապարհին Նազարյանն ու Նալբանդյանը ստեղծել են բազմապիսի ճկուն և տարողունակ արտահայտություններ, որոնք անհրաժեշտության դեպքում օգտագործում էին՝ առանց կաշկանդվելու հեղինակային իրավունքի պայմանականություններով:

Ս. Դարոնյանն ուշադրություն է հրավիրում ևս մեկ փաստի վրա: Ղուկասյանի հողվածում օգտագործված է ռուսական մի առած, որը մինչ այդ օգտագործել էր Նալբանդյանը: Այդպե՛ս է: Բայց Ղուկասյանն իր հողվածում օգտագործել է նաև ռուսերեն երեք և լատիներեն մեկ առած: Եթե իր մտքերը հաստատելու համար Նալբանդյանի օգտագործած առածը կարող էր դիպուկ լինել, ինչու պետք է Նազարյանը հրաժարվեր դրանից¹³⁵:

Մենք կարծում ենք, որ Պողոս Ղուկասյանի հողվածը չի կարելի շփոթել Նալբանդյանի հողվածների հետ, մինչդեռ բազմաթիվ կողմերով այն կապվում է Նազարյանի հրապարակախոսական ելույթների, նրա հարցադրումների և արտահայտչամիջոցների հետ:

Ղուկասյանի հողվածի առիթով մեր խոսքն ավարտելուց առաջ ցանկանում ենք ուշադրություն հրավիրել Ս. Դարոնյանի հողվածում նկատված որոշ խառնաշփոթությունների վրա: Նա գրում է. «Ինչ վերաբերում է «գիտնական Գ. վարդապետին», ապա նա [Չերքեզյանը], նկատի ունեւր եպիսկոպոս Սարգիս Ջալալյանին» (ընդգծումները մերն են – *Մ. Մ.*)¹³⁶: Չերքեզյանը, իհարկե, վարդապետ, ասելով չէր կարող «նկատի ունենալ» եպիսկոպոսին: Նա խոսում էր իսկական վարդապետ

¹³² Միքայել Նալբանդյան, Երկու տող, էջ 17:

¹³³ Ստ. Նազարյան, Կրիտիկա. Թափառական հրեա, գործ Էժեն Սյու ֆրանսիացու, էջ 316:

¹³⁴ Միքայել Նալբանդյան, ԵԼԺ, հ. 2, Երևան, 1980, էջ 71:

¹³⁵ Դետաքրքրական է նշել, որ Պ. Ղուկասյանի հողվածում մի առիթով մեջ է բերված աթենական պետական գործիչ և զորավար Արիստիդեսի [(մ. թ. ա. 540 - մ. թ. ա. 467)] վարքից մի հիշատակություն, որն ամբողջական ձևով տպագրվել է Նազարյանի «Դանդես նոր հայախօսության» գրքի առաջին հատորում (Մոսկվա, 1857, էջ 45):

¹³⁶ Ս. Դարոնյան, նշվ. աշխ., էջ 40:

և իսկապես գիտնական Գաբրիել Այվազովսկու մասին (դիտողություն թիվ 3), իսկ Սարգիս Ջալալյանի մասին նշում իր հոդվածի մեկ այլ դիտողության մեջ¹³⁷:

Մեկ այլ առիթով նշված է Պ. Ղուկասյանը եզրակացնում է. «Ահա քեզ կանոնների կրիտիկայի ճշմարտություն և առո՛ղջ դատողություն»¹³⁸: Այնինչ, պետք է լիներ. «Ահա՛ քեզ սուրբ կանոններ կրիտիկայի, ճշմարտության և առողջ դատողության»¹³⁹:

Մենք չէինք հիշատակի այս վրիպումները, եթե դրանք եզակի լինեին: Դժբախտաբար, ծանրակշիռ մի խնդրի հետազոտությանը նվիրված այս հոդվածի՝ հատկապես բնագրերից քաղված մեջբերումներում նկատվում են նաև այլ սխալներ:

ԹՅՈՒԹՅՈՒՆՋԻ ՀԱԿՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԵՐՈՒՅԱՆՑ. Այս ստորագրությամբ 1861 թ. «Հյուսիսափայլում» տպագրվել է երկու հոդված¹⁴⁰: Առաջին հոդվածին նախորդել է Նազարյանի «Հայտարարությունը»՝ Մոսկվայում «Մասնավոր գիտնական և գործական դպրոց» բացելու իր մտադրության մասին¹⁴¹: Մեր կարծիքով, Նազարյանի հայտարարությունը և Թյուբյունջի Հակոբի առաջին հոդվածը շաղկապված են և լրացնում են միմյանց:

Թյուբյունջի Հակոբի հոդվածին կցված է նաև մուտքի նամակ՝ ուղղված «Հյուսիսափայլի» խմբագրին, որը նվիրված է բացառապես Նազարյանի մասնավոր դպրոցի ծրագրի մեկնաբանությանը և դրա պաշտպանությանը¹⁴²: Հարկ է ենթադրել, որ հայտարարության հրապարակումից հետո անբարյացակամ կարծիքներ են հայտնվել դպրոցի հիմնադրման նպատակահարմարության շուրջ և այն մասին, թե ինչու Նազարյանը, որ մինչ այդ մեծ եռանդով քարոզում էր ազգային դպրոց ստեղծելու անհրաժեշտությունը, հանկարծ վճռել է մասնավոր դպրոց հիմնադրել:

Թյուբյունջի Հակոբն իր նամակում հիմնավորում է Նազարյանի նախածեռնության կարևորությունը և անհրաժեշտ բացատրություններ տալիս ազգային ու մասնավոր դպրոցների վերաբերյալ: Բազմապիսի

¹³⁷ «Մեղու Հայաստանի», 1860, թիվ 13, էջ 10:

¹³⁸ Ս. Դարոնյան, նշվ. աշխ., էջ 40:

¹³⁹ «Հյուսիսափայլ», 1860, թիվ 12, էջ 509:

¹⁴⁰ [Սերոբյանց Թյուբյունջի Հակոբ Հարությունյան, Խոսակցություն զանազան տեղերից եկավոր հայերի մեջ, մի ծանոթի սեմեկում.– Խույն տեղում, 1861, թիվ 6, էջ 487-499; *Մուլնի*՝ Նամակ առ հրատարակողը.– Խույն տեղում, թիվ 9, էջ 242-250:]

¹⁴¹ Խույն տեղում, 1861, թիվ 3, էջ 251-259:

¹⁴² [Սերոբյանց Թյուբյունջի Հակոբ Հարությունյան, Նամակ առ հրատարակիչը.– Խույն տեղում, թիվ 6, էջ 482-486:]

պատճառաբանություններով նա փորձում է ապացուցել, որ ազգային դպրոցը թեև գեղեցիկ գաղափար է, այդուհանդերձ, «այս րոպեիս անհասանելի բան է մեզ», մինչդեռ մասնավոր դպրոցը՝ «իմ և ամենայն բարեմիտ հայի կարծիքով արժանի է ամենայն օգնականության և ձեռնտվության ազգի կողմից»¹⁴³: Ահա խմբագրին ուղղված՝ Թյուբյունջի Հակոբի նամակի հիմնական նպատակը: Միանգամայն պարզ է, որ Նազարյանին այդ պահին անհրաժեշտ էր պաշտպանել մասնավոր դպրոց հաստատելու իր ծրագիրը և դրա շուրջ հասարակական կարծիք ստեղծել:

Նամակին կից ծավալուն հոդվածը, սակայն, որը կրում էր «խոսակցություն զանազան տեղերից եկավոր հայերի մեջ, մի ծանոթի սենեկում» խորագիրը, նվիրված է հայ հասարակական կյանքի առանցքային մի շարք հարցերի քննությանը, որոնք պարբերաբար արծարծվել են Նազարյանի այլևայլ հոդվածներում:

Նամակը և «խոսակցություն...» հոդվածը կրում էին Նազարյանի բարեկամ Հակոբ Սերոբյանցի ստորագրությունը: Նազարյանի միայնության և մեկուսացման այդ օրերին, երբ հակառակորդները «Հյուսիսափայլն» առել էին կրակի օղակի մեջ և ամսագրի հրատարակությունը դադարեցնելու համար անում էին ամեն ինչ, խմբագրին անհրաժեշտ էին նոր թղթակիցներ, բայց անձինք՝ իրական, հավաստի անուններով: Բանն այն էր, որ, մինչ այդ, «Հյուսիսափայլում» 1860 թ. **Պողոս Դուկասյան** և **Հակոբ Ալիշանյանց** ծածկանուններով տպագրված հոդվածները¹⁴⁴ մեծ աղմուկ էին առաջացրել հակառակորդների բանակում: Ծագել էր Նազարյանին սատարող հոդվածների թիվն ավելացնելու անհրաժեշտությունը, բայց «կենդանի անունների» միջոցով, ուստի և ստեղծվում են Նազարյանի բարեկամներ Սադա Ալեքսանդրյանցի և Հակոբ Սերոբյանցի ստորագրությունները կրող նամակ-հոդվածները:

Հակոբ Սերոբյանցը թիֆլիսեցի հայ մտավորական էր և Մոսկվայում ազատ մուտք ուներ Նազարյանի բնակարանը, ինչպես նրա մի քանի մտերիմները: Ավելի ուշ, Նազարյանի Թիֆլիսում գտնվելու տարիներին, Սերոբյանցը նրա ընտանիքի մերձավոր և հավատարիմ բարեկամներից էր: «Հյուսիսափայլում» տպագրվելիք հոդվածների համար իբրև հեղինակ ընտրելով նրա անունը, որը չէր կարող կասկած հարուցել հեղինակի ինքնության վերաբերյալ, Նազարյանն իբրև ժուռնալիստական հնարանք, այդ անվանը հավելում է «Թյուբյունջի» մակդիրը: Ինչպես և

¹⁴³ Նույն տեղում, էջ 485:

¹⁴⁴ «Հյուսիսափայլ», 1860, թիվ 12[, էջ 488-514; **Հ. Ալիշանյանց**, Մի քանի խոսք Մուրադյանցի նկատմունքի վերա-] Նույն տեղում, 1861, թիվ 3[, էջ 222-249]:

Ս. Դարոնյանը, մենք ևս հակված ենք կարծելու, որ այն ընտրված է ժամանակի ճանաչված ռուս լրագրող Օ. Ի. Սենկովսկու ծածկանուններից: Ինչ վերաբերում է Ս. Դարոնյանի այն կարծիքին, թե այդ անունը Նալբանդյանն արդեն օգտագործել էր իր առաջին վիպակում, ապա նախ այն՝ հեղինակի կամքով լույս չէր տեսել, իսկ եթե անգամ հրատարակված լիներ, հազիվ թե Նազարյանին արգելվեր օգտվել Սենկովսկու ծածկանուններից:

«Խոսակցություն...» հոդվածը թե՛ հարցադրումների նպատակասլացությամբ և թե՛ դրանց քննության բազմակողմանիությամբ Նալբանդյանի բացակայության շրջանում տպագրված, թերևս, ամենանշանակալից ելույթն էր: «Խոսակցության...» հեղինակը նպատակ էր դրել, հետևելով եվրոպական գիտության նվաճումներին, «լույսի տակ» քննել և բացահայտել «ազգի ծածուկ ու թաքուն» բազում ցավերը: Հոդվածում նշվում է, որ հայերի մեծ մասը զուրկ է ազգային ինքնաճանաչությունից: Նրանք ապրում են միայն հարստություն կուտակելու մտահոգությամբ, չեն բաժանորդագրվում թերթերի, նույնիսկ դրանք չեն կարդում, չեն մտածում ազգային դպրոցներ հիմնադրելու մասին: Ամենայն սրությամբ բարձրացվում է տգիտության նիրհից հայերին արթնացնելու, նրանց մեջ բանական արարածի արժանապատվության զգացումը վերակենդանացնելու խնդիրը:

Ջրույցի մասնակիցներից Բարաղամը, որն առավել լուսավորված մի անձնավորություն է և հեղինակային խոսք կրողը, պարզաբանում է հայ հասարակական կյանքում առկա մտահոգիչ իրավիճակը և մատնանշում փրկության ուղիները: Դրանք էին՝ մանուկ սերնդի կրթության կազմակերպման հարցը, գրականության և մամուլի նկատմամբ սեր արթնացնելու պահանջը, եվրոպական քաղաքակրթությանը հետևելու անհրաժեշտությունը: Բարաղամը նորանոր խնդիրներ է առաջադրում իր ընթերցողներին: Նա վկայակոչելով արևմտահայերի ձեռք բերած Ազգային սահմանադրությունը (որի օգնությամբ իրենց «խելացի եղբայրները» արդեն փոխել էին հին օրերի կարգ ու կանոնը), խորհուրդ է տալիս հետևել նրանց օրինակին: Այսպես, նա առաջարկում է տարբեր գավառներից փոխանորդներ ընտրել, որոնք, հավաքվելով մի կենտրոնական քաղաքում (օրինակ անդրկովկասցիք՝ Թիֆլիսում), զբաղվեն ազգային կյանքի անհետաձգելի հարցերով, մի արծաթագլուխ գոյացնեն, որով հնարավոր կլիներ ազգային մի ընդհանուր վարժատուն պահպանել և այլն:

Թյուքունցի Հակոբի հոդվածը, որը Նազարյանի լուսավորական հայացքների հանրագումարն է, չէր կարող գրված լինել Նալբանդյանի

կողմից: Նախ ժամանակի առումով, քանզի հողվածը գրվել է 1861 թ. մարտին և տպագրվել հունիսին, երբ Նալբանդյանը գտնվում էր Եվրոպայում, իսկ այնուհետև Չնդկաստանում: Այդ օրերին, մարտի 29-ի թվակիր մի նամակում, Նազարյանը գրում էր. «Նալբանդյանցը այս թուղթիս Լոնդոնումն է. ոչինչ լուր չունեն մորանից և ոչինչ գործակցություն «Յուսիսափայլին»¹⁴⁵»:

Կարծեք պատասխանելով նրան, հունիսի 26-ի թվակիր նամակով Նալբանդյանը Կալկաթայից դիմում է Ա. Սուլթանշահին. «Ամենևին ձեռնհաս չեմ «Յուսիսափայլի» համար աշխատելու. եղանակը, դատաստանական զբաղմունքը, պանդխտության դժնդակ ծանրությունը խլում են ինձանից իմ վերջին հնարները: Բայց դու աշխատիր գեթ մի հատ ազատամիտ բան թարգմանելու: Ինչ և իցե այդ օրագիրը մեր թախըմի օռգանն է. հույս ունիմ, որ շուտով կկատարես խնդիրքս: Նազարյանցը կարբագրե այն չնչին թերությունքը, որ պիտի լինին քո գրվածքում»¹⁴⁶: Երկնտելու հիմք չկա: Բայց, եթե, այնուամենայնիվ, ենթադրենք, թե ինչ-որ հնարքով Նալբանդյանը Փարիզ-Լոնդոն-Փարիզ ուղերթների ընթացքում կարող էր անընդմեջ լրատվություն ունենալ Մոսկվայից և այս հողվածը «Երկու տողի» հետ միաժամանակ շարադրել և ուղարկել Նազարյանին (ինչպիսի համոզմունք է հայտնում Ս. Դարոնյանը), ապա մենք մեղանչած կլինենք պատմական ճշմարտության առջև:

Նալբանդյանը չէր կարող գրել այս հողվածը մի պարզ պատճառով. այն մերժում էր հայերի ազգային-քաղաքական ինքնորոշման գաղափարը: Այսպես, «Խոսակցություն...» հողվածում գրուցակիցներից մեկը («Մի այլ ոք») այն միտքն է հայտնում, թե հայը՝ «իրեար կուտե, եթե իշխանության թագ ստացավ»: Չողվածագիրը Բարաղամի միջոցով պատասխանում է. «Ոչ ոք հայերի խելացիներից թագավորության վերա չէ մտածում. հայոց ազգի այժմյան դրութենից մինչև իշխանության թագը մի այնպիսի լայն և արձակ անդունդներով լցված ճանապարհ է, որ այս թուղթիս հանդուզն և անօգուտ էր մտքից և անցուցանել մի այդպիսի բան: Մի անուս, անկիրթ, տկար և ցանուցիր, անմիաբան ազգի եթե թագավորություն ևս բաշխեիր (որ անկարելի բան է), ի՛նչ գորությամբ պիտո է նա պահպանե դորան: Ոչ, սիրելի եղբարք, հայոց բարեմիտքը չկամին այս թուղթիս թագավորություն հայերի համար, այլ միայն մի փոքր դաստիարակություն և կրթություն, մի փոքր գիտություն և լուսավորություն, որով կարող էր մեղմանալ հայոց վայրենաբարոյությունը և

¹⁴⁵ Ստ. Նազարյան, Նամականի, էջ 242:

¹⁴⁶ Միքայել Նալբանդյան, ԵԼԺ, հ. 5, Երևան, 1984, էջ 144:

նոցա կյանքը ստանալ մի փոքր մարդավայել և մխիթարական կերպարանք»¹⁴⁷: Այս հարցադրումը կրում է Նազարյան-լուսավորչի հայացքների կնիքը և բուրժուական լիբերալիզմի ցայտուն արտահայտություններից է¹⁴⁸: Հայերի՝ ինքնուրույն թագավորություն պահպանելու անկարողության միտքը Նազարյանը հայտնել է նաև Նալբանդյանին հղած՝ 1865 թ. սեպտեմբերի 25-ի թվակիր նամակում, որը գրել էր Կատկովի զրպարտչական հողվածների առիթով: Նա, մասնավորապես, նշում էր, որ Կատկովը «սաստիկ երկյուղ ունի հայերից, վրացիներից, թաթարներից՝ մի գուցե դոքա մի օր բարձրացնեին յուրյանց ազատ թագավորության դրոշ. ողորմելի՛ն չգիտեր, որ եթե այդ տգետ և թույլ ազգերին թագավորություն ևս բաշխեիր, ինքյանք պիտի իսկույն հրաժարվեին դոցանից, կամ եթե հիմարությամբ հանձն առնուին, ինքյանք պիտի միմյանց միս ուտեին, ինքյանք յուրյանց զազանական զենքով և անմիաբանությամբ կործանեին յուրյանց անձը: Այո՛, շատ հեշտ բան է թագավորություն տնտեսել առանց նյութական, բարոյական և մտավորական կրթության»¹⁴⁹:

Անրադառնանք, սակայն, Ս. Դարոնյանի վարկածի հիմնավորմանը: Նա Հակոբ Սերոբյանցիս չի համարում հողվածի հեղինակ, որովհետև, ինչպես հաստատում են փաստերը, Նազարյանի մտերիմն առհասարակ չի աշխատակցել «Հյուսիսսփայլին»: Իսկ ահա Թյությունջի Հակոբ Սերոբյանցը, գրում է նա, բոլորովին այլ անձնավորություն է՝ «քաջատեղյակ «Հյուսիսսփայլի» զործերին»: Մենք արդեն հայտնեցինք մեր կարծիքը Հակոբ Սերոբյանցի անունը Նազարյանի կողմից օգտագործելու շարժառիթների մասին:

Այնուհետև Ս. Դարոնյանը գրում է, որ հողվածում Ֆրանկլին անվան հիշատակությունը պատահական չէ, քանի որ «Ս. Նալբանդյանը մի անգամ չէ դիմել նրա հեղինակությանը»¹⁵⁰: Սակայն, բանն այն է, որ Նալբանդյանից առաջ, դեռևս «Հանդես նոր հայախոսության» գրքում Նազարյանը մի ծավալուն ակնարկ է նվիրել Ֆրանկլինին¹⁵¹:

Իբրև Նալբանդյանին հատուկ «ոճական հնարանք», Ս. Դարոնյանը հիշատակում է նամակագրի այն խոսքերը, թե խմբագիրը «կօգնե նորան, ուղղելով և լրացուցանելով **Նորա անարվեստ խոսքի թերու-**

¹⁴⁷ «Հյուսիսսփայլ», 1861, թիվ 6, էջ 493-494:

¹⁴⁸ Այս հարցի հանգամանակից լուսաբանությունը տե՛ս **Աշ. Գովհաննիսյան**, նշվ. աշխ., գիրք II, էջ 97-100:

¹⁴⁹ **Ստ. Նազարյան**, Նամականի, էջ 275:

¹⁵⁰ **Ս. Դարոնյան**, նշվ. աշխ.– «ԼԳ», 1985, թիվ 3, էջ 56:

¹⁵¹ **Ստ. Նազարյան**, Բենիամին Ֆրանկլին.– «Հանդես նոր հայախոսության», երկրորդ մաս, Մոսկվա, 1857, էջ 469-481:

թյունքը» (ընդգծումը մերն է – *Մ. Մ.*): Նման արտահայտություն Ս. Դարոնյանը նկատել է նաև **Կ. Խաչատուրյանի** և **Ա. Ա. Ե.-ի** նամակներում: Այժմ ևս Նալբանդյան-Սերոբյանցն արտասահմանից ուղարկելով այդ նամակը, շարունակում է Ս. Դարոնյանը, «հույս ուներ, որ Ս. Նազարյանը կլրացնի իր գրածը, որը և արվել է»¹⁵²:

Ս. Դարոնյանը հիշյալ նամակներում իրավամբ նկատել է սեփական գրագիտության նկատմամբ նամակագիրների դրսևորած անվստահության երանգը: Սակայն, մենք այլ կերպ ենք բացատրում այդ երևույթը: Մեր կարծիքով «Հյուսիսափայլի» խմբագրատանը «սարքվող» նման թղթակցություններում այդ արտահայտություններն ընդգծված ձևով ավելացվում էին՝ թղթակիցներին ժողովրդական շերտերի հետ կապելու միտումով:

Ս. Դարոնյանն այնուհետև փորձում է Սերոբյանցի հողվածը կապել Նալբանդյանի «Երկու տող» պամֆլետի, Ա. Ա. Ե. ստորագրությունը կրող՝ «Նամակ կոմս Էմմանուելին» հողվածի, ինչպես նաև «Հիշատակարանի» հետ, ասելով, թե այդ գործերի մեջ առկա է լույսի և խավարի խորհրդանիշը: Ընդհանուր առմամբ, այդ խորհրդանիշը հատուկ է բոլոր լուսավորիչների գործերին, բայց հետևենք Ս. Դարոնյանի մտքերին: Պարզվում է, որ Թյուքունջի Հակոբ Սերոբյանցի հողվածի հիմնական գաղափարը խորհրդանշում է **լապտեր** հասկացությունը, որը նա կապում է Բարաղամ անվան հետ, այն վերծանելով և՛ իբրև Մարա-Արամ, և՛ իբրև Բարաղամ՝ ղամբար (լապտեր): Այս դատողությանը հետևում են Ա. Ա. Ե.-ի նամակից և «Երկու տողից» քաղված և ոչ միշտ ճիշտ ըմբռնված մի քանի արտահայտություն, որոնք համադրվում են Սերոբյանցի հողվածի համապատասխան բառերի հետ: Ի դեպ, այս հատվածի մտքերի անհասկանալի խառնաշփոթին հաջորդում է մի առավել անհասկանալի հետևություն. «Ահա այստեղից,– գրում է Ս. Դարոնյանը,– Սերոբյանցի մարտյան «Նամակում» երևան է գալիս «թվառականի լուսատու ճրագը ձեռին» «ղամբարի» այլաբանական կերպարը»¹⁵³:

Մեր կարծիքով, անընդունելի է բանասիրական այսօրինակ պատասխանատու քննությունը կառուցել առանձին բառերի նմանության կամ թեկուզ կրկնության հիման վրա: Դրանից բխող հետևությունները չեն կարող հանդիչ լինել, եթե մանավանդ շարադրանքում հստակություն չկա:

Իրականում ի՞նչ լապտերի, ի՞նչ թվառականի, ի՞նչ խավարի մասին է խոսքը:

¹⁵² **Ս. Դարոնյան**, նշվ. աշխ., էջ 56:

¹⁵³ Նույն տեղում, էջ 57:

Սերոբյանցն իր հողվածուն ընդգծում է, որ հայոց ազգը ցեխի և ապականության մեջ է, ուստի հայ խմբագիրները «ցավում են, գոռում են, այրվում են, որ մեր ազգը քնած է, քնած է խոր քնով, չէ կամենում զարթնել»: Այնուհետև, որպեսզի ընթերցողներն ավելի լավ պատկերացնեն իրավիճակը՝ Բարաղամի խոսքերով նկարագրում է այն. «Վա՛յ մեզ, մեք ևս կարծում ենք, թե մարդ ենք և մարդու կարգում ենք. աշխարհը ազատության լուսի տակ է ման գալիս, մեք թանձր խավար գիշերի ցեխերում թավալվում ենք, չենք իմանում մեր արածը, իրեար քարշելով ու ձգձգելով, մինը մյուսին կոխ տալով, որը այստեղ, որը այնտեղ անելանելի տգիտության փոսերի մեջ ընկած, շվարած մնացել ենք»¹⁵⁴. Նազարյանը, որն իր հրապարակախոսական գործունեության առաջին իսկ քայլերից խոսում էր հայերի հետմանացության մասին, ընդգծում հասարակական շահախնդրությունների բացակայությունը նրանց առօրյայում, այս հողվածուն ստեղծել է «խավարի թագավորության» մի շատ արտահայտիչ պատկեր: Այստեղ, անգամ այն դեպքում, երբ դրսի լուսավոր աշխարհներից եկած մեկը ճրագ է տալիս խավար մղձավանջում տառապողներից մի թշվառի, որ նա լուսավորի յուրայինների ուղին՝ դեպի նոր կյանք, շրջապատի արարածները հանգցնում են ճրագը, իսկ այն կրող թշվառականին սպանում: Սրան հետևում է եզրակացությունը. մարդկանց «արգելոլթը այս խավար բանտի մեջ, նույն իսկ մարդիկն են, որ դուք պահապան ու առաջնորդ եք կարգել ձեր վերա»¹⁵⁵:

1859 թ. Պետերբուրգում տպագրվում է Ա. Ն. Օստրովսկու դրամատիկական երկերի երկհատորյակը: Նույն թվականին «Սովրեննենիկուն» (թիվ 7, 9) հրատարակվում է Ն. Ա. Դոբրոլյուբովի «խավարի թագավորություն» հողվածը: Մեր խորին համոզմամբ՝ Նազարյանն իրագել է եղել այդ հողվածին, կրել դրա ազդեցությունը և այդ ոգով ներկայացրել հայ իրականության «տգիտության խավարի մեջ» կամ «խավար բանտի մեջ» հածող «խավարի որդիներին»: Իբրև մեր ենթադրության հիմք՝ ծառայում է «խոսակցություն...» հողվածի համապատասխան հատվածի և «խավարի թագավորություն» հողվածի 2-րդ գլխի առաջին էջերի համեմատությունը¹⁵⁶: Նազարյանը «խոսակցություն...» հողվածով արձագանքում էր ժամանակի ռուսական լավագույն հրապարակախոսական հողվածին և փորձում ոչ միայն պատկերել հայության մտա-

¹⁵⁴ «Հյուսիսափայլ», 1861, թիվ 6, էջ 489:

¹⁵⁵ Նույն տեղում, էջ 491:

¹⁵⁶ Н.А. Добролюбов, Темное царство. — Н.А. Добролюбов, Собрание сочинений в трех томах, т. 2, М., 1952, с. 177-180.

վոր ու բարոյական ամուլ վիճակը, այլև հասարակական ակտիվ գործունեության կոչել նրան: Այսպիսին է իրողությունը: Ինչպես Նազարյանի ամբողջ հրապարակախոսության մեջ, այնպես էլ Թյուբյունցի Յակոբի «խոսակցություն...» հոդվածում, արտահայտվել են հայ խոշոր լուսավորչի և՛ առաջադիմական-լուսավորական գաղափարները, և՛ չափավոր լիբերալի նրա հավատամքը: Նազարյանը մեկ անգամ չէ, որ դիմել է «Սովորեննմիկին» և «Յյուսիսափայլուն» տպագրել այդ ամսագրի հոդվածներից կատարված մի շարք թարգմանություններ: Իր այլ հոդվածներում ևս նա խոսում է «խավարի թագավորության» և դրա դեմ պայքարի անհրաժեշտության մասին:

Նազարյանը հստակ գիտակցում էր 1860-ական թվականների ռուսական առաջադիմական մամուլի մարտական, անգամ վերափոխիչ դերը և այդ իրողությունը մեկ անգամ չէ արտահայտել իր հոդվածներում ու նամակներում: Յիշենք այդ փաստերից մեկը: Ի պատասխան Մատթեոս կաթողիկոսից ստացած հանդիմանական կոնդակի՝ Նազարյանը 1860 թ. դեկտեմբերի 21-ի թվակիր նամակով պաշտպանվում է հետադիմականների չարամիտ մեղադրանքներից և միաժամանակ, կաթողիկոսին ծանոթացնում «Յյուսիսափայլի» ուղղությամբ: Այս առիթով նա հիշում է ռուսական մամուլի փորձը: «Ձայն ճանապարհ ընթանայ, – գրում է նա, – այժմոյս Ռուսաստան մեր՝ հարիւրաւոր տեսակ տեսակ օրագիրք ամենայն համարձակախօսութեամբ քննելով և ի լուր ժողովրդեան քարոզելով, ոչ թէ միայն զազգային պակասաւորութիւնս, այլև զթերութիւնս նոյն իսկ քաղաքական կարգաց և օրինաց. զայս ճանապարհ պարտ է գնալ և սիրելի հայրենակցաց մերոց, եթէ չկամինք դատապարտել զնոսա ի մշտնջենաւորն յետնութիւն ի միջի ազգաց»¹⁵⁷:

Թյուբյունցի Յակոբի հոդվածում ևս ուշագրավ է առաջավոր մամուլին տրված գնահատականը: «Լուսավորյալ ազգերի մեջ, – գրում է հոդվածագիրը, – օրագիրը լինում է հասարակաց կարծիքի ազատ հրապարակախոս բերան, քարոզելով ժողովրդի մեջ... հասարակության բանագետ մարդերի հայացքը և դատողությունը բոլոր խնդիրների վերա»¹⁵⁸: Նա մամուլի սուրբ կոչումն է համարում լինել ազգերի գրավոր ուսուցիչը, ճշմարտության ջատագովը և այլն: Ի դեպ, այսպիսի զուգահեռները շատ են՝ Թյուբյունցի Յակոբի «խոսակցություն...» հոդվածի և Նազարյանի այլևայլ հոդվածների միջև, որոնք նույնպես ամրապնդում են մեր վարկածը՝ Նազարյանի հեղինակ լինելու վերաբերյալ: Յիշենք դրանցից մի քանիսը.

¹⁵⁷ Ստ. Նազարյան, Նամականի, էջ 239:

¹⁵⁸ Սերոբյանց Թյուբյունցի Յակոբ Յարությունյան, խոսակցություն..., էջ 495:

1. «Խոսակցություն...» հոդվածում բնութագրվում է թագավորություն հասկացությունը¹⁵⁹: Այդ միտքը նույն ձևակերպումն ունի նաև «Հայերի կոչումը մարդկության մեջ» հոդվածում¹⁶⁰:

2. Հոդվածում առաջարկվում է կազմել ընկերություններ (կովկասյան ընկերության կենտրոնը համարելով Թիֆլիսը), որոնք զբաղվեին տեղի հայության բարոյական և նյութական խնդիրներով¹⁶¹: Այդ միտքը լայնորեն արժարժված է «Առաջարկություն մի ընդհանուր հայկական ընկերություն Ռուսաստանի մեջ...» և «Հայերի կոչումը մարդկության մեջ» հոդվածներում¹⁶²:

3. «Խոսակցության...» հեղինակը խորին սրտացավությամբ քննության է առնում հայերին ինքնաճանաչության հասցնելու խնդիրը¹⁶³: Այդ միտքը գրեթե նույնությամբ արժարժվում է Նազարյանի՝ Կ. Ծ.-ին հղած նամակում¹⁶⁴, ինչպես նաև «Հայերի կոչումը մարդկության մեջ» և «Նոր տարու մտածությունը» հոդվածներում¹⁶⁵:

4. «Խոսակցություն...» հոդվածին կից՝ հոդվածագրի նամակում խոսվում է հայերի նյութապաշտության մասին. «Այսօր արծաթ, էգուց արծաթ, մյուս օրը արծաթ, և դարձյալ արծաթ ու անվերջ արծաթ աղաղակելով կանցունեն յուրյանց օրերը»¹⁶⁶: Դորպատի ուսանողներին հղած նամակում Նազարյանը, գանգատվելով քիֆլիսեցիներից, որոնք չեն կամենում օգնել «Հյուսիսափայլի» հրատարակությանը և թույլ են տալիս, որ առաքինությունը ոչնչանա իր խանձարուրում, գրում է. «Որովիետև հարկավոր չէ առաքինությունը, այլ միայն արծաթ, կրկին արծաթ, և դարձյալ արծաթ»¹⁶⁷:

5. Ազգային մարմնի ցավերը և խոցերը հրապարակելու անհրաժեշտության մասին խոսվում է «Խոսակցություն...» հոդվածին կից նամակում¹⁶⁸: Այդ միտքն արտահայտված է Մատթեոս կաթողիկոսին հղած՝ Նազարյանի վերը նշված՝ 1860 թ. դեկտեմբերի 21-ի քվակիր նամա-

¹⁵⁹ Նույն տեղում, էջ 494:

¹⁶⁰ «Հյուսիսափայլ», 1859, թիվ 1, էջ 6:

¹⁶¹ **Սերոբյանց Թյությունջի Հակոբ Հարությունյան**, Խոսակցություն..., էջ 499:

¹⁶² «Հյուսիսափայլ», 1862, թիվ 7, էջ 43-53; նույն տեղում, 1859, թիվ 1, էջ 12-13:

¹⁶³ **Սերոբյանց Թյությունջի Հակոբ Հարությունյան**, Խոսակցություն..., էջ 493:

¹⁶⁴ «Հյուսիսափայլ», 1859, թիվ 11, էջ 899:

¹⁶⁵ Նույն տեղում, 1859, թիվ 1, էջ 2; նույն տեղում, 1860, թիվ 1, էջ 9:

¹⁶⁶ **Սերոբյանց Թյությունջի Հակոբ Հարությունյան**, Նամակ առ հրատարակիչը, էջ

483:

¹⁶⁷ **Ստ. Նազարյան**, Նամակահի, էջ 190:

¹⁶⁸ **Սերոբյանց Թյությունջի Հակոբ Հարությունյան**, Նամակ առ հրատարակիչը, էջ

486:

կում¹⁶⁹, ինչպես նաև «Հայերի կոչումը մարդկության մեջ» հոդվածում¹⁷⁰:

6. «Խոսակցություն...» հոդվածին կից՝ Թյուբյունցի Հակոբի նամակում նշված է, թե հայերի անընթերցասիրության պայմաններում «սխալ գաղափար» է այն, թե ազգը կարելի է յուր «դարավոր, մահանման թմրութենից» շարժել մատենագրությամբ, ինչպես և անհնարին է համարվում «մի օրագրի հառաջադիմություն այն ազգի մեջ, ուր չկան ընթերցողք, չկան հասկացողք»¹⁷¹: Այս հետևությունը բառացի, ամենայն դառնությամբ կրկնվում է «Նոր տարու մտածությունք», «Հայտարարություն» և «Ծանուցում» հոդվածներում¹⁷², ինչպես նաև Նազարյանի՝ Յ. Սայաթնովյանին հղած՝ 1861 թ. ապրիլի 17-ի թվակիր նամակում¹⁷³:

Ինչպես արդեն նշեցինք, Թյուբյունցի Հակոբ Սերոբյանցի երկրորդ հոդվածը ևս տպագրվել է «Հյուսիսսփայլում» (1861, թիվ 9), այն ժամանակ, երբ Նալբանդյանը Կալկաթայից վերադարձի ճանապարհին էր (նա Կալկաթայից մեկնել էր սեպտեմբերի 27-ին): Նամակի գրության շարժառիթը հետևյալն էր. 1861 թ. «Հյուսիսսփայլում» (թիվ 3)՝ Հակոբ Ալիշանյանց ստորագրությամբ տպագրվում է բանավիճային մի հոդված՝ ուղղված «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրի տեսաբան Գարեգին Մուրադյանի դեմ, որը քննադատել էր Նազարյանի «Մենդելսոն, Լեսսինգ և Լավատեր» հոդվածը: Ինչպես պարզվում է Քաջբերունու հուշերից՝ այդ ստորագրությամբ հանդես էր եկել Մոսկվայի համալսարանի ուսանող, «Հյուսիսսփայլի» թղթակից Մարտիրոս Սիմոնյանցը¹⁷⁴:

1861 թ. հունիսին Յ. Չերքեզյանը «ճռաքաղում» հրապարակում է մի պատասխան հոդված, որում հայտնելով, թե Յ. Ալիշանյանց անունը մտացածին է, խոսքն, ըստ էության, ուղղում է Նազարյանին¹⁷⁵: Եկեղեցական դոգմատիզմի դիրքերից նա այստեղ խստագույնս քննադատում

¹⁶⁹ Ստ. Նազարյան, Նամականի, էջ 239:

¹⁷⁰ «Հյուսիսսփայլ», 1859, թիվ 1, էջ 12:

¹⁷¹ Սերոբյանց Թյուբյունցի Հակոբ Հարությունյան, Նամակ առ հրատարակիչը, էջ 484:

¹⁷² Նույն տեղում, 1860, թիվ 1, էջ 9; նույն տեղում, 1861, թիվ 3, էջ 252; նույն տեղում, 1862, թիվ 10, էջ 196:

¹⁷³ Ստ. Նազարյան, Նամականի, էջ 243, 244:

¹⁷⁴ [Քաջբերունի, Վաթսունական թվականներում [հուշեր].– Հուշեր և հոդվածներ Ստեփանոս Նազարյանի մասին. աշխատասիրությամբ Ռ. Պ. Նանույանի, Երևան, 1996, էջ 55:]

¹⁷⁵ Յ. Չերքեզյան, Մեկնութիւն մեկնութեան, որ տան է Նազարյանցը «Հյուսիսսփայլի» 3 ամսատետրակումը Ալիշանյանցի անունով յուր անցյալ տարի գրած հայոց եկեղեցու ինֆորմին, 10 ամսատետրակումը.– «Ճռաքաղ», 1861, թիվ ԻԳ-ԻՂ/13-14:

է եկեղեցու բարենորոգման՝ նազարյանական պահանջը և միաժամանակ, փորձում ձախողել Մոսկվայում մասնավոր դպրոց հիմնադրելու նրա ծրագիրը: Նազարյանի նախատեսած դպրոցը նա համարում է բողոքական խորամանկությամբ հյուսված որոգայթ, որով Նազարյանը, ինչպես նա գրում է, իբր օր ու գիշեր հայ մանուկներին պետք է քարոզի «լուստերական կրոնի ուսումն՝ լուսավորության անունով, պետք է ցանե ռեֆորմացիայի սերմերը մատաղ սրտերի մեջ»¹⁷⁶: Վերջում խոսքն ուղղելով կաթողիկոսին՝ Չերքեյանը նրանից խնդրում է հայոց եկեղեցին փրկել Նազարյանից: Հարվածը նենգ էր և հղի ամենածանր հետևանքներով: Նազարյանն իսկույն պատասխանում է այդ հողվածին¹⁷⁷ և միաժամանակ իր ելույթն առավել նպատակասլաց դարձնելու մտադրությամբ՝ իբրև ժողովրդական հատվածների վրդովմունքի արտահայտություն՝ կազմակերպում է Հակոբ Սերոբյանցի երկրորդ նամակը՝ «Առ հրատարակողը»¹⁷⁸: Ինչպես ասացինք նախընթաց հողվածի վերաբերյալ՝ Թյուբյունջի Հակոբ Սերոբյանցի երկրորդ նամակի հեղինակը նույնպես համարում ենք Նազարյանին:

Նամակի առաջին բաժինը կուռ տրամաբանությամբ գրված խոսք է՝ հայ հասարակական կյանքում ստեղծված իրավիճակի և Չերքեյանին հրապարակավ պատասխանելու անհրաժեշտության մասին (մի բան, որ հապաղում էին անել «հարգելի գիտնականները» և «ճշմարտասեր ուսումնականները»): Երկրորդ բաժինը կազմված է հինգ առանձին հարցերի ձևով և ուղղակիորեն առնչվում է Չերքեյանի հարցադրումներին: Առաջին երեք կետերում հողվածագիրը կշտամբում է Չերքեյանին՝ հիմնական խնդիրը թողած՝ «Հյուսիսսփայլի» աշխատակիցներին հայիոյելու և կամ գործի արժանիքների մասին խոսելու փոխարեն՝ հողվածագրի ինքնության շուրջ վայրիվերո դատողություններ անելու համար: Այստեղ նամակի հեղինակը հանգում է այն հետևության, որ նրա հողվածները «բոլորը անձնական բաներ են և անձնական վրեժ-խնդրության պղտոր գործ»:

Թյուբյունջի Հակոբի նամակի բուն խնդիրը, սակայն, ամփոփված է չորրորդ և հինգերորդ հարցադրումներում: Այսպես, նա հերքում է Չերքեյանի այն միտքը, թե ժողովուրդը ոչինչ չի հասկանում: Մենք նույնպես կարդում ենք, գրում է Թյուբյունջի Հակոբը, կարդում ենք ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն և տեղյակ ենք «ռուսաց կրթյալ հասարակու-

¹⁷⁶ Նույն տեղում, թիվ ԻԴ/14, էջ 393:

¹⁷⁷ Ստեփանոս Նազարյանցի մի քանի խոսք առ Հովսեփ Չերքեյանցը, և հրապարակական նամակ առ պատվելի հայոց ազգը. - «Հյուսիսսփայլ», 1861, թիվ 9, էջ 234-241:

¹⁷⁸ Նույն տեղում, էջ 242-250:

թյան» արտահայտած մտքերին: Այնուհետև հողվածագիրը Չերքեզյանին խորհուրդ է տալիս «այժմյան ռուսաց օրագիրները փոքրիշատե կարդալ ճշմարիտ սրտով և խղճով և համեմատել պ. Նազարյանցի գրվածների և գաղափարների հետ և տեսանել, արդյոք սոքա համաձայն են նոցա հետ, թե ոչ»¹⁷⁹: Նազարյանի հայացքների համար միանգամայն բնորոշ հարցադրում է նամակի այն հատվածը, որտեղ ասվում է. «Դուք ինքներդ լինելով մեր ազատամիտ քննողական ու հասկացողական օրերի կարգից ամենևին դուրս մարդ, դուք ինքներդ մեր ժամանակի նոր լուսավորությունից ետ մնացած, կամիք նույնպես հայոց ազգը դուրս հանել այժմյան լուսավոր ժամանակի շրջանից և տանել կոխել այն հին միջնադարյան խավարի ապականության մեջ»¹⁸⁰: Նազարյանի հողվածներին հարազատ ոճով են գրված և այն տողերը (դրանք, ի դեպ, կրկնվում են նրա մի շարք հողվածներում), թե «ազատախորհուրդ, բարեմիտ» թագավորի կամքով թույլ է տրված, որ «եվրոպական լուսավորության և գիտության աղբյուրը օր է օր առավել առատ բխե և զովացնե հոգիքը Ռուսաստանի մեջ»¹⁸¹:

1861 թ. հունիսին, երբ գրվում էր այս նամակը, թեև Նազարյանն արդեն գիտեր «Յուսիսափայլի» հրատարակության դադարեցմանը վերաբերող, հունիսի 12-ի թվակիր, Սինոդի որոշման մասին, այնուամենայնիվ, հինգերորդ կետում դիվանագիտական ոճով սիրաշահում է կաթողիկոսին, ձգտելով փոխել նրա վերաբերմունքը թե՛ իր աշխատանքների և թե՛ առհասարակ հայ գործիչների լուսավորական ձեռնարկումների նկատմամբ:

Այսպիսով, մենք կարծում ենք, որ Թյուբյունջի Յակոբի նամակում արտահայտվել են կոնկրետ իրադրության մեջ ծագած մի քանի հրատապ հարցեր, որոնց և անհապաղ պատասխանել է Նազարյանը:

Նալբանդյանը չէր կարող լինել այս նամակի հեղինակը միայն այն պատճառով, որ անտեղյակ էր այն իրադարձություններին, որոնց նվիրված է նամակը: Ընդգծենք, որ Չերքեզյանի հողվածը, որին պատասխանում է Թյուբյունջի Յակոբը, տպագրվել է «Ճաբաղի» հունիսյան համարում, երբ Նալբանդյանը գտնվում էր Կալկաթայում:

Մեզ համար նվազ կարևոր չէ նաև Չերքեզյանի կարծիքը նամակի հեղինակի ինքնության մասին: Նա Սադա Ալեքսանդրյանցին և Թյուբյունջի Յակոբին համարում է իրական, բայց կրթություն չունեցող մարդիկ, որոնք, ըստ նրա, հեգեղով կարող են խոսել մատենագրության և

¹⁷⁹ Նույն տեղում, էջ 247:

¹⁸⁰ Նույն տեղում:

¹⁸¹ Նույն տեղում:

գրականության մասին: Ինչ վերաբերում է սույն նամակին, ապա Չերքեզյանը, թերևս ոչ առանց հիմքի, նկատում է, որ Թյուքունջի Յակոբը գործնականորեն չէր կարող իր նամակում կրկնել Նազարյանի «Յրապարակական նամակի» թեզերը, քանի որ այդ երկու նամակները տպագրվել են ամսագրի միևնույն համարում: Այդ նամակը նա համարում է Նազարյանի կողմից գրված և այն դիտում իբրև իր ելույթի արձագանքը¹⁸²:

Ծանոթանանք Ս. Դարոնյանի դիտողություններին: Նա նշում է, որ Նալբանդյանն այս նամակը գրել է «Երկու տողի» հետ միաժամանակ, հաշվի առնելով, որ պամֆլետը չէր կարող հասնել արևելահայ ընթերցողներին: Ս. Դարոնյանն ավելացնում է նաև, որ Նալբանդյանն այս նամակում ևս պահպանում է իր՝ միամիտ մարդ լինելու դիմակը (այսինքն՝ «Թյուքունջի» ստորագրությունը), «քանի որ հակառակ դեպքում նա իրեն կմատներ»¹⁸³: Յարգ է ծագում. այս նամակի հեղինակն ի՞նչ «վտանգավոր» մտքեր էր հայտնում, որ ստիպված լիներ դիմելու գաղտնապահության: Ավելորդ չենք համարում հիշեցնել, որ ժամանակին հայ ընթերցողներին քաջ հայտնի էր «Կոմս Էմմանուել» ծածկանվան գաղտնիքը, բայց այդ հանգամանքը Նալբանդյանին չէր մղում գաղտնապահության, թեև «Հիշատակարանում» նա շատ ավելի ծանրակշիռ մտքեր էր արժարծում:

Ս. Դարոնյանն այն կարծիքն է հայտնում, ըստ որի՝ «Յյուսիսափայլին» սպառնացող վտանգի ժամանակ Նազարյանին, ինպես միշտ, «այն ափից» օգնության ձեռք է մեկնել Նալբանդյանը՝ ուղարկելով իր, այսինքն՝ Թյուքունջի Յակոբի «Նամակը»: Կարծում ենք, վերը բերված փաստերը վկայում են դրա անհավանականության մասին: Ավելին, ծանոթությունը Թյուքունջի Յակոբի «Նամակի», Նազարյանի «Մի քանի խոսք առ Յովսեփ Չերքեզյանը...» հոդվածի և «Երկու տող» պամֆլետի հետ մեզ հանգեցնում է հակառակ հետևության: Մեր կարծիքով, ոչ թե Նալբանդյանն է արձագանքել մոսկովյան լուրերին՝ գրելով Թյուքունջի Յակոբի նամակը, այլ «Երկու տող» պամֆլետով ոգևորված՝ Նազարյանն է գրել և՛ իր «Մի քանի խոսք...» հոդվածը, և՛ «Յյուսիսափայլի» միևնույն համարում տպագրված Թյուքունջի Յակոբի «Նամակը»: Եվ ահա թե ինչպես: Նալբանդյանը «Երկու տողում» մեկնաբանում, հիմնավորում և առավել մեծ ուժգնությամբ է բարձրացնում «Յյուսիսափայլի» պահանջած՝ եկեղեցու բարենորոգման կարևորության հարցը, ուստի, միանգամայն տրամաբանական է, որ նա իր պամֆլետը

¹⁸² «Մասյաց աղավնի», 1861, թիվ 21, էջ 249:

¹⁸³ Ս. Դարոնյան, նշվ. աշխ., էջ 58:

Նազարյանին ուղարկեր այն ճանապարհով, ինչպես Ռուսաստանում Սվաճյանի «Մեղուի» համարներն էին ստացվում: Մեր կարծիքով, ծանոթանալով «երկու տող» պամֆլետին, որն, իսկապես, «այն ափից» կարող էր ուղարկել Նալբանդյանը, Նազարյանը ոգեշնչվել է, նոր մղումներ ստացել և դրա ազդեցությամբ գրել Չերքեզյանին ուղղված հրապարակային նամակը, լավագույններից մեկը՝ իր հոդվածներից¹⁸⁴: Այդ նամակի որոշ հատվածներում բացահայտորեն արտացոլվել են Նալբանդյանի ոգին, հզոր տրամաբանությամբ հակառակորդին հարվածելու նրա արտահայտչածները: «Թյուքունջի Յակոբի» ստորագրությունը կրող հոդվածը Նազարյանը գրել է իբրև լրացում՝ իր «Մի քանի խոսքին...»:

Ծանոթանանք այդ հատվածներին:

Նալբանդյան. «Պարոնի [Չամուռճյանի] վայրիվերո աղճատաբանությունը ստոր են ամենայն տեսակ քննութեմից»¹⁸⁵:

Նազարյան. «Ձեր անծայր ու անվերջ աղճատաբանությունը կարող չեն մի րոպե ևս խախտել իմ անձնահարգության հավասարակշիռը»¹⁸⁶:

Նալբանդյան. «Պարոն Չամուռճյանի և մեր գրվածներից պարզ երևում է, որ մեր երկուքի ճանապարհը այլ է բոլորովին, և տքա այնպիսի ճանապարհներ են, որ ոչ բնավ հանդիպում են միմյանց»¹⁸⁷:

Նազարյան. «Պարտ են ասել ձեզ, որ իմ ու ձեր մեջ չկա ոչինչ հասարակաց բան. մեր հայացքը այնքան ներհակ ու հեռի են միմյանցից, որքան արևելք արևմտից: Իմ ճանապարհս հայուն է դեպի հառաջ, ձերը դեպի ետ: ...Ուրեմն մեք կարող չենք ոչ ընկեր լինել միմյանց և ոչ ճանապարհակից»¹⁸⁸:

Նալբանդյան. «Ահավասիկ մեք կանգնած ենք այժմ, բաց հրապարակի վերա»¹⁸⁹:

Նազարյան. «Հայե՛ր, մեք կանգնած ենք այսօր Ձեր դատաստանի հրապարակի մեջ և կամինք լսել Ձեր վճռական դատակնիքը»¹⁹⁰:

Նալբանդյան. «Եվ այս նպատակին հասանելու համար չէ պիտո ընկրկինք ոչ բանտի և ոչ աքսորի առաջև, ոչ միայն բանիվ և գրչով,

¹⁸⁴ Ստ. Նազարյան, Մի քանի խոսք առ Յովսեփ Չերքեզյանը.— «Յուսիսափայլ», 1861, քիվ 9, էջ 234-241:

¹⁸⁵ Մ. Նալբանդյան, Երկու տող, էջ 10:

¹⁸⁶ Ստ. Նազարյան, Գշվ. աշխ., էջ 235:

¹⁸⁷ Մ. Նալբանդյան, Գշվ. աշխ., էջ 17:

¹⁸⁸ Ստ. Նազարյան, Գշվ. աշխ., էջ 235:

¹⁸⁹ Մ. Նալբանդյան, Գշվ. աշխ., էջ 18:

¹⁹⁰ Ստ. Նազարյան, Գշվ. աշխ., էջ 238:

այլև զենքով և արյունով, եթե մի օր արժանի լինինք զենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությունը նվիրել և սրբել մեր արյունով»¹⁹¹:

Նազարյան. «Հավատացա՛ծ կացեք, որ Նազարյանցը, որ այսքան երկար տարիք կարողացել է ապրել յուր սուրբ գաղափարների համար, այժմ ևս կարող է քաջությամբ մեռանել այդ գաղափարների համար, արյունո՛վ կնքել յուր սրտի վկայությունը»¹⁹²:

Ինչ վերաբերում է Թյուքունջի Հակոբի հողվածից բերված «հայիտությունը», «ճիզվիտ», «ղժոխական» և այլ բառերին, որոնք Ս. Դարոնյանը համարում է Նալբանդյանի երգիծանքին բնորոշ, ապա հարկ է ասել, որ դրանք նույնքան էլ հատուկ են Նազարյանի և «Հյուսիսափայլի» թղթակիցների հողվածներին: Այս առումով ցանկանում ենք ավելացնել, որ չնայած բառերի կրկնություններին, մի բան, որ միանգամայն օրինաչափ է, Նալբանդյանն ու Նազարյանն ունեին խոսքի իրենց ինքնատիպ ոճը՝ նախադասության շարահյուսական կառուցման իրենց եղանակը, արտահայտչաձևերի սեփական միջոցները, խոսքի հուզումնալից անկրկնելի երանգները: Դրանցո՛վ նաև պետք է բնագրերում որոնել-գտնել և զգալ՝ հեղինակային «եսը», որի մասին Վ. Գ. Բելինսկին վաղուց ի վեր ասել է, թե «ոճն ինքը տաղանդն է, ինքը միտքն է»¹⁹³: Այս հարցում, սակայն, նալբանդյանագիտությանը պետք է օգնեն նաև մեր լեզվաբանները:

ՃԱՏՈՒՐ ԶԵԼԵՊԻ. Այս ստորագրությամբ գրված «Նամակ առ հրատարակողը» հողվածը տպագրվել է 1862 թ., «Հյուսիսափայլի» մայիսյան համարում՝ Հայաստանի աշխարհագրական քարտեզի տպագրության վերաբերյալ Նալբանդյանի «Հայտարարության» հետ մեկտեղ: Ի՞նչ պարագաներում է այն գրվել: 1862 թ. «Հյուսիսափայլի» բաժանորդագրության գործը գրեթե ձախողված էր: Նազարյանի նամակներից պարզվում է, որ փետրվարին նա դեռևս չգիտեր, թե ամսագիրը հրատարակվելո՞ւ է, թե ոչ: Ի վերջո, մի քանի բարեկամների նյութական օժանդակությամբ, ապրիլին հրատարակվում է ամսագրի առաջին համարը, բայց նախկինում ընդունված հինգի փոխարեն՝ երեք մամուլ ծավալով: Քանի որ խմբագիրը ոչ մի հնարավորություն չուներ աշխատակիցներ պահելու, ամսագրի հրատարակության ամբողջ ծանրությունը կրում էր միայնակ: 1862 թվականն իր հետ բերում է ևս մեկ մտահոգություն:

¹⁹¹ Մ. Նալբանդյան, նշվ. աշխ., էջ 18-19:

¹⁹² Ստ. Նազարյան, նշվ. աշխ., էջ 239:

¹⁹³ [В.Г. Белинский, Русская литература в 1843 году. — В.Г. Белинский, Собрание сочинений в трех томах, т. 2, М., 1948, с. 604.]

Արդեն նախորդ հողվածի առիթով ասացինք, որ 1861 թ. ապրիլին Նազարյանը տպագրել էր Մոսկվայում «Գիտնական և գործական դպրոցի» հիմնադրմանն առնչվող հայտարարությունը: Հակառակորդների, մանավանդ Չերեքյանի ջանքերով, այդ ծրագիրը տապալվում է: Թեև հոկտեմբերին Նազարյանը ստացել էր պաշտոնական թույլտվությունը, բայց ծնողները նրան աշակերտ չէին վստահում: Վիատությունը կատարյալ էր, և ահա նա տպագրում է Ծատուր Չելեպիի նամակը, որի՝ Նազարյանի գրչին պատկանելուն վերաբերող մեր ենթադրությունը կասկած չի հարուցում¹⁹⁴: Այս հողվածում Նազարյանն ազատություն է տալիս իր տխուր խոհերին, բոլոր դեպքերում հարցերի քննության ժամանակ պահպանելով հայ հասարակական կյանքի օրվա վիճակի քննարկման պատշաճ մակարդակը:

«Հյուսիսափայլի» բաժանորդագրության ճգնաժամային վիճակը նա չէր համարում սոսկ մեկ ամսագրի ճակատագիր: Նազարյանը հասարակության, մասնավորապես, երիտասարդության անտարբերության մեջ տեսնում էր հանուր ազգի մեջ «ընկերական կյանքի պակասության», «ազգի մեռելական սառնասրտության» երևույթը՝ «դեպի որևիցե իմացական բարիք»: Վաթսունական թվականների լուսավորական շարժման վերելքի գործում հսկայական ներդրում ունեցող Նազարյան-լուսավորիչը սրտի խորին ցավով էր արձանագրում հայ հասարակական կյանքում նկատվող հոռի երևույթները և իր պարտքն էր համարում զգաստացնել հայությանը: Նա գրում էր. յուրաքանչյուր ազգ, նրա հոգևոր և մշակութային կյանքը կենդանի է, «երբ նա հառաջադեն է, հառաջ է խաղում ժամանակի հետ. ապա թե ոչ, մեռած է»: Նազարյանն ուշադրություն է հրավիրում, ահագանգում է. «Մեր հայերը կամ պիտի զարթնուն դեպի մի նոր կենդանություն, կամ պիտի մեռանին մի հավիտենական ազգային մահով. մի միջասահման բան չկա այստեղ»¹⁹⁵:

Նամակում արծարծված երկրորդ հիմնական խնդիրը կապված է ազգային դպրոցների հիմնադրման հետ: Նշեցինք, որ նրա մասնավոր դպրոցի ծրագիրը տապալված էր: Ուշադրություն հրավիրելով Ղարաբաղի և Վրաստանի թեմերում ազգային դպրոցներ հաստատելու վերաբերյալ կաթողիկոսի թույլտվության վրա՝ Նազարյանը ողջունում է այդ իրողությունը և ներկայացնում դպրոցական մի հակիրճ, բայց շատ հիմ-

¹⁹⁴ Այս ենթադրությունը, իբրև հավաստի իրողություն, թեև առանց հիմնավորումների, մենք հայտնել ենք դեռևս 1958 թ.: [Տե՛ս Մ. Հ. Մխիթարյան, «Հյուսիսափայլ» ամսագիրը, էջ 225:]

¹⁹⁵ Ծ. Չելեպի, Նամակ առ հրատարակողը. – «Հյուսիսափայլ», 1862, թիվ 5, էջ 227:

նավոր ծրագիր: Շատ հետաքրքրական է, անշուշտ, որ հետագայում նա այն ընդլայնում է և 1864 թ.՝ «Ազգային մտածությունը» խորագրով տպագրում «Հյուսիսափայլում»¹⁹⁶: Համեմատությունն ի հայտ է բերում հիմնական մտքերի և հարցադրումների բազմաթիվ կրկնություններ: Ուշագրավ է և այն հանգամանքը, որ հոդվածի վերջին հատվածում Ծատուր Չելեպին, մի պահ մոռանալով, որ ինքը սոսկ շարքային թղթակից է, ընթերցողներին է դիմում խմբագրին վայել ուսուցողական ոճով¹⁹⁷:

Ս. Դարոնյանի՝ «Ծատուր Չելեպի» ծածկանվան պատկանելիության հիմնավորումը համոզիչ չէ: Այսպես, այն միտքը, թե թզենին չորացնելու վերաբերյալ աստվածաշնչյան ասույթը Նալբանդյանն օգտագործել է իր մեկ այլ հոդվածում, ոչինչ չի ապացուցում, որովհետև Նազարյանին ևս այն մատչելի էր: Այն դիտողությունը, թե «Ճիվիտներ» բառը Նալբանդյանն է օգտագործել, դարձյալ ոչնչի մասին չի վկայում, քանզի նույն հաճախականությամբ այն օգտագործել է նաև Նազարյանը. այլ կերպ լինել չէր կարող: Չէ՞ որ նրանք միևնույն ամբիոնից մի հաստատուն ծրագրով պայքարում էին ճիվիտների հայ նմանակների դեմ: «Դժոխարմատ նախանձ» բառերը նույնպես չէին կարող միայն Նալբանդյանի մենաշնորհը լինել, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ Նազարյանն այդ նախանձից շատ ավելի դառնություններ էր ճաշակել և գանգատվել ավելի շատ, քան իր երիտասարդ բարեկամը: Ինչ վերաբերում է հայերի մահվան և արթնության շուրջն արված դատողություններին, ապա հայտնի է, որ Նազարյանի լուսավորական քարոզները հիմնականում ծավալվում են փիլիսոփայական այդ ձևակերպման հենքի վրա:

Ս. Դարոնյանը գտնում է, թե Նալբանդյանն իր մի շարք հոդվածներում օգտագործել է «Ով ունի ականջ լսելու, թող լսե» և «Ձայն բարբառոյ յանապատի» արտահայտությունները: Նազարյանի հոդվածներում նույնպես այդ արտահայտություններն օգտագործված են: Առավել լուրջ է Ս. Դարոնյանի այն դիտողությունը, համաձայն որի՝ քանզի «Նամակը» տպագրվել է նույն համարում, որտեղ և Նալբանդյանի «Հայտարարությունը», ուրեմն նա ի վիճակի էր, թեպետ և Պետերբուրգում, գրելու և Ծ. Չելեպիի «Նամակը»: Այս պնդումը, սակայն, մենք անհավանական ենք համարում: Նախ «Երկրագործության» հեղինակը, որը մի քանի օր առաջ էր ժամանել Եվրոպայից, հազիվ թե ժամանակ ու տրամադրություն ունենար հասարակությանը «Հյուսիսափայլի» բաժանորդա-

¹⁹⁶ Ստ. Նազարյան, Ազգային մտածությունը. – Նույն տեղում, 1864, թիվ 3:

¹⁹⁷ Ծ. Չելեպի, նշվ. աշխ., էջ 233-234:

գրության և ազգային դպրոցների ծրագրերի հետ կապված հարցերով զբաղեցնելու համար: Այնուհետև Ծատուր Չելեպիի «Նամակում» և Նազարյանի հողվածներում երևան եկած նմանություններն այնքան շատ են, որ բացառում են «Ծատուր Չելեպիի» ստորագրությունը՝ Նազարյանի գրական ծածկանունը համարելու հետ կապված փոքր-ինչ կասկած:

Թվարկենք այդ նմանություններից մի քանիսը:

Ծատուր Չելեպի. «Ո՛ր ֆաբրիկանտը աշխարհի երեսին կարող է յուր կապիտալը դնել մի ապրանքի պատրաստության վերա, որո համար չկա վաճառելու հրապարակ, որո խնդրողքը բոլոր հասարակության միջից մի տասն, քսան, երեսուն մարդ էին. ապրանքի կարոտությունն է, խնդրողքն են, գործադրողքն են, որ պահպանում են մի ֆաբրիկացիա և մի ֆաբրիկանտ»¹⁹⁸:

Նազարյան. «Մատենագրություն առանց հոգաբարձության գրանքը տարածելու, մի անհնարին գործ է, ի՛նչպես կարող է գործարանատերը (ֆաբրիկանտը) ապրանք պատրաստել, եթե չկային վաճառական հրապարակներ»¹⁹⁹:

Նազարյան. «...ֆաբրիկանտը կարող էր միայն պատրաստել վաճառելի նյութեր, եթե գիտեր, թե դոքա պիտառություն գտանելու են ժողովրդի մեջ, եթե նույն իսկ ժողովրդի կարիքը քաջալերում էր ֆաբրիկանտին գործ կատարել հասարակության համար:— Բայց եթե մի հասարակություն ոչինչ նյութական կարիք չունի... այդպիսի հասարակության մեջ կարող չէր լինել ոչինչ երկրագործություն, ոչինչ վաճառականություն, ոչինչ ֆաբրիկացիա, ոչինչ ճարտարություն»²⁰⁰:

Ծ. Չելեպի. «Յուսիսափայլի» ճառագայթներն ավելի լուսապայծառ են, «քան թե ասիական մարդերի թույլ և ցավագարված տեսությունը կարող էր տանել նորան»²⁰¹:

Նազարյան. «Ցնորամիտներ, որ կարող էին մտածել, թե արեգակը պիտի արտաքսվի երկնակամարից, որովհետև նորա ճառագայթները ծակում են նոցա ցավագար աչքերը»²⁰²:

Ծ. Չելեպի. «Մերայինքը ներե՛ն մեզ, որ այսպիսի սաստիկ լեզվով խոսում են նոցա հետ, մեղրոտ խոսքերով ամենադառն խնդիրների վե-

¹⁹⁸ Նույն տեղում, էջ 228:

¹⁹⁹ **Ստ. Նազարյան**, Կրիտիկա. Թափառական հրեա, գործ Էժեն Սյու ֆրանսիացու, էջ 333:

²⁰⁰ **Ստ. Նազարյան**, Նոր տարու մտածությունք.— «Յուսիսափայլ», 1860, թիվ 1, էջ 8:

²⁰¹ **Ծ. Չելեպի**, նշվ. աշխ., էջ 227:

²⁰² **Ստ. Նազարյան**, Յառաջաբան «Յուսիսափայլի» 1862 թվականի.— «Յուսիսափայլ», 1862, թիվ 1, էջ 2:

րա խոսել, կարող էին միայն եզվիտները, բայց ես չեմ պատկանում դոցա կարգին»²⁰³:

Նազարյան. «Մեղրոտ խոսքերից, որ այդքան սիրելի էին ազգի մեջ գտանված կարճամիտներին... «Հյուսիսափայլի» հրատարակողը միշտ հեռի է պահել յուր գրիչը, միտ դնելով քաղցր խոսքերի թունավոր ներգործությանը, միտ դնելով յուր սուրբ պարտականությանը դեպի յուր ազգը»²⁰⁴:

Ծ. Չելեպի. «Արդյոք այդ ուսումնարանների պատվելի հոգաբարձուքը գիտե՞ն և ճանաչո՞ւն են մի ազգային ուսումնարանի պիտույք, և թե առանց դպրոցական մատենագրության, սկսյալ օրինավոր այբբենարանից մինչև գիտության վերին մասունքը, կարող չէ ոչինչ ուսումնարան հառաջադեմ լինել»²⁰⁵:

Նազարյան. «Մի ազգային, մանավանդ թե հայկական դպրոց կարող չէ ոչինչ հառաջադիմություն գործել, առանց դպրոցական գրքերի, առանց պատրաստելու աշակերտների համար ուսումնական հանդերձանք զանազան գիտությունների մասին. սկսյալ այբբենարանից մինչև եվրոպական լեզուների և գիտությունների ուսումնասիրության հարկավոր գրյանքը»²⁰⁶:

Ծ. Չելեպի. «Հայերը պարծենում են միայն յուրյանց նախահարց պարծանքով, ինչպես մեզ երևում է, յուրյանց, ձեռքը զոգում դրած, ամմիտ անգործությունը արդարացնելու համար»²⁰⁷:

Նազարյան. «Մի՞թե դորանից հետևում է, որ և հասարակը պիտի հուսահատի, ձեռքը զոգումը դնե և բերանը բացած ասե միշտ...»²⁰⁸:

Ծ. Չելեպի. Ես «միայն հատուցանում եմ իմ խղճի պարտքը տալով *suum cuique*, այսինքն ամեն միևին յուր արժանը և պատկանելին»²⁰⁹:

Նազարյան. «Ով չգիտե այսպես մտածել, նա ոչինչ ըմբռնողություն չունի ազատության մասին, որ ամենին տալիս է յուր պատկանելին – *suum cuique*»²¹⁰:

²⁰³ **Ծ. Չելեպի**, 1862, թիվ 5, էջ 233:

²⁰⁴ **Ստ. Նազարյան**, Վերջաբան «Հյուսիսափայլի» 1858 թվականի.– «Հյուսիսափայլ», 1858, թիվ 12, էջ 529:

²⁰⁵ **Ծ. Չելեպի**, նշվ. աշխ., էջ 230:

²⁰⁶ **Ստ. Նազարյան**, Ազգային մտածությունը.– «Հյուսիսափայլ», 1864, թիվ 3, էջ 228:

²⁰⁷ **Ծ. Չելեպի**, նշվ. աշխ., էջ 232:

²⁰⁸ **Ստ. Նազարյան**, Ազգային մտածությունը.– «Հյուսիսափայլ», 1863, թիվ 12, էջ 3:

²⁰⁹ **Ծ. Չելեպի**, նշվ. աշխ., էջ 229:

²¹⁰ **Ստ. Նազարյան**, Կրիտիկա. Թափառական հրեա, գործ էօժեն Սյու ֆրանսիացու, էջ 332: Ուշագրավ փաստ է և այն, որ Նալբանդյանի գրականագիտական երախայրիքի՝ «Յաղագս հայկական մատենագիտութեան ճառի» բնագրի վրա Նազարյանի կատարած

Մի քանի խոսք հողվածագիրների ծածկանունների մասին: Ս. Դարոնյանը ենթադրում է, որ Նալբանդյանին վերագրվող վերոհիշյալ հողվածների ծածկանունները հողվածագիրն ընտրել է «Հյուսիսափայլում» 1858-1859 թթ. օգտագործած իր ծածկանունների հիման վրա: Այսպես, **Ծատուր Չելեպի** և **Պողոս Ղուկասյան** անունները նա կապում է **Ծատուր Պողոսյան** անվան հետ, իսկ **Մարտիրոս Ասլանբեկ** անունը պայմանավորում **Մարտիրոս Սառաֆյան** և **Շահբեգ** անուններով:

Մենք, սակայն, XIX դարի 60-ական թվականների բանավեճերում գրական կեղծանունների ստեղծման մեջ ինչ-որ օրինաչափություն ենք տեսնում: Վիճաբանող կողմերը, հավանաբար, իրենց խոսքին հանդիսավորություն հաղորդելու համար ընտրում էին աստվածաշնչյան կամ դիցական անուններ: Օրինակ՝ **Կիրակոսը** «Հայսմավուրքի» սրբերից է, իսկ **Մարգարյանը** կարող է կապվել մարգարե բառի հետ: **Պողոս Ղուկասյանի** անվան հիմքում կարող էին դրված լինել Պողոս առաքյալի և Ղուկաս Ավետարանչի անունները: **Ծատուր Չելեպին** կարող էր ստեղծվել Աստվածատուր անունից և թուրքերեն «չելեպի» բառից, որը հայերին տրվող պատվանուն էր:

Մսեր Մսերյանի **Վահան Արամյան** կեղծանունը, նրա իսկ խոստովանությամբ՝ Արամ նահապետն էր, որը վահանով պաշտպանում էր հավատն ու եկեղեցին: Ջարմայրի **Անդրեաս Պետրոսյան** անունը կարող էր կազմված լինել եղբայրներ Անդրեաս և Պետրոս առաքյալների անուններից: **Բարաղամ** անունը, որը Ս. Դարոնյանը կապում է Արամ նահապետի անվան կամ դամբար բառի հետ, կարծում ենք առնչվում է այդ անվան ստուգաբանությամբ ճշգրտված՝ «ժողովրդի որդի» հասկացության հետ: **Շնավոնը** և **Ղևին** Հակոբի հանդուզն ու վրիժառու որդիներն են «Գիրք ծննդոցից»: Ինչ վերաբերում է Թյուրյունջի Հակոբ Սերոբյանցին, ապա միանգամայն անտրամաբանական ենք գտնում, որ Նազարյանը՝ իբրև կեղծանուն օգտագործեր իր ժամանակակցի և բարեկամի անունը:

«ՀՅՈՒՄԻՍԱՓՈՅՆԻ» ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ*

1857 թ. գարնանը, Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Ստեփանոս Նազարյանը տարածում է 1858 թ. հրատարակելիք «Հյուսիսսափայլ» ամսագրի հայտարարությունը:

Նույն թվականի սեպտեմբերի 24-ի՝ Մոսկվայում հրատարակվող «Մոլվա» լրագրում տպագրվում է Նալբանդյանի հոդվածը, նվիրված «Հյուսիսսափայլի» հրատարակության հարցին: Ամսագրի հայտարարությունից բերված ընդարձակ քաղվածքներով Նալբանդյանը պատմում է ապագա հրատարակության նպատակների և անելիքների մասին²¹¹:

Մաշտոցյան Մատենադարանում պահվող Լազարյանների արխիվում մենք ծանոթացանք այդ հարցին նվիրված մեկ այլ հետաքրքրական փաստաթղթի հետ, որը լույս է տեսել Սանկտ Պետերբուրգում հրատարակվող «Ժուռնալ մինիստերստվա նարոդնոգո պրոսվեշչենիա» ամսագրում (1857, թիվ 9): Խոսքը վերաբերում է այդտեղ տպագրված Կարապետ Եզյանի ընդարձակ հոդվածին՝ «Հայկական պարբերական գրականության տեսությունը» խորագրով²¹²:

Ուշադրության արժանի այս հոդվածի առաջին մասում հեղինակը վեր է հանում հայ գրականության պատմական նշանակությունը և, հետևապես, դրա ուսումնասիրության կարևորությունը: «Հայերը,– գրում է Եզյանը,– որոնք 40 երկար դարերի միջով անց են կացրել իրենց բարոյական գոյությունը, ազգությունը, կրոնը, լեզուն, բարքերն ու սովորությունները, ամենայն իրավամբ արժանի են առավել ուշադիր ուսումնասիրության՝ եվրոպական գիտնականների կողմից: Նրանք ուշադրության արժանի են իրենց պատմական կյանքով, հնագույն լեզվով, հարուստ գրականությամբ, վերջապես իրենց ներկա դրությամբ՝ որպես մի ազգություն, որը ձգտում է արագորեն յուրացնել եվրոպական կրթության պտուղները»²¹³:

* Տպագրվել է՝ ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1958, թիվ 2, էջ 79-80:

²¹¹ [Կ. Ն. Григорян, Неизвестная статья Микаэла Налбандяна, напечатанная в газете "Молва". –] ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1954, թիվ 5, էջ 79:

²¹² Մաշտոցյան Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 113, գործ 81, վավ.

15:

²¹³ Նույն տեղում, [թ. 2]:

Դեպի լուսավորությունն ունեցած սերը Եզյանը համարում է հայ ժողովրդի հիմնական առանձնահատկություններից մեկը: Ինչպես V դարում հայ պատանհները գիտելիքներ ձեռք բերելու նպատակով մեկնում էին Աթենք, Յոուն, Բյուզանդիա և Ալեքսանդրիա, այնպես էլ ներկայումս Եվրոպայի և Ասիայի գրեթե բոլոր քաղաքներում, ուր միայն կենտրոնանում է փոքրիշատե նշանակալից հայ հասարակություն, հաստատվում են ուսումնարաններ և տպարաններ, հրատարակվում են գրքեր, ամսագրեր ու լրագրեր: Սակայն, հայ պարբերական հրատարակությունները կարճատև կյանք են ունենում: Այդ երևույթը հողվածագիրը բացատրում է այն բանով, որ հայ հասարակության համար նման հրատարակությունները դեռևս անհրաժեշտ պահանջ չեն դարձել: Չնայած դրան, հայ գիտնականներն իրենց անխոնջ աշխատանքով և մեծ զոհաբերությունների գնով ցանկանում են իրենց հայրենակիցներին ծանոթացնել եվրոպական քաղաքակրթության նվաճումների հետ: Հայկական պարբերականներն արևելյան թերթերից զանազանվում են հարուստ բովանդակությամբ և բնույթով: Դրանք քաղաքական տեսություններից բացի պարունակում են գիտական հողվածներ և գրական նյութեր:

Այնուհետև Եզյանը տալիս է հայկական ամսագրերի և լրագրերի համառոտ բնութագիրը՝ սկսած 1812 թ. մինչև 1850-ական թվականների վերջը: Հողվածագիրն ընթերցողների ուշադրությունը հրավիրում է Գ. Այվազովսկու «Մասյաց աղավնու» վրա և ամբողջությամբ արտատպում այդ ամսագրի հայտարարությունը: Հողվածի վերջին մասում Եզյանը բնութագրում է արևելահայ պարբերական մամուլը: Հպանցիկ անդրադառնալով «Կովկաս» և «Արարատ» պարբերականներին՝ նա ընթերցողներին հանգամանորեն ծանոթացնում է առաջիկայում հրատարակվելիք «Հյուսիսսփայլի» ծրագրի հետ՝ ամբողջությամբ թարգմանելով այդ ամսագրի հրատարակության հայտարարությունը: Հողվածում Եզյանը բնութագրում է նաև Նազարյանին: Այդ կապակցությամբ նա գրում է. «Ներկայումս արևելյան գրականության դոկտոր Ստ. Նազարյանի միջնորդության շնորհիվ բարձրագույն հրամանով նրան թույլատրված է 1858 թ. Մոսկվայում հրատարակել մի ամսագիր՝ «Հյուսիսսփայլ» վերնագրով: Չի կարելի արդարությամբ չխոստովանել պ. Նազարյանի մեծահոգի ծառայությունը գիտությանն ու ազգին: Նա արդեն իր գրքերով ձեռք է բերել իր հայրենակիցների երախտագիտությունը: Այդ գրքերը խոսակցական, օտարախոս բառերից մաքուր հայերեն լեզվով հայերին ծանոթացնում են եվրոպական գիտության բոլոր բնագավառներին: Ուստի՝ չի կարելի հաջողություն չցանկանալ այդքան օգտակար

ծեռնարկությանը, որը պետք է հանդիսանա եվրոպական գիտության և ռուսական քաղաքակրթության միջնորդը հեռավոր Կովկասի լեռներում, հետին Ասիայի խորքերում, ուր հազիվ թե լուսավորության ճառագայթ է թափանցել: Խմբագրի անունը հաջողության երաշխիքն է, և հայերը, գերազանցապես Ռուսաստանում բնակվողներն, անկասկած, պատրաստակամությամբ կպաշտպանեն այդ հրատարակությունը: Թուրքիայում հրատարակվող հայկական ամսագրերում արդեն հոդվածներ են երևում, որոնք ըստ արժանվույն գնահատելով Նազարյանի ծառայությունները՝ բացատրում են, թե ինչ նշանակություն կստանա նրա ամսագիրը հայերի կրթության պատմության մեջ:

Մեր տեսությունն ավարտում ենք պ. Նազարյանի հայտարարության թարգմանությամբ (նրա ամսագրի հրատարակության մասին), և այդպիսով հնարավորություն ենք ընձեռում իրենց, ընթերցողներին՝ դատելու նրա նպատակի ու նշանակության մասին»²¹⁴:

Հարկ է ենթադրել, որ ըստ նախապես մշակված մի ծրագրի՝ Նալբանդյանը և Եզյանը, 1857 թ. աշնանը, միաժամանակ հանդես գալով ռուսական պարբերական մամուլի էջերում՝ Մոսկվայի և Պետերբուրգի հասարակությանը ծանոթացրել են «Հյուսիսասիայի» հրատարակության հետ:

²¹⁴ Նույն տեղում, [թ. 12]:

«ՀՅՈՒՍԻՍԱՓՈՒՅԼ» ԱՄՍԱԳՐԻ ՇԱՊԿԱՆԿԱՐԻ ՇՈՒՐՁ*

«Սովետական գրականություն» ամսագրում (1977, թիվ 1) տպագրվեց արվեստաբան Սինաս Սարգսյանի «Հայ պարբերականների անվանաթերթից» հոդվածը, որն արժեքավոր ներդրում է հայ պարբերական մամուլի պատմության ուսումնասիրության գործում: Ի թիվս այլ պարբերականների՝ հեղինակը հանգամանորեն քննարկել է նաև XIX դարի 60-ական թվականների հայ լուսավորական-դեմոկրատական օրգան «Հյուսիսափայլի» երկու շապկանկարի ստեղծման հարցը: Ամսագրի երկրորդ շապկանկարի շուրջ հոդվածագրի կատարած բանասիրական զննումները և դրանից արվող հետևությունները միանգամայն համոզիչ են և լրացնում են «Հյուսիսափայլի» հրատարակչական գործի պատմության փաստերը: Ինչ վերաբերում է առաջին շապկանկարին, ապա այդ նկարի ստեղծման ակունքները չեն բացահայտվում:

Մ. Սարգսյանը, ինչպես և նախորդ բանասերները, «Հյուսիսափայլի» առաջին շապկանկարն իրավացիորեն դիտել է իբրև հայ իրականության մեջ իշխող «խավարի թագավորության» դեմ պայքարի ելած ամսագրի գաղափարական խորհրդանիշը: Հյուսիսային ծովի հավերժական սառցաբլուրներ, սառույցների մեջ բանտված առագաստանավ (որին կպատշաճեր լինել ծովի անհունության մեջ), պաղ մի բնաշխարհ և այդ սառած անշարժության հետնախորքի վրա ամպերի սև զանգվածներից վեր խոյացող լույսի հսկայական սյուներ: Գաղափարը խորհրդանշի մեջ մարմնավորված էր մեծ խնամքով ու մտքի խիզախությամբ: Սակայն, ուսկի՞ց էր ծագում այդ խորհրդանշի՝ հյուսիսափայլ հասկացության էությունը: Չէ՞ որ խավարի ամպերը կարող էին ճեղքել (և այդ ավելի հաճախ է պատահում) երկրագնդի հավատարիմ լուսատուի՝ արեգակի ճառագայթները:

1853 թ. Միքայել Նալբանդյանը մեկնում է Մոսկվա և աշխատանքի անցնում Լազարյան ճեմարանում: Այստեղ նա կապվում է ճեմարանի պրոֆեսոր Ստեփանոս Նազարյանի և Մոսկվայի առաջավոր հայ ուսանողության հետ: Նա և՛ ուսանում է Մոսկվայի համալսարանում, և՛ զբաղվում գրական աշխատանքով: Դեռևս 1854 թ. Նազարյանի հետ

* Տպագրվել է՝ «Սովետական գրականություն», 1979, թիվ 2, էջ 145-147:

միասին Նալբանդյանը ձեռնարկում է հայկական մի ամսագրի հրատարակության գործը, բայց կառավարությունը մերժում է այդ հայցը: Այդ օրերին, հայ իրականության մեջ իշխող կղերական մտայնության և դավանաբանական ունեցությունների դեմ պայքարի նկատառումներով, Նալբանդյանը նպատակահարմար է գտնում թարգմանել ֆրանսիացի վիպասան Էժեն Սյուլի «Թափառական հրեա» վեպը: Մեծ արագությամբ թարգմանելով վեպի առաջին հատորը, Նալբանդյանն այն տպագրում է 1857 թ., առաջին իր աշխատությունն «արդարամիտ մեծարանքով» նվիրելով Նազարյանի «միշտ գեղեցիկ» անվանը: Հայ հասարակական մտքի պատմության համար խիստ ուշագրավ՝ հեղինակային իր խոսքում Նալբանդյանը գրում է. «Կամեի միայն ընծայաբերել քեզ, գիշեր ու ցերեկ երկաթի դիմացկոտութենով, դառն հանգամանքների մեջ աշխատողիդ մեր նոր հայ մատենագրության վերա, որ Ռուսաստանի մեջ առաջին անգամ քեզանից զարկ ստացած՝ հառաջ է քայլում նույն ուղղութենով. կամեի միայն ընծայաբերել քեզ, ո՛վ առաքինի, հոգիացած Ազգասեր, այս իմ գրավոր վաստակը, որպես մի չքավոր, բայց արդարամիտ նշան հարգանքի»²¹⁵:

Այնուհետև հաշվի առնելով Նազարյանի անվերապահ մեծ հեղինակությունը, թարգմանիչը ցանկություն է հայտնում, որ նա բարյացակամորեն ընդունելով այս գործը, քաջալերի իր հետագա գրական քայլերը՝ «դեպի առավելը և ավելի արժանավորը մեր շատ սիրելի հայկական եղբայրակիցների օգտի համար»:

Դատելով թարգմանության առաջաբանից՝ Նալբանդյանը մեծ նշանակություն է տվել «Թափառական հրեայի» թարգմանությանը, նկատի ունենալով վեպի մարտական ուղղվածությունը հիսուսյանների շահախնդիր և անմարդկային գործունեության դեմ: Նա վեպն անվանում է «հրաշալի գործ», հանդգլած, որ այն «կարո՞ղ էր ըմբռնելի կերպով հասկացուցանել մեր հայերին, թե ի՞նչպես էր հիսուսյան կարգի ուղղությունը, որ պապականության հարազատ զավակներն էին»²¹⁶:

Էժեն Սյուլի «Թափառական հրեա» վեպն սկսվում է խորհրդանշական մի առաջաբանով, որտեղ նկարագրվում է հերոսի՝ Թափառական հրեայի և Հերովդիադայի ակնթարթային հանդիպումը Բերինգի նեղուցի ափին, որը տեղի էր ունենում հարյուր տարին մեկ անգամ: Ծանոթանալով ֆրանսիացի վիպասանի առաջաբանին՝ թարգմանված աշխարհաբար այնպիսի մի գրական լեզվով, որը 1856 թ. հարկ է գյուտ համա-

²¹⁵ [Միքայել Նալբանդյան, ԵԼԺ, հ. 2, էջ 71:]

²¹⁶ [Նույն տեղում, էջ 80:]

րել:

«Յուսիսային օվկիանոսը, յուր հավիտենական սառույցներով պատում է Սիբիրիայի և Յուսիսային Ամերիկայի անապատների եզերքը: Այս երկու երկիրները Բերինգյան նեղուցով միմյանցից բաժանված, աշխարհի առանձին մասերն են»²¹⁷: Սեպտեմբերի վերջն է... Սկսվում է բևեռային գիշերը. մոլեգնում են մրրիկները... Արևի ճառագայթները ջերմություն չեն տալիս. դրանց մեռյալ լույսն «աղոտանում է ծյունի կուրացուցիչ փայլմունքից, որ ծածկել է բոլոր անապատը, որի եզերքը դեպի հյուսիս վերջանում են սև-սև ահագին ապառաժների բազմութեամբ»:

Այս ապառաժյա հսկաների բազմության ստորոտումը, սփռած է սառն օվկիանոսի մեռյալ վարագույրը, ուր փոխանակ ալիքների, ընկած են այս և այն կողմ բազմություն սառույցի սարերի, որ յուրյանց կապույտ գազաթներովը անհայտանում են հեռի կիսաթափանցիկ ցուրտ օդի մեջ: Դեպի Արևելք, Սիբիրիայի սահմաններում, Ուլինին հրվանդանի երկու ծայրերի մեջ, հագիվիազ երևում է մուգ կանաչ մի գիծ, դեպի որը դանդաղ մոտենում են սպիտակ սառույցի բեկորների բազմությունը: Այդ Բերինգյան նեղուցն է. իսկ նեղուցի մյուս կողմում և նույնիսկ վերայով, կախված են Յուսիսային Ամերիկայի վերջին ծայրի, Կալլեսկյան հրվանդանի ապառաժների որձաքարյա հսկաները»²¹⁸:

...Գիշերային խավարի մեջ լսվում է ինչ-որ աղմուկ. կարծես մեծ-մեծ թռչուններ են թռչում և վայր ընկնում անձայն...

«Այս մունջ զարհուրանքը, հառաջընթաց էր բնության այն երևելի տեսարանին, որ ամենայն կենդանի և շնչավոր դողացնում է. ամեհի գազանից սկսած մինչև անմեղ արարածը... և ահա՛ դուրս ցայտեց վերջապես հյուսիսային փայլողությունը, այն մեծաքանչ տեսարանը, որ թեպետ մի անսովոր բան չէ բևեռային կողմերի համար»²¹⁹:

Այնուհետև սկսվում է մեզ համար մեծագույն հետաքրքրություն ներկայացնող բնության բացառիկ երևույթներից մեկի՝ հյուսիսափայլի նկարագրությունը. «Յորիզոնում երևեցավ պայծառ կիսագունդ, որի բերանի կենդրոնից, դուրս էին բխում ահագին լուսեղեն սյուներ, որոնք բարձրանալով գունդի ամենայն կողմից, լուսավորում են և երկինքը, և գետինը, և ծովը: Յրեղեն փայլմունքը, որպես արշալույսից ընկնում է և սահում է ծյունապատ դաշտի վերայից, բացարձակում է հիանալի լույս

²¹⁷ [Թափառական հրեա. գործ էմեն Սյու ֆրանսիացու, Միքայել Նալբանդյանցի աշխատութեամբ, Մոսկվա, 1857, հ. 1, էջ 95:]

²¹⁸ [Նույն տեղում:]

²¹⁹ [Նույն տեղում, էջ 97:]

սառուցի սարերի մոխրագույն գագաթների վերա, և փոքր-ինչ կարմրեցնում է և թեթև, ոսկու գույն է տալիս երկու ցամաքահողի սև-սև ահագին ապառաժներին»²²⁰:

«Թափառական հրեա» վեպը տպագրության է թույլատրվել 1856 թ. հոկտեմբերի 19-ին: «Հյուսիսսփայլի» հրատարակության գործով Նալբանդյանը և Նազարյանը զբաղվել են 1856-1857 թթ.: Հայտնի է, որ այդ տարիներին Նալբանդյանը տպագրական մայրեր ձեռք բերելու նպատակով մեկնել է նախ Պետերբուրգ, ապա Վենետիկ և Վիեննա:

Արդեն 1856 թ. մարտին Ռ. Պատկանյանը Գ. Քանանյանին հղած՝ մարտի 6-ի թվակիր նամակում գրում էր, որ Նալբանդյանին խոստացել էր Պետերբուրգում «ՉօւստՅՅՈՅՖ օրագիր «Հյուսիսայգ» անունով»²²¹:

Սիմեոն Սուլթանյանին հղած՝ 1856 թ. մարտի 21-ի թվակիր նամակում Նալբանդյանը ևս հայտնում է, որ իրենց հրատարակելիք «օրագիրը պիտո է անվանվի «Հյուսիսային փայլողություն» (հպշպրվՍպ րո՛վոպ) և ամենայն ամսական տետրակի վերա պիտո է տպվի որպես անունը, նույնպես այս փայլողության պատկերը» (ընդգծումը մերն է – Մ. Մ.)²²²:

Այսպես, ամսագրի ծրագրի մշակումը համընկնում է «Թափառական հրեա» վեպի առաջին հատորի թարգմանական աշխատանքի ժամանակներին: Հարկավ, այդ օրերին է ընտրվել ամսագրի անվանումը և նկարվել «փայլողության պատկերը»: Այն միանգամայն ներդաշնակում էր ամսագրի ոգուն և պետք է խորհրդանշեր «խավարի թագավորությունը» լուսավորելու առաքելությանը ասպարեզ իջնող ամսաթերթի անելիքը:

Ո՞վ է նկարել «Հյուսիսսփայլի» առաջին շապկանկարը: Մեզ թվում է, նկարի գաղափարը ճշգրտելուց հետո խմբագիրը և Նալբանդյանը փնտրել են հյուսիսսփայլի որևէ մի պատկեր և գտնելով Ավգուստ Բեկերի նկարը՝ ամսագրի համար հրավիրված նկարչին հուշել են իրենց գաղափարը, այն է՝ նկարել սառցալեռները, ամերիկյան ափի ահագնատիպ սառույցների սև զանգվածները, երկու ցամաքները հատող ջրի նեղիկ ժապավենը և որ ամենակարևորն է՝ բանտված առագաստանավը՝ բանականության խորհրդանիշը:

«Հյուսիսսփայլի» հրատարակությունից մեկ տարի անց՝ 1859 թ., ամսագրի շապկանկարը փոխվում է: 1850-ական թվականների Ռուսաս-

²²⁰ [Նույն տեղում:]

²²¹ [Ռափայել Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1970, էջ 96:]

²²² [Միքայել Նալբանդյան, ԵԼԺ, հ. 5, էջ 53:]

տանի համար 1858 թվականը, թեև մեկ տարի, հենց այն ժամանակաշրջանն էր, երբ Նալբանդյանի արտահայտությամբ՝ մարդը «մի օրում մեկ դար քայլեց»: Այդ տարին հատկանշական էր նաև արևելահայության համար, քանզի Նալբանդյանի և Նազարյանի ջանքերով հայ հասարակության բանականությունն ազատագրվում էր սառցե շղթաների կապանքներից: Հայ միտքն առաջ էր ընթանում հսկայի քայլերով և առաջին շապկանկարի նավն արդեն ճեղքում էր օվկիանոսի ջրերը, այնտե՛ղ, աներևույթ հեռուներում:

Անհրաժեշտ էր մարմնավորել այս նո՛ր իրավիճակը և ահա, հայկական մտքի անդաստանի ծլարձակումն իր արտահայտությունն է գտնում Բեկերի բնանկարում, որի մասին հանգամանալից ծանոթություն է տալիս Մ. Սարգսյանը:

«ՅՅՈՒՄԻՍԱՓՈՅԼԸ» ԵՎ «ՄԵՂՈՒՆ»*

XIX դարի 60-ական թվականների հայ մամուլի հիշարժան էջերից է «Յյուսիսափայլ» և «Մեղու» պարբերականների բարեկամության պատմությունը: Դժվար է նշել մեկ այլ օրինակ, երբ այդ ժամանակաշրջանի երկու այլ թերթերի խմբագրությունները կապված լինեին գաղափարական և ստեղծագործական նման կապերով: Եվ դա հասկանալի է: 60-ական թվականների բուռն ժամանակաշրջանն ազգային կյանքի վերելքի, քաղաքական զարթոնքի և ազգային ազատագրական շարժումների լայն ուղիներ էր հարթել երկու հատվածների հայության առջև: «Յյուսիսափայլը» և «Մեղուն»՝ ժամանակի լուսավորական դեմոկրատական այդ պարբերականները, ամբողջ պատասխանատվությամբ ղեկավարում էին հայ դեմոկրատական միտքը և միաժամանակ, ժողովրդի առջև ծառայած խնդիրների լուծման առավել բանական ուղիներ որոնում:

1860 և 1861 թթ. այցելելով Կ. Պոլիս և կապվելով տեղի առաջավոր մտավորականության հետ, Նալբանդյանը գործնական հողի վրա է դնում արևելահայ և արևմտահայ հատվածների ազգային-ազատագրական շարժումների նախապատրաստման ծրագիրը և ստեղծագործական կապեր հաստատում «Յյուսիսափայլի» և «Մեղուի» խմբագրությունների միջև:

Հարություն Սվաճյանը, որը մինչ Նալբանդյանի հետ անձնական բարեկամություն հաստատելը, հետևում էր «Յյուսիսափայլի» ընթացքին, 1860 թվականից ստանձնում է այդ ամսագրի գործակալի պարտականությունները և ամեն կերպ նպաստում դրա բաժանորդագրության կազմակերպմանը: Այնուհետև մինչև ամսագրի դադարելը, նա Նազարյանի հանդեսի ճակատագրի նկատմամբ դրսևորում է ամենազգայուն վերաբերմունքը և իր ընթերցողներին մշտապես իրազեկում «Յյուսիսափայլի» հրատարակության գործերին:

Մասնավորապես, 1864 թ., երբ մեկամյա դադարից հետո «Յյուսիսափայլը» սկսում է վերահրատարակվել, Սվաճյանը մեծ ուրախությամբ հայտնում է այդ լուրը, նշելով նաև, որ Նալբանդյանը նույնպես՝ Պետրոպավլովյան ամրոցից պետք է աշխատակցի ամսագրին:

* Տպագրվել է՝ «Սովետական Հայաստան», 17. XII. 1981:

1860 թ. սկզբից Սվաճյանը «Մեղու» հանդեսում սկսում է տպագրել Նալբանդյանի և «հյուսիսափայլյան» այլ գործիչների ստեղծագործությունները, որոնց միջոցով նա շատ ավելի դիպուկ էր դարձնում իր ծավալած քաղաքական պայքարը և ամբողջական՝ արևմտահայ ժողովրդական խավերի բարոյական դաստիարակության գործը:

4. Պոլսում գտնված օրերին Նալբանդյանը տեղի հայ հասարակությանը հուզող հարցերի առիթով գրում է «Հրաշափառ խայտառակություն», «Նամակ «Մեղուի» խմբագրին» և «Ազգային թատրոն Պոլսի մեջ» հոդվածները, որոնք տպագրվելով «Մեղուի» էջերում՝ ուղղություն էին տալիս արևմտահայ դեմոկրատիայի գործունեությանը:

1862 թ. Սվաճյանը «Հյուսիսափայլից» արտատպում է Նալբանդյանի հայտարարությունը՝ Հայաստանի աշխարհագրական քարտեզի տպագրության մասին: 1861-1864 թթ. «Մեղու» հանդեսում նա զետեղում է Նալբանդյանի ևս երեք անստորագիր հոդվածները՝ նվիրված Գ. Այվազովսկու գործունեության այլևայլ կողմերին: Խիստ հատկաշաղկապ է, որ այդ հոդվածների հետ միաժամանակ և դրանց ոգով «Մեղուի» խմբագիրը տպագրում է բազմաթիվ այլ թղթակցություններ, ամսակներ, բանավիճային հոդվածներ, որոնցով վերջնականապես մերկացնում է Այվազովսկու և Չամուռճյանի գործունեությունը, օժանդակում՝ հայ հետադիմական հոսանքի գործիչների դեմ Նալբանդյանի վարած պայքարին:

Սվաճյանը մեծ համակրանքով է արտահայտվել Նազարյանի՝ 60-ական թվականների հայ խոշոր լուսավորչի մասին, նրան համարել հայ ազգի հազվագյուտ անդամներից մեկը, բարձր գնահատել «Հյուսիսափայլի» խմբագրի ժուռնալիստական տաղանդը, հայրենասիրությունն ու ճշմարտասիրությունը: Մեկ անգամ չէ նա անդրադարձել Նազարյանի անձնուրաց գործունեությանը, խոսել Նազարյան-խմբագրին վիճակված տառապանքների մասին, որ համարել է նաև իր տառապանքները:

«Մեղուի» խմբագիրն ըստ արժանվույն գնահատել է նաև Նազարյանի գրական վաստակը, արտատպություններ կատարել նրա հոդվածներից («Հայոց ազգի լուսավորության կամ սուրբ թարգմանիչների դարը», «Ճշմարտություն»): Սվաճյանն ուշադրություն է նվիրել և «Հյուսիսափայլի» այլ հեղինակների հոդվածներին: 1861 թ. նա արտատպել է Ս. Միանսարյանի «Մտածությունք հրապարակախոսության վերա» հոդվածը, որում վերհանվում էին հրապարակախոսության՝ իբրև ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքի առաջընթացի հզոր գործոններից մեկի առանձնահատկությունները: 1864 թ. «Մեղուի»

էջերում տպագրվում է Գ. Թովմասյանցի «Ընտանեկան դաստիարակու-թյան կշիռը և խնդիրը» մանկավարժական հոդվածը:

Սվաճյանը 1861-1864 թթ. «Յուսիսափայլից» արտատպել է նաև մի շարք բանաստեղծություններ, որոնցով հարստացրել է իր հանդեսի համապատասխան բաժինը: Այսպես, Սմբատ Շահագիզից նա ընտրել է մի քնարական բանաստեղծություն և «Ազգային վիճակ» բանաստեղծությունը, որը գրված է Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծության ակնհայտ ազդեցությամբ: Այն՝ ժամանակի քաղաքացիական հայ պոեզիայի լավագույն արտահայտություններից էր, տոգորված լույսի, ճշմարտության, բանականության հաղթանակի խորին հավատով, ազգի և հայրենիքի դառն վիճակի բարելավման՝ բանաստեղծի անդրդրվելի կամքով:

Սվաճյանի՝ իբրև հասարակական և քաղաքական գործչի, հրապարակախոսի գործունեության սպառիչ գնահատականը «Յուսիսափայլի» էջերում տրված է Նալբանդյանի՝ 1864 թ. Պետրոպավլովյան ամրոցում գրած «Ազգային թշվառություն» ուսումնասիրության²²³ և «Ուղերձ»²²⁴ բանաստեղծության մեջ: Նալբանդյանը մեծ ջերմությամբ և ամբողջ խորությամբ գնահատել է արևմտահայ իր զինակցի ժողովրդանվեր գործունեությունը և ընդգծել «Մեղու» հանդեսի անգնահատելի դերն արևմտահայ դեմոկրատական շարժման մեջ:

²²³ [Միքայել Նալբանդյան, Ազգային թշվառություն.– Միքայել Նալբանդյան, ԵԼԺ, հ. 5, էջ 288-302:]

²²⁴ [Միքայել Նալբանդյան, Ուղերձ.– Միքայել Նալբանդյան, ԵԼԺ, հ. 1, էջ 119:]

ԲԵԳՁԱՂԵԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ*

Հայ հրապարակախոսական գրականության փայլուն էջերից է Միքայել Նալբանդյանի «Հիշատակարան. Կոմս Էմմանուելի օրագրական թերթերից» ստեղծագործությունը, որը շարունակաբար տպագրվել է «Հյուսիսափայլ» ամսագրում 1858-1860 թթ.:

XIX դարի 60-ական թվականների լուսավորական շարժման բուռն հորձանուտում Նալբանդյանն այդ ստեղծագործության էջերում քննարկում էր հայ հասարակության առաջընթացի հետ կապված ամենահրատապ խնդիրները: Լուսավորության, բանականության և ազատության հաղթանակի համար պայքարի ելած մարտիկն անվարան խորտակում էր կրոնական վարդապետությունների, մոլեռանդության ու նախապաշարունների կուռքերը, անխնա մերկացնում ազգային կյանքում առկա արատներն ու խոցերը, խարազանում հետադիմական գործիչների ժամանակավրեպ գաղափարները, հայ վաճառականների գիշատչական գործելակերպը, հոգևորականության շահատակությունները:

Ժամանակի և հետագա տասնամյակների հայ ընթերցողների ամենասիրելի այս երկը, սակայն, որքան էլ վերհանված հարցերով հասկանալի էր ընթերցողին և սրտամոտ, ինչ-որ, թեև շատ փոքր հատվածներում, մնում էր, այնուամենայնիվ, առեղծվածային: Խոսքը վերաբերում է դրանում տեղ գտած այլաբանական հատվածներին (մանրապատումներ, երկխոսություններ, երգիծական պատկերներ և այլն), որոնք բոլորը չէ, որ առ այսօր վերծանվել են և մեկնաբանվել:

Նալբանդյանի՝ ժամանակին հսկայական աղմուկ հարուցած այս ստեղծագործության դեռևս չբացահայտված էջերից առավել հետաքրքրություն է ներկայացնում հայ վաճառական Բեզգաղեի երգիծական կերպարը, որը հանդես է գալիս «Հիշատակարանի» 4-րդ, 7-րդ, 8-րդ և 12-րդ գլուխներում: Բեզգաղեն պարսավելի վարքագծի տեր մի անձնավորություն է, որին Նալբանդյանը որակում է որպես «մարդկային նախատինք» և պայքարը նրա դեմ համարում անհետաձգելի: Իր ժողովրդի պատվի նախանձախնդրությամբ՝ Նալբանդյանն այն միտքն է հայտնում, որ եթե նման մարդկանց գործերը «նյութ չլինին հրապա-

* Տպագրվել է՝ «Գրական թերթ», 6. VIII. 1982:

րակախոսության, եթե այդպիսի անքրիստոնյա և անբարոյական մարդիկ դպրության ձեռքով չպատուհասվին, բանականությունը, արդարությունը մեզ՝ գրողներին կդատապարտե»:

Գրական այս կերպարի ստեղծման հենքի, դրա նախատիպի պատմականության վերաբերյալ հայ բանասիրության մեջ հայտնվել են տարբեր կարծիքներ: Այսպես, Նալբանդյանի Երկերի լիակատար ժողովածուի ակադեմիական առաջին հրատարակության ծանոթագրություններում այն տեսակետն է առաջադրվել, թե Բեգզադե «անունը, անշուշտ, մտացածին է», «հավաքական մի տիպ, որի մեջ ընթերցողները կարող էին տեսնել իրենց ճանաչած կենդանի մարդկանց. դա ժամանակի բացասական տիպի գեղարվեստական ընդհանրացումն է»²²⁵:

Նալբանդյանի Երկերի երկհատորյակի ռուսերեն հրատարակության ծանոթագրություններում Նալբանդյանագետ Խ. Սարգսյանը պարոն Խ.-ի առիթով գրել է. «Այս գործող անձին կոչելով «Պարոն Խ.», հայտնի չէ, թե Նալբանդյանն արդյոք նկատի է ունեցել իր ժամանակակիցներից որևէ մեկին: Ամենահավանականն այն է, որ պարոն Խ.-ն «Յիշատակարանի» գլխավոր գործող անձերից մեկի՝ Բեգզադեի սկզբնական անվանումն է, որի կերպարը լայնորեն ցույց է տրված 4-րդ և հատկապես 12-րդ գլուխներում»²²⁶:

Ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանն այս առիթով մշել է. «Թերևս իրական նախատիպ ունեցող, բայց որոշակի տիպականացման հասցված այս կերպարը իր մեջ խտացնում է այն ողջ վատթարը, ինչ, Նալբանդյանի պատկերացմամբ, ուներ ազգային բուրժուազիան: Ընչաքաղցությունը, հոգու դաժանությունն ու նենգությունը, բուք ինքնավստահությունը իր ուժի նկատմամբ... նրան դարձնում են որոշակի սոցիալական միջավայրի և հոգեբանության հարազատ արտացոլում»²²⁷:

Դեռևս 1958 թ. «Յյուսիսափայլ» ամսագիրը՝ մենագրության մեջ մենք հրապարակել ենք Ջարմայր Մսերյանի մի հողվածի սևագրությունը («Մասնավոր դիտողությունք ի վերա ընթացից և նպատակի «Յյուսիսափայլ» սօրագրի»)՝²²⁸, որից երևում է, որ Բեգզադեն սոսկ հավաքական կերպար չէ, և որ նա ունեցել է իր նախատիպը: Այսպես, կոմս Էմմանուելի «Յիշատակարանը» Ջ. Մսերյանը համարում է «չնչին և ան-

²²⁵ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. I, էջ 531:

²²⁶ Ст'я Микаэл Налбандян, Сочинения в двух томах, т. I, Ереван, 1968, с. 474.

²²⁷ Էդ. Ջրբաշյան, Միքայել Նալբանդյանը և արդիականությունը, Երևան, 1984, էջ 126:

²²⁸ [Մ. Յ. Մխիթարյան, «Յյուսիսափայլ» ամսագիրը, էջ 237-244:]

շահ», որովհետև ըստ նրա՝ դրա էջերում տեղ գտած այլաբանությունների իմաստը որևէ մեկը չի կարող հասկանալ, «եթե գիտակցողներից միին չբացատրե նմա՝ ասելով, թե այս բանս՝ այն ինչ մարդո վերա է գրված, և այն բանն՝ այս ինչ մարդո վերա: Ինչպես ես ինքս ևս ցորչափ կոմսի մերձավորներից միին չէր ինձ հայտնած առանձնաբար՝ չէի հասկանում, և չէի կարողանում գուշակել, թե Սխլաստիկ ո՞վ է երագի մեջ, Մագիստրոս ո՞վ է, այն մարդն՝ որո վերա գրված է «Չայ մարդո հայրենիքը» վերնագրով ոտնավորն, ո՞վ է, թե Շամիլն ո՞վ է, թե Բեզգադեն ո՞վ է և այլն»²²⁹:

Քանի որ հիշատակված ծածկանունները բոլորը պատկանում էին ժամանակի գործիչներին ու քաղաքացիներին (Առաքել Արարատյան, Մսեր Մսերյան, Յովհաննես Անանյան, Գաբրիել Այվազովսկի), Բեզգադե անունը հազիվ թե բացառություն կազմեր: Այսպիսով, եթե երգիծական այդ կերպարի նախատիպի գոյության հարցը ինչ-որ չափով հաստատվում էր, ապա Բեզգադեի ինքնությունը ճշգրտելու ուղղությամբ կատարած մեր որոնումները չէին հանգեցնում որևէ արդյունքի: Ի վերջո, այդ առեղծվածի լուծումը հնարավոր դարձավ «Յիշատակարանի» երկրորդ մի ծածկանվան՝ պարոն Խ.-ի ինքնության վերծանման օգնությամբ:

Մ. Մսերյանը կաթողիկոսին հղած մի նամակի սևագրության մեջ գանգատվում է «Յյուսիսափայլի» խմբագրության գործելակերպից, զայրույթ հայտնում այն բանի համար, որ հատկապես Նալբանդյանը հանդուգն արտահայտություններով և այլաբանական միջոցներով վիրավորում է ժամանակի պատվավոր քաղաքացիներին և բարձրաստիճան հոգևորականներին: Այդ նամակում, ի դեպ, նա գրում է. «Խորթացեալն այն, ստահակ զաւակ Յայաստանի, ո՛չ միայն զազգ և զեկեղեցի մեր նախատէ ընդհանրապէս ի գրուածս իւր, այլև թափի անխնայ զմաղձ դառնութեան սրտի իւրոյ ի վերայ այնց անձանց՝ զորս համարի իւր հակառակորդս: Եւ այսպէս համարձակեցաւ նա պէսպէս այլաբանական գրուածովք յէջս Յիւսիսափայլին իւրոյ երգիծանել զարժանամեծար անձինս եկեղեցականաց մերոց և յաշխարհականաց, որ է՝ զՅ. Մ. Յոնանեանց, զՅ. Պ. Խալիպեանց, զՊ. Կ. Խալաթեանց, զԱ. Արարատեանց, զՍարգիս Եպիսկոպոս Ջալալեանց, զորոյ և զանունն կամելով յայտնել (ի վեցերորդ տետր, էջ 84) անդրադարձութեամբ տառից, ՚ի մէջ բերէ, փոխանակ անունս Սարգիս՝ գրելով Գիրսաս»²³⁰:

Այս գրության մեջ Խալաթյան ազգանվան հիշատակությունը մեզ բերեց այն համոզման, որ «Յիշատակարանի» առաջին գլխի առաջին

²²⁹ Մաշտոցյան Մատենադարան, Մսերյանների արխիվ, թղթ. 192, վավ. 123:

²³⁰ Նույն տեղում, թղթ. 207, վավ. 2119:

հատվածում հանդես եկող պարոն Խ.-ն ոչ այլ ոք է, եթե ոչ ինքը, Խալաթյանը: Ահա այդ հատվածը. «Այսօրյան օրագրությունս հարուստ է այն խոսակցությամբը, որ պատահեցավ իմ և պ. Խ. ... մեջ, որ ընդդեմ ամենայն քաղաքավարության եկել էր իմ մոտ **գիշերազգեստով (Խա-լաթով)**» (ընդգծումը մերն է. - *Մ. Մ.*)²³¹:

Միքայել Նալբանդյանի Երկերի լիակատար ժողովածուի ակադեմիական նոր հրատարակության երրորդ հատորի ծանոթագրությունների հետ կապված հարցերով կրկին ու կրկին անդրադարձանք «Հիշատակարանի» բնագրին և մեզ ի վերջո հաջողվեց գտնել ԲԵԳՁԱԴԵ այլաբանության բանալին: «Հիշատակարանի» 12-րդ գլխում, որը նվիրված է հիմնականում Բեզգադեի յոթ հրաշալիքներին, Նալբանդյանը նկարագրելով իր հերոսի առաջին «սխրագործությունը», վերջում, կարծեք հարևանցիորեն, ավելացնում է. «Այս գործողութենից հետո, մի քանի մարդիկ տեսանում են Բեզգադեին, որ նա, քաղաքի նշանավոր փողոցի մեջ, յուր վաճառանոցի առաջև, օր ու ցերեկով **գիշերազգեստը հագած** ման է գալիս մի հրեայի հետ, աշխատելով խաբել, կամենալով մի մուշտակ գնել նորանից» (ընդգծումը մերն է - *Մ. Մ.*)²³²:

Ինչպես երևում է, «Հիշատակարանի» առաջին գլխում Նալբանդյանն իր հերոսին՝ վաճառական Խալաթյանին ներկայացնելով ՊԱՐՈՆ Խ. ծածկանունով, հետագայում նրա գործունեության անսպառ «հնարավորությունների» հիման վրա ստեղծել է գրական ամբողջական մի կերպար, տալով նրան «ԲԵԳՁԱԴԵ» անունը: Տվյալ դեպքում Նալբանդյանը հետագա սերունդների համար թողել է և այդ ծածկանվան բանալին՝ ԳԻՇԵՐԱԶԳԵՍՏ-ԽԱԼԱԹ-ԽԱԼԱԹՅԱՆ եռաստիճան բառախաղը:

Այժմ արդեն, երբ համենատուն ենք «Հիշատակարանի» համապատասխան գլուխները, որտեղ հանդես են գալիս պարոն Խ.-ն և Բեզգադեն, տեսանելի է դառնում այդ կերպարների մտավոր և հոգեկան ընդհանրությունը, առևտրական գործարքների և գիշատչական գործառնությունների «ծեռագրի» նույնությունը: Այս ընդհանրությունն է, որ բանասերի խորաթափանց հայացքով ժամանակին նկատել է Խ. Սարգսյանը և, ինչպես արդեն նշեցինք, հայտնել այն կարծիքը, թե պարոն Խ.-ն, հավանաբար, հետագայում Նալբանդյանի գրչի տակ դարձել է Բեզգադե:

Թեև Խալաթյանի անձնավորության և գործերի, մասնավորապես Նալբանդյանի հետ նրա ունեցած շփումների վերաբերյալ առայժմ չունենք որոշակի տվյալներ, բայց հավաստի է և այն, որ մեզ հետաքրքրող

²³¹ [Միքայել Նաբանդյան, ԵԼԺ, հ. 3, էջ 7:]

²³² [Նույն տեղում, էջ 174:]

Ժամանակաշրջանում այդպիսի վաճառական, իրոք, ապրել է Մոսկվայում: Այսպես, «Նոր քնար Հայաստանի» մատենաշարի հրատարակիչ Ոսկան Տեր-Հովհաննիսյանցը «Ձանազան երգք» գրքույկների Բ. պրակի վերջին էջերում զետեղել է այն քաղաքացիների ծավալուն ցուցակը, որոնք նյութապես և բարոյապես օժանդակել են իր հրատարակությանը: Ի թիվս այլ անձանց, նա հիշատակում է նաև հետևյալ անունը. «ԽԱԼԱԹՅԱՆՑ՝ Տ. ԲԱԽՇԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, տփփսեսցի, վաճառական, ի Մոսկուա»²³³: Ի դեպ, այն հանգամանքը, որ Մ. Ստերյանի նամակի սևագրության մեջ Բախշի Խալաթյանի անվան սկզբնատառը Բ-ի փոխարեն նշված է Պ տառով, պետք է բացատրել նամակագրի արևմտահայ ծագումով:

Երկրորդ հիշատակությունը Խալաթյանի մասին գտնում ենք «Մեղու Հայաստանի» թերթում²³⁴, որտեղ խոսվում է նույն թվականի հունվարի 27-ին Մոսկվայում տեղի ունեցած հայկական առաջին թատերական ներկայացման մասին: Հաղորդման հեղինակը երախտագիտությանը է արտահայտվում ոչ միայն մոսկովաբնակ վաճառական Միքայել Ստեփանյանի մասին, որը մշտապես ընդառաջում էր հայ ուսանողներին և այդ անգամ ևս սիրով նրանց էր տրամադրել իր բնակարանի դահլիճը, այլև վաճառականներ Հ. Հովնանյանի և Բ. Խալաթյանի մասին, որոնք նույնպես օժանդակել էին նրանց: Այնուհետև շատ հետաքրքրական է, որ «Հյուսիսափայլ» ամսագրի առաջին տարվա բաժանորդների թվում է եղել նաև Խալաթյանը: Սակայն, ամսագրի առաջին տարվա երեք համարում վարկաբեկված վաճառականը հաջորդ տարիներին չի բաժանորդագրվել, բնականաբար, «Հյուսիսափայլին»:

Դատելով «Հիշատակարանում» շարադրված փաստերից, որքան էլ արգահատելի՝ շահամոլ և բիրտ վաճառականի իր վարքագծով, Խալաթյանն, այնուամենայնիվ, շփվել է հայ հասարակական կյանքին, ազգային գործչի կեցվածք ընդունել, սակայն, առանց շոշափելի նպաստ բերելու հասարակական միջոցառումներին: Ինչպես երևում է՝ «Կոմս Էմմանուելի «Հիշատակարան» ընթերցելուց հետո ոմանք նույնիսկ խնդրել են Նալբանդյանին՝ հանգիստ թողնել նրան, իսկ ինքը՝ Խալաթյանը, հավանաբար, փորձել է, թեկուզ դրամական զոհաբերության գնով, դադարեցնել տալ «Հյուսիսափայլի» լույս ընծայումը:

²³³ «Նոր քնար Հայաստանի», Մոսկվա, 1859, տետրակ Բ., էջ 151:

²³⁴ «Մեղու Հայաստանի», 1859, թիվ 10:

«ԿՈՄՍ ԷՄՍԱՆՈՒԵԼԻ» ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

Հայ ընթերցողին քաջածանոթ է Միքայել Նալբանդյանի հրապարակախոսական գործունեությունը: Բազմաբովանդակ էր հայ հասարակական կյանքը 19-րդ դարի 60-ական թվականներին: Լուսավորական շարժման շուրջ բանավիճային պայքարը ծավալվում էր պարբերականների էջերում: Նալբանդյանը յուրայինների հետ ներկայացնում էր «Հյուսիսափայլ» առաջադիմական-լուսավորական ամսագրի քաղաքականությունը, որը քննադատում էին «Մեղու Հայաստանի» և «ճռաքաղ» պարբերականները: Բանավիճող կողմերն իրենց հողվածները մեծ մասամբ ստորագրում էին կեղծանուններով, որոնցից արտակարգ ժողովրդականություն է ստանում և մեր գրականության պատմության մեջ իր հաստատուն տեղը գրավում Նալբանդյանի «Կոմս Էմմանուել» ծածկանունը:

Նալբանդյանագետները, բնականաբար, հանգամանորեն քննարկել են Կոմս Էմմանուելի բացառիկ կերպարի առանձնահատկությունները: Ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» աշխատության առաջին հատորի գլուխներից մեկը, որը կրում է «Կոմս Էմմանուելի «Հիշատակարանը» խորագիրը»²³⁵, ամբողջովին նվիրված է այդ կերպարի լուսաբանմանը: Ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը «Միքայել Նալբանդյանը և արդիականությունը» աշխատության մեջ բազմակողմանիորեն մեկնաբանում է գրողի և հրապարակախոսի անձնավորության խնդիրը: Հեղինակն առանձին բաժին է նվիրում Նալբանդյանի արծակի գեղարվեստական համակարգի լուսաբանմանը²³⁶ և վերլուծում Կոմս Էմմանուելի կերպարը:

Չնայած Նալբանդյանին նվիրված աշխատություններում մեկնաբանված են ժամանակի գործիչների բազմաթիվ ծածկանունները՝ «Կոմս Էմմանուել» գրական կեղծանունը դեռևս չի վերծանվել:

«Մեղու Հայաստանի» շաբաթաթերթի 1861 թ. համարներից մեկում խմբագիր Ստեփանոս քահանա Մանդինյանը հրապարակել է մի հող-

* Տպագրվել է՝ «Հայաստանի հանրապետություն», 18. VIII. 1999:

²³⁵ [Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք I, էջ 181-192:]

²³⁶ [Էդ. Ջրբաշյան, Նալբանդյանի գեղարվեստական արծակի համակարգը. – Էդ.

ված հայ մանուկների դաստիարակության շուրջ: «Ազգային պակասությունք, թուլությունք և անհոգությունք» վերնագիրը կրող ծավալուն և պարզունակ հոդվածում Մանդինյանն ընդգծում է եվրոպական գիտնականների մանկավարժական ուսումնասիրությունների մեծ նշանակությունը դպրոցական գործում: Անդրադառնալով նաև եվրոպական գիտնականների նախորդներին, նա գրում է. «Փիլիսոփայից մեջ առավել երևելի հանդիսացավ բարոյական վարդապետությամբ Արիստոտել, որին հետևելով Կոնս էմանուել Թեսալրոսը 17-րդ դարում շարադրեց գիրք «Բարոյական իմաստասիրութիւն» անունով: Երանի թե ամենայն ուսումնարաններում այս պատվական գիրքը տեղ գտնէ սովորեցնելու»²³⁷:

Թեսալրոսի գիրքն ուսուցչապետ Ստեփանոս վարդապետ Մելքոնյանի «մասնավոր խնդրանքով» 1825 թ. իտալերենից հայերենի է թարգմանել Վենետիկի Մխիթարյան միաբանության վարդապետ Վրթանես Ասկերյանը: Գրքի առաջաբանում նա գրում է. «Այս գործ ընտիր յօրինեալ է յիտալական բարբառ 'ի մեծիմաստ և յիշխանաշուք առնէ, որոյ անուն կոչի էմմանուել Թեսալրոս, Պատրիկ՝ կոնս և ասպետ անուանի»²³⁸: Ասկերյանը թարգմանության առաջաբանում ներկայացնում է Թեսալրոսի նպատակը և գրքում արծարծված խնդիրները: Պարզվում է, որ ութսունամյա գիտնականը գիրքը գրել է Սավոյայի և Տուրինի թագավոր Կարլոս էմմանուել II-ի հանձնարարությամբ, նրա որդի՝ թագավորազն Վիկտոր Ամեդեոսի համար՝ «ի դաստիարակութիւն առաքինական վարուց, ըստ արժանի իւրումն աստիճանի»: Գիրքը թագավորի հրամանով տպագրվել է 1671 թ.:

Արքայազնի դաստիարակությանը նվիրված աշխատությունը բաղկացած է 18 գլխից, ուր փիլիսոփայական գիտության ամենաբարձր չափանիշներով մեկնաբանված են անհատի բարոյական վարքագծի առանձնահատկությունները: Բնագիրը կազմում է 478 էջ, թարգմանչի ծանոթագրությունները՝ 140, որոնք պարունակում են հիմնականում անտիկ գրականության, պատմության, արվեստի և բանահյուսության գիտական բացատրություններ:

Ի՞նչն է գրավել Նալբանդյանին՝ իտալացի փիլիսոփայի անվան մեջ: Կարծում ենք՝ Կոնս էմմանուել անունը, որքան էլ տպավորիչ, գրական կեղծանուն դառնալու համար առավելապես ընտրվել է իբրև երևույթ՝ համամարդկային բարոյագիտության հիմնահարցերի գիտա-

²³⁷ «Մեղու Չայաստանի», 1861, թիվ 47, էջ 552:

²³⁸ [Իմաստասիրութիւն բարոյական յօրինեալ Յէմմանուելէ Թեսալրոսէ 'ի մեծանուն Կոնսէ և 'ի պատուական Ասպետ տէրութեան Սաբաւդիոյ, Վենետիկ, 1825, էջ Ե:]

կան վերլուծության մարզում: Նալբանդյանը չէր կարող չզնահատել արքայազնին տրված Թեսավրոսի մեծարժեք խորհուրդները, որոնք վերաբերում էին նաև հայերի բարոյական դաստիարակությանը: Թեսավրոսի աշխատության հայերեն թարգմանությունն ունեցել է չորս հրատարակություն (վերջինը լույս է տեսել 1870 թ.):

1848-1853 թթ. Նալբանդյանը Նոր Նախիջևանի ու Բեսարաբիայի թեմական առաջնորդարանի քարտուղարն էր և աշխատում էր Քիչ-նուս: 1853 թ. նա մեկնում է Մոսկվա, աշխատանքի անցնում Լազարյան ճեմարանում, հետո բացառապես զբաղվում ստեղծագործական աշխատանքով: 1858 թ. հայ լուսավորիչ-հրապարակախոս Ստեփանոս Նազարյանը նրա զինակցությամբ սկսում է հրատարակել «Յուսիսափայլ» ամսագիրը, որի երկրորդ համարում արդեն տպագրվում են Նալբանդյանի բանաստեղծությունները՝ «Կոմս Էմմանուել» ստորագրությամբ: «Յուսիսափայլի» հետագա համարներում տպագրվում են նաև նրա արձակ գործերը: Այսպես, «Կոմս Էմմանուել» ստորագրությամբ 1858-1860 թթ. շարունակաբար տպագրվել է «Հիշատակարան Կոմս Էմմանուելի օրագրության թերթերից» ստեղծագործությունը: 1859 թ. տպագրված «Մեռելահարցուկ» անավարտ վեպի երեք հիմնական բաժիններից մեկը նույնպես նվիրված է Կոմս Էմմանուելին:

Ժամանակի ընթերցողների վրա, սակայն, ամենամեծ տպավորությունը գործում է «Հիշատակարանը»: Կոմս Էմմանուելի «Հիշատակարանը» կամ Նալբանդյանի խոսքերով՝ նրա «առաջին և վերջին մխիթարությունը» ոչ միայն ներկայացնում էր հայ հասարակական մտքի նորանոր ձեռքբերումները, այլև գիտականորեն ուրվագծում ազգի լուսավորության և զարգացման հեռանկարային ծրագրերը (ազգային դպրոցների բազմացում, մայրենի լեզվի կատարելագործում և լրջմիտ ուսուցում, հայկական հին ձեռագրերի տպագրություն, ազգային և եկեղեցական պատմությունների ստեղծում և այլն): Կոմսը միաժամանակ հրապարակում էր հայ մշակութային կյանքի արժանահիշատակ երևույթներն Արևմտյան Հայաստանում և Եվրոպայում, ծանրակշիռ խոսքով գնահատում հեռավոր անցյալի հայ գործիչների վաստակը:

Նալբանդյանի «Հիշատակարանին» առանձնահատուկ թարմություն էին հաղորդում հետադիմական թերթերի բանավիճային հոդվածներին Կոմս Էմմանուելի պատասխանները և զրախոսությունները: «Յուսիսափայլի» հակառակորդներն իրենց բանավիճային հոդվածներում անզուսպ արտահայտություններով հայիցում էին Կոմսին, իսկ խմբագրին կշտամբում՝ նրան անարգել տեղ տալու համար ամսագրի

էջերում:

Նալբանդյան-Կոմս Էմմանուելը, սակայն, անխոցելի էր բանավիճա-
յին պայքարում: Նա բազմակողմանիորեն զարգացած էր, սրամիտ, ինք-
նավստահ և իբրև հրապարակախոս ու բանավիճող՝ անհասանելի շար-
քային լրագրողներին:

Կոմսին հղած նամակներում, հողվածներում «Հիշատակարանի»
թղթակիցներ Ս. Խ. Շահբեգը, Մ. Տիրատուրյանը և Ա. Դ. Բաբկենյանցը
(որոնք նույնպես Նալբանդյանի երկվորյակներն էին՝ շինծու ծածկա-
նուններով) «Հիշատակարանում» Կոմս Էմմանուել անունն արտաբե-
րում էին առանձնակի սիրով ու հպարտությամբ: Եվ դա հասկանալի է:
Կոմս Էմմանուելը՝ Միքայել Նալբանդյանի կրկնակը, նրա հավատարիմ
«օգնականն» էր և գաղափարների տաղանդավոր ժողովրդականացնո-
ղը, «Հիշատակարանի» և, իհարկե, «Հյուսիսսփայլի» հաջողության
կախարդական ոգին:

Առաջաբանի խոսքում Վ. Ասկերյանը խնդրում է հայ ընթերցողնե-
րին «անգործ չթողնել» երկու վաստակաբեկ ծերունիների աշխատու-
թյունը՝ հեղինակի, որն այդ գիրքը գրել է ութսունամյա հասակում և
թարգմանչի, որը թեև վեց տարով նրանից փոքրահասակ՝ «անվեհեր
կերպով» նվիրվել է նրա «դժվարաքիրտն» գործին²³⁹: Արդեն իսկ «Կոմս
Էմմանուել» անվան ընտրությամբ Նալբանդյանը երկու հարյուր տարի-
ների հեռավորությունից արժանին է հատուցել երկու վաստակաշատ
ծերունիներին:

²³⁹ [Նույն տեղում, էջ Ժ:]

**ԹԱԴԵՎՈՍ ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆԻ «ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ»
ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԳՐԱՔՆՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ***

«Ղայկական տպագրությունը և ցարական գրաքննությունը» մեծարժեք մենագրության մեջ գրելով Միքայել Նալբանդյանի ժառանգության գրաքննական հետապնդողների մասին՝ Սալոմե Արեշյանը Սանկտ Պետերբուրգի Պետական պատմական արխիվի նյութերի հիման վրա մատնանշում է նաև Թադևոս Ավդալբեգյանի «Միքայել Նալբանդյան» աշխատության բռնագրավման փաստը՝ 1913 թվականին²⁴⁰:

Թբիլիսիի Կենտրոնական պետական արխիվում մեզ հաջողվեց ծանոթանալ Թադևոս Ավդալբեգյանի «Միքայել Նալբանդյան» աշխատության գրաքննության ամբողջական պատմությանը, որը եթե մի կողմից բնութագրում է ռուսական առաջին հեղափոխությանը հաջորդած ռեակցիայի տարիների գրաքննական ահաբեկման պատկերը երկրում, մյուս կողմից բացահայտում է հայ ակամավոր տնտեսագետ Թ. Ավդալբեգյանի կյանքի հետաքրքրական էջերից մեկը:

1913 թ. սկզբին էջմիածնում տպագրվում է հայ երիտասարդ գիտնական, մանկավարժ Ավդալբեգյանի «Միքայել Նալբանդյան. պատմական-գրական վերլուծություն» աշխատությունը: Գրքի առաջաբանում հեղինակը նշում է, որ ինքը դեռևս 1910 թ. ծրագրած է եղել հայ ընթերցողներին հասու դարձնել այն գաղափարներին, որոնք արծարծված են Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ: Սակայն, երբ Ավդալբեգյանին հայտնի է դառնում, որ այդ օրերին տպագրվում են Նալբանդյանին նվիրված երկու այլ հեղինակների աշխատությունները, նա ավելորդ է համարում «հայոց գրական նեղ հրապարակը դուրս բերել մի նոր, նույնպիսի մտքեր ամփոփող գրվածք»²⁴¹: Միայն այն բանից հետո, երբ Ավդալբեգյանը ծանոթանում է այդ ուսումնասիրություններին և հավաստիանում, որ չի կրկնում մյուս հեղինակներին, ինչպես նաև չկարողանալով դիմադրել իր բուռն ցանկությանը, այն է՝ հարգել հայ Գրակքոսի նվիրական հիշատակը, նրա

* Տպագրվել է՝ «Գրական թերթ», 23. II. 1968:

²⁴⁰ [Տ. Գ. Արեշյան, Армянская печать и царская цензура, Ереван, 1957, с. 371.]

²⁴¹ [Թ. Ավդալբեգյան, Միքայել Նալբանդյան. պատմական-գրական վերլուծություն, Վաղարշապատ, 1913, էջ Բ:]

գլխավոր երկերի հրատարակության հիսնամյակի (1862-1912) առիթով տպագրում է իր գիրքը: Աշխատությունն ավարտվում է հետևյալ տողերով. «Օտարներից ու բարբարոսներից, այլև յուր հարուստներից ու հոգևորներից հարստահարված, ողորմելի, աղքատ, մերկ ու քաղցած հայը երբեք չի մոռանա Կամիչինի նահատակին, որը թեև վաղ մեռավ, բայց երկար ապրելու է նրանց սրտում, որոնք երկրպագում են ժողովրդի բարօրության վսեմ իդեալին»²⁴²:

1913 թ. մարտի 28-ին ստանալով գրքի 14 պարտադիր օրինակները՝ մամուլի գործերի թիֆլիսի կոմիտեի նախագահը տազնապ է բարձրացնում, քանի որ այդ ժամանակ Պետերբուրգի գրաքննությունը Նալբանդյանի երկերը կրկին առել էր արգելքի տակ: Կոմիտեի նախագահն էջմիածնի գավառապետին հեռագրով կարգադրում է Մայր աթոռի տպարանից բռնագրավել Ավդալբեգյանի գրքի բոլոր վեց հարյուր օրինակները: Հեռագրի հետ մեկտեղ, նա համապատասխան գրությամբ դիմելով թիֆլիսի դատական պալատի դատախազին՝ զեկուցում է տեղի ունեցածի մասին և խնդրում հաստատել տալ իր վճիռը: Կոմիտեի նախագահը, ի դեպ, գրում է. «Հեղինակը իր գիրքը կոչել է Մ. Նալբանդյանի 1862 թվականին Փարիզում հրատարակված «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության պատմագրական վերլուծություն: Այդ վերլուծության մեջ հեղինակը հակիրճ կերպով լուսաբանում է հողի մասնավոր սեփականության մասին այն ծայրահեղ վնասակար գաղափարների հիմնական դրույթները, որոնք ընկած են Միքայել Նալբանդյանի աշխատության հիմքում»:

Ապրիլի 25-ին թիֆլիսի դատական պալատի նիստում լսվում է դատախազի հայցը՝ Ավդալբեգյանի գրքի տպաքանակի բռնագրավման գործը հաստատելու մասին: Որոշվում է. «Հաշվի առնելով, որ այդ գրքույկը դատողություններ է պարունակում պետության մեջ գոյություն ունեցող հասարակական կարգերի տապալման վերաբերյալ, և որ դրա տարածման մեջ մեղադրվողները պատասխանատվության կկանչվեին 129-րդ հոդվածի առաջին բաժնի երկրորդ կետով, տպաքանակի բռնագրավումը հաստատել»:

Այնուհետև սկսվում է գաղտնի գրագրությունների տեմդագին մի հոսք՝ մի կողմից կոմիտեի և դատախազի, մյուս կողմից կոմիտեի և գավառական վարչությունների միջև: Այսպես, Ավդալբեգյանի դեմ դատական գործ հարուցելու համար, դատախազի պահանջով, մամուլի գոր-

²⁴² [Նույն տեղում, էջ 109:]

ծերի կոմիտեի նախագահը մի գրությանը էջմիածնի գավառապետից պահանջում է ուղարկել «Միքայել Նալբանդյան» գրքի հեղինակի ստույգ հասցեն, ինչպես և տվյալներ՝ նրա տարիքի, կոչման, դավանանքի մասին: Էջմիածնի գավառապետը հայտնում է, թե քանի որ Մեծ Ղարաքիլիսա գյուղը, որի ծխական դպրոցում աշխատում է Ավդալբեգյանը, ընդգրկված է Ալեքսանդրապոլի գավառական վարչության տարածքում, իրեն չի հաջողվել ձեռք բերել պահանջված տեղեկությունները: Դիմում՝ Ալեքսանդրապոլի գավառապետին: Նա շտապում է պատասխանել, թե Ավդալբեգյանը մեկնել է Թիֆլիս՝ բուժվելու: Տեղում սկսված որոնումները Թիֆլիսի ոստիկանության ներկայացուցիչներին հասցնում են Արամյան հիվանդանոց: Պրիստավը գաղտնի գրությամբ զեկուցում է կոմիտեի նախագահին, թե Ավդալբեգյանը դուրս է գրվել հիվանդանոցից և մեկնել անհայտ ուղղությամբ:

Կրկին շտապ գրություն Ալեքսանդրապոլի գավառապետին: Վերջինս մամուլի գործերի կոմիտեին է ուղարկում Ավդալբեգյանի եղբոր՝ Խաչատուրի ձեռքով գրված հետևյալ տեղեկանքը. «Թադևոս Ավդալբեգյանը 27 տարեկան է, գյուղացու որդի, հայ լուսավորչական, պարսկահպատակ: Գտնվում է Մակուի խանության Քիշմիշ Թափա գյուղում և կվերադառնա ոչ շուտ՝ մեկ ամսից»:

Տվյալները հունիսի 20-ին ուղարկվում են դատախազին: Նրա պահանջով կոմիտեի նախագահը նոր հարցում է ուղարկում. Պարսկաստանից վերադառնալուց հետո որտե՞ղ պետք է բնակվի Ավդալբեգյանը: Այս հարցմանն ի պատասխան՝ Խաչատուրը գրում է. «Իմ եղբայր Թադևոս Ավդալբեգյանը Պարսկաստանից վերադառնալուց հետո պետք է բնակվի Սուրմալուի գավառի Իգդիր քաղաքում»:

Պարզվում է, սակայն, որ ինչ-որ ճանապարհով տեղեկանալով սկսված ոստիկանական հետապնդումների մասին, Ավդալբեգյանը դրանցից խույս տալով անցնում է Պարսկաստան և այլևս չի վերադառնում: Նա մի քանի տարի ապրում է այնտեղ և երբեմն միայն, շատ կարճ ժամանակով, այցելելով Իգդիրում գտնվող ընտանիքին, կրկին վերադառնում է քաղաքական վտարանդիի իր կարգավիճակին: Ավդալբեգյանի «Գործը» թեև ընթացք չի ստանում, բայց և չի փակվում: Հավանաբար, դատախազը հույսը չէր կտրում այն հեռանկարից, թե օրերից մի օր կկարողանա կիսատ մնացած «Գործն» ավարտել՝ ըստ իր հայեցողության:

Սակայն, կատարվում է անսպասելին: Վրա է հասնում Փետրվարյան հեղափոխությանը նախորդած շիկացած ժամանակաշրջանը: Հայ հեղափոխական երիտասարդությունը կրկին սկսում է

ընթերցել Նալբանդյանի ստեղծագործությունները՝ արդեն անարգել: 1916 թ. սեպտեմբերին Թիֆլիսի դատական պալատի դատախազը հարցում է ուղարկում մամուլի գործերի կոմիտեի նախագահին, թե ճշմարիտ է արդյոք, որ Նալբանդյանի աշխատություններն ազատ շրջանառության մեջ են, և թե չի՞ փորձել Ավդալբեգյանն իր գիրքը որոշ կրճատումներով կրկին տպագրել: Վերջին հարցին բացասական պատասխան տալով՝ կոմիտեի նախագահը նշում է նաև, որ Թիֆլիսի կոմիտեն չի արտոնել Նալբանդյանի երկերը շրջանառության մեջ մտցնել:

Այնուհետև Փետրվարյան հեղափոխությունից հետո, 1917 թ. մարտի 28-ին, արդեն քաղաքական նոր իրադրության պայմաններում, դատական պալատը հերթական նիստում անդրադառնալով Ավդալբեգյանի 1913 թ. «Գործին», այն փակում է նոր ձևով: Որոշվում է Թադևոս Ավդալբեգյանի «Միքայել Նալբանդյան» գրքի վրա դրված կալանքը վերացնել և բռնագրավված օրինակները վերադարձնել էջմիածնի տպարանին:

1917 թ. ապրիլի 17-ի գրությամբ կոմիտեի նախագահը հայտնում է էջմիածնի գավառի կոմիսարին, որ «Միքայել Նալբանդյան» գրքի կալանքը վերացնելու կապակցությամբ կոմիսարիատում պահվող այդ գրքի 585 օրինակները պետք է վերադարձվեն տպարանին՝ հեղինակին հանձնելու համար (600-ից 14 օրինակ գտնվում էր Թիֆլիսի կոմիտեում, իսկ մեկը ժամանակին տպարանից վերցրել էր հեղինակը): Հենց այդ օրերին Թադևոս Ավդալբեգյանը վերադառնում է Հայաստան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ա

Աբովյան Խ. – 6-7, 47, 50, 52, 56

Ադամյանց Ս. – 72-73, 75-76

Ալեքսանդր II – 21

Ալեքսանդրյանց Ա. – 47, 72-73, 80, 90

Ալիշանյանց Յ. – 80, 88

Այվազովսկի Գ. – 27, 46, 78, 100, 108, 112

Անանյան Յ. – 112

Անդրեաս առաքյալ – 98

Ասատրյան Ա. – 60, 64-65

Ասլանբեկ Մ. – 60, 98

Ասկերյան Վ. – 116, 118

Ավդալբեգյան Թ. – 119-122

Ավդալբեգյան Խ. – 121

Արամ նահապետ – 98

Արամյան Ծ. – 15-16

Արամյան Վ. տե՛ս Մսերյան Ս.

Արարատյան Ա. – 53, 70-71, 74-75, 112

Արեշյան Ս. – 119

Արիստիդես – 78

Արիստոտել – 116

Արղության Յ. – 53

Աքիմյան Գ. – 47, 52

Բ

Բաբկենյանց Ա. Դ. – 118

Բակունին Մ. Ա – 18

Բարադամ – 81-82, 84-85, 98

Բելինսկի Վ. Գ. – 24, 93

Բեզգադե տե՛ս Խալաթյան Բ.

Բեկեր Ա. – 105-106

Բուդաղյան Մ. – 20

Գ

Գամառ-Քաթիպա – 62

Գեղամյանց Գ. – 76

Գերցեն Ա. Ի. – 16, 18, 24

Գիլանենց Պ. Ա. – 52

Գրակքոս – 118

Գրիմ եղբայրներ – 52

Դ

Դավթյան Թ. տե՛ս Փոնդոյան Յ.

Դարոնյան Ս. – 4, 60-61, 64-66, 71, 76, 78, 80, 82-84, 91, 93, 95, 97-98

Դիտրիխ – 74

Դոբրոլյուբով Ն. Ա. – 85

Ե

Եգյան Կ. Յ. – 99-101

Եզոպոս – 62

Եսայի քահանա – 75

Թ

Թագվորյան – 20

Թեսալոս Է. – 116-117

Թովմասյանց Գ. – 108

Ղ

Ի

Ինճիկյան Ա. – 25
Իսահակյան Մ. – 40, 46

Լ

Լազարյաններ – 99
Լավատեր Ի. Գ. – 29, 69, 88
Լեսսինգ Գ. Է. – 29, 69, 88
Լյուբեր Մ. – 76

Խ

Խալաթեանց Պ. տե՛ս
Խալաթյան Բ.
Խալաթյան Բ. – 110-114
Խալիպեանց Յ. – 112
Խաչատուրյան Կ. – 60, 83

Կ

Կատկով Մ. Ն. – 83
Կարլոս Էմմանուել II – 116
Կիրակոս – 66, 98
Կռիլով Ի. Ա. – 33

Հ

Հակոբ – 98
Հակոբյան Պ. – 4
Հայն Ռ. – 22
Հեգել Գ. Վ. Ֆ. – 22
Հերովդիադա – 103
Հովհաննիսյան Աշ. – 18, 25, 60,
83, 115
Հովնանյան Հ. – 69, 112, 114
Հունբուլդ Վ. – 52

Ղուկաս ավետարանիչ – 98
Ղուկասյան Պ. – 60, 67, 69, 72-
78, 80, 98
Ղևի – 63, 65, 98

Մ

Մանդինյան Ստ. – 25, 29-30,
46-47, 53, 69, 74-75, 77,
115-116
Մատթեոս կաթողիկոս – 86-87
Մարգարյան Կ. – 60-61, 63-67
Մարգարյան Ղ. – 48, 98
Մարկոս – 66
Մելքոնյան Ստ. – 116
Մենդելսոն – 29, 69, 88
Միանսարյան Մ. – 108
Միխայլով Մ. Լ. – 21
Մխիթարյան Մ. – 3, 17, 20, 26,
38, 45, 48, 65, 94, 111
Մխիթարյաններ – 77
Մսերյան Ջ. – 61-67, 69, 71, 76,
98, 111
Մսերյան Մ. – 56-57, 63-65, 72,
75-76, 98, 112, 114
Մսերյաններ – 56, 58, 63, 65-
67, 73, 76, 112
Մուրադյան Գ. տե՛ս Փարսա-
դանյան Գ.

Ն

Նազարյան Ստ. – 6-7, 29-30,
36, 38, 40-43, 45-83, 85-103,
105-108, 117
Նանուկյան Ռ. – 32-33, 36-40,
42, 44, 47, 69, 88-89
Ներսես Աշտարակեցի – 76-77

Շ

Շահագիզ Ա. – 20, 109
 Շահբեգ Ա. Խ. – 40, 98, 118
 Շամիլ – 112
 Շմավոն – 63, 65, 98

Չ

Չամուռճյան Յ. – 15-16, 92, 108
 Չելեպի Ծ. – 61, 93-98
 Չերնիշևսկի Ն. Գ. – 21, 23-24
 Չերքեզյան Յ. – 46, 53, 67-73,
 76, 78, 88-93

Պ

Պատկանյան Գ. – 6
 Պատկանյան Ռ. – 105
 Պատկանյաններ – 26
 Պետեֆի Շ. – 20
 Պետրոս առաքյալ – 98
 Պետրոսյան Ա. տե՛ս Զ. Մսերյան
 Պիսարև Դ. Ի. – 23
 Պլատոն – 59
 Պոդոս առաքյալ – 98
 Պոդոս վարդապետ – 15-16
 Պոդոսյան Ծ. – 98
 Պոդոսյան Վ. – 4

Ջ

Ջալալյան Ա. – 76, 78, 112
 Ջրբաշյան Էդ. – 4, 111, 115

Ռ

Ռաթթի Ա. – 26
 Ռոստոմյանց Դ. – 34-35, 39, 41,

Ս

Սայաթնովյան Յ. – 88
 Սառաֆյան Մ. – 98
 Սարգսյան Մ. – 102, 106
 Սարգսյան Խ. – 111, 113
 Սարինյան Ա. – 4
 Սեյադ – 25
 Սենկովսկի Օ. Ի. – 80
 Սերնո-Սոլովյովիչ Ն. Ա. – 21
 Սերոբյանց Յ. Թությունջի – 47,
 60, 79-81, 83-93, 98
 Սիմոնյան Ա. Յ. – 4
 Սիմոնյանց Մ. – 47, 88
 Սկայորդի տե՛ս Զ. Մսերյան
 Սյու Է. – 8, 70, 96-97, 103-104
 Սվաճյան Յ. – 20-21, 91, 107-
 109
 Ստեփանյան Մ. – 114
 Ստեփանյան Պ. Գ. – 4
 Սուլթանշահ Ա. Պ. – 20, 26, 61,
 63, 82
 Սուլթանշահ Ա. Գ. – 105

Վ

Վարշամյանց Ա. – 3, 32-45, 47,
 53-56, 53-59, 65-66
 Վիկտոր Ամեդեոս – 116

Տ

Տեր-Յովհաննիսյան Գ. – 20, 66,
 88
 Տեր-Յովհաննիսյանց Ռ. – 114
 Տերոյենց տե՛ս Չամուռճյան Յ.
 Տիրատուրյան Մ. – 118

Փ

Փարսադանյան Գ. – 27, 88
 Փոնդոյան Յ. – 47-48, 50, 52-59

Ք

Քանանյան Գ. – 105
 Քաջբերունի տե՛ս Տեր-Յովհան-
 Գիսյան Գ.
 Քուչուբեկյան Յ. – 20

Օ

Օգարյով Ն. Պ. – 18
 Օգսենտ, տիրացու – 30
 Օստրովսկի Ա. Ն. – 85

Ֆ

Ֆոյերբախ Լ. Ա. – 22-23
 Ֆոքս – 16
 Ֆրանկլին Բ. – 83

ԴՕՁԱՅՈՍՄՈՑ

Ա

Աթենք – 100
 Ալեքսանդրապոլ – 121
 Ալեքսանդրիա – 100
 Ամերիկա – 67
 Անդրկովկաս – 62
 Ասիա – 100-101
 Արևելք – 104
 Արևելյան Հայաստան – 5
 Արևմտյան Հայաստան – 117

Բ

Բաքու – 32, 34, 36-37, 43-44,
 53
 Բեռլին – 40
 Բեսարաբիա – 38, 117
 Բերինգի նեղուց – 103-104
 Բյուզանդիա – 100
 Բորչալու – 75

Դ

Դորպատ – 6, 87

Ե

Եվրոպա – 15, 18, 20, 58, 81,
 95, 100, 117

Է

Էջմիածին – 29, 53, 119-121

Թ

Թիֆլիս – 6, 7, 14, 26-27, 30,
 48, 51, 69, 73-74, 80-81, 87,
 119-122
 Թբիլիսի տե՛ս Թիֆլիս
 Թուրքիա – 15, 20, 101

Ի

Իզդիր – 121
 Իտալիա – 20

Լ

Լոնդոն – 15-16, 19, 26, 40, 81-
 82

Խ

Խոյ – 75

Կ

Կազան – 6
 Կալեսկյան հրվանդան – 104
 Կալկաթա – 26, 82, 88, 90
 Կամիշլին – 120
 Կովկաս – 101
 Կ. Պոլիս – 14-15, 18, 107-108

Հ

Հայաստան – 14, 28, 49, 93,
108, 122

Հյուսիսային Ամերիկա – 104

Հյուսիսային ծով – 102, 104

Հնդկաստան – 14, 26, 81

Հռոմ – 100

Ղ

Ղազախ – 75

Ղարաբաղ – 75, 94

Ղրիմ – 5, 7

Ս

Մակու – 121

Մեծ Ղարաբիլիսա – 121

Մոսկվա – 5-7, 27, 39-41, 53,
62-63, 65-66, 70-71, 76, 79-
80, 82, 88, 93, 99-102, 113-
114, 117

Ն

Նոր Նախիջևան – 6-7, 26-27,
38, 62, 117

Շ

Շամախի – 34, 53

Պ

Պարսկաստան – 121

Պետերբուրգ տե՛ս Սանկտ
Պետերբուրգ

Պետրոպավլովյան ամրոց – 21-
23, 107, 109

Ռ

Ռուսաստան – 6-7, 15-18, 20-
21, 46, 86-87, 90-91, 101,
103, 105

Ռուսիա տե՛ս Ռուսաստան

Ս

Սանկտ Պետերբուրգ – 27, 41,
53, 66, 85, 95, 99, 101, 105,
111, 120

Սավոյա – 116

Սատանի հայ Շումե – 27

Սիբիր – 21, 104

Սուրմալու – 121

Վ

Վան – 15

Վենետիկ – 105, 116

Վիեննա – 105

Վրաստան – 94

Տ

Տուրին – 116

ՌԼ

ՌԼԻՆԻՆ հրվանդան – 104

Փ

Փայտակարան – 32

Փարիզ – 15, 40, 77, 82, 120

Ք

Քանաքեռ – 14

Քիչմիշ Թափա – 121

Քիչնն – 117

Օ

Օդեսա – 48, 5 0-51

Օշական – 14

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	3
ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ	5
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՊՐՊՏՈՒՄՆԵՐ	25
ՆՈՐԻՑ ՍԱՐԳԻՍ ՎԱՐՇԱՍՅԱՆՑԻ «ՆԱՄԱԿԻ» ԱՌԹԻՎ.....	32
ՀԻՆ ԱՌԵՂԾՎԱԾԻ ՎԵՐԾԱՆՄԱՆ ՆՈՐ ՓՈՐՁ	44
ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԾԱԾԿԱՆՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ.....	60
«ՀՅՈՒՄԻՍԱՓՈՒՅԼԻ» ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ	99
«ՀՅՈՒՄԻՍԱՓՈՒՅԼ» ԱՄՍԱԳՐԻ ՇԱՊԿԱՆԿԱՐԻ ՇՈՒՐՋ.....	102
«ՀՅՈՒՄԻՍԱՓՈՒՅԼԸ» ԵՎ «ՄԵՂՈՒՆ».....	107
ԲԵԳՋԱԴԵԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ	110
«ԿՈՄՍ ԷՄՍԱՆՈՒԵԼԻ» ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	115
ԹԱԴԵՎՈՍ ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ «ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԳՐԱՔՆՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ	119
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ	123
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ	127

Մարգո Մխիթարյան
Նախնականագիտության հարցեր

Марго Мхитарян
Вопросы налбандяноведения
(на армянском языке)
Ереван, 2008

Տեխ. խմբագիր՝ **Վ. Զ. Բղոյան**
 Համակարգչային շարվածքը և էջադրումը՝
Լուսինե Ահարոնյանի և Սրբուհի Սարգսյանի
 Համակարգչային ձևավորումը՝ **Աննա Աղուզունցյանի**

Ստորագրված է տպագրության՝ 17. 07. 2008 թ.:
 Չափսը՝ 60X84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
 Հրատ. 6.8 մամուլ, տպագր. 8.25 մամուլ + 4 էջ ներդիր = 7.7 պայմ. մամուլի:
 Տպաքանակ՝ 200: Պատվեր՝ 54:

Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

Երևանի պետական համալսարանի տպագրատուն, Երևան, Աբովյան 52